

U. S. GOVERNMENT PRINTING OFFICE
1964 O 352-282
10

STUDY OF THE EFFECTS OF
STRENGTHENING OF THE
STRUCTURE OF THE



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
Մ. ԶՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄ

Վ. Լ. ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. Ռ. ԹԱՄԱԶՅԱՆ
Ն. Շ. ԿԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՃԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

A 94685



ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՍ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2009

ՀՏԳ- 33 (479.25) Գ-իրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի
ԳՄԴ- 65.9(2Հ) անվան տնտեսագիտության ինստիտուտի
Հ 422 գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Խ. Մարկոսյան

Գ-րախոսներ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Ղազարյան
տնտեսագիտության թեկնածու Դ.Վ. Հարությունյան

**Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի
Թամազյան Արթուր Ռաֆիկի
Հայրապետյան Նունե Շնավոնի**

Հ 422 Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման
հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.
Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 192 էջ

Գրքում ամփոփված են հեղինակների՝ վերջին շրջանում կատարած գիտական հետազոտությունների արդյունքները՝ նվիրված արտահանման և ներմուծման, ՀՀ-ում արտահանման աճի խրախուսման, տնտեսության մասնագիտացման և հարակից մի շարք հիմնախնդիրների տեսական, մեթոդաբանական և գիտագործնական ուսումնասիրմանը և լուսաբանմանը: Հեղինակները փորձել են այս հիմնախնդիրները դիտարկել ոչ միայն դրանց տեսական հիմքերի ու համաշխարհային փորձի, այլև ՀՀ-ում առկա առանձնահատկությունների ֆոնի վրա՝ առաջարկելով բացահայտված և առկա հիմնահարցերի իրենց լուծումները:

Գ-իրքը նախատեսված է արտաքին առևտրի հիմնախնդիրներով զբաղվող գիտաշխատողների, դասախոսների, ինչպես նաև ուսանողների և ասպիրանտների լայն շրջանակի համար:

ISBN 978-5-8080-0778-9

ԳՄԴ- 65.9 (2 Հ)

© Հարությունյան Վ.Լ., Թամազյան Ա.Ռ., Հայրապետյան Ն.Շ., 2009թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ4

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏԱՅԱՆՍԱՆ ԱՃԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ7

1.1 Արտաքին տնտեսական հարաբերությունների հիմնական տեսությունները և դրանց հիմնարար դրույթները7

1.2 Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման չափորոշիչները30

1.3 Ազգային տնտեսության պաշտպանվածության գնահատման մեթոդական հիմքերը36

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՏԳՐՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ44

2.1 ՀՀ արտաքին տնտեսական գործունեության բնագավառի պետական քաղաքականության էվոլյուցիան45

2.2 Ներդրումային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում54

2.3 Արժութային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում57

2.4 Ինստիտուցիոնալ և օրենսդրական քարտեզադրումները ՀՀ-ում61

2.5 ՀՀ-ԵՄ գործընկերության և համագործակցության համաձայնագիրը և ՀՀ-ԵՄ միջև հարաբերությունները71

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՆԿԱԿԱԿԱՆ ՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԵՐԸ92

3.1 ՀՀ արտահանման ու ներմուծման դինամիկան և ԱՏԳ-զարգացման միտումները անցումային փուլի սկզբում (1993-1995թթ.)92

3.2 ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման միտումները 1996-2007թթ., ԱՏԳ- հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները.....100

ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ141
ՀԱՎԵԼՎԱԾ (Աղյուսակներ)145

ԱՌԱՋԱԲԱՆ

Գլոբալիզացիոն ժամանակակից միտումների ու գործընթացների պայմաններում թերևս հնարավոր չէ գերազնահատել արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման նշանակությունը, ինչպես նաև պետական քաղաքականության համակարգում արտաքին տնտեսական կապերին հատկացվող դերն ու կարևորությունը հատկապես բաց տնտեսական համակարգ ունեցող երկրներում: Հայաստանի Հանրապետության համար այս հանգամանքն առավել ընդգծված և արդիական է դառնում ոչ միայն համաշխարհային տնտեսության զարգացման, այլև տարածաշրջանային բարդ հիմնախնդիրների առկայության, տրանսպորտային ուղիների ու ենթակառուցվածքների անբարենպաստության և հայտնի մի շարք այլ գործոնների ազդեցությամբ:

Ժամանակ առ ժամանակ հայտնի և կանխատեսելի այս հիմնախնդիրներին ավելանում են նաև այնպիսի երևույթներ, գործընթացներ կամ նոր միտումներ, ինչպիսիք են, օրինակ՝ ՀՀ-ի համար, 2003-2008թթ. ազգային արժույթի արժևորման միտումները, 2008 թվականին սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և դրանից բխող ազդեցության տարաբնույթ դրսևորումները, շուկայական հարաբերությունների կառուցակարգային հիմքերի վերանայման անհրաժեշտության վերաբերյալ միջազգային քննարկումները և այլն, որոնք ստիպում են նոր տեսանկյուններից դիտարկել և ընդհանուր առմամբ վերաիմաստավորել արտաքին տնտեսական քաղաքականության ու միջազգային համագործակցության ռազմավարությունը, ուղղությունները և կարգավորման մեխանիզմները:

Այս առումով Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների համակարգում առանձնահատուկ նշանակություն են ստանում այն խնդիրներն ու հիմնահարցերը, որոնք

կապված են արտահանման խրախուսման, ինչպես միջազգային շուկաներում, այնպես էլ երկրի ներսում տնտեսության մասնագիտացման ուղղությունների հստակեցման, արժութային կուրսերի և տնտեսական աճի փոխազդեցության կարգավորման, ներդրումային միջավայրի հնարավորինս բարելավման և հարակից մյուս գործընթացների հետ: Դրանց համար խելամիտ և զիտականորեն հիմնավորված լուծումների մշակման նպատակով, բնականաբար, անհրաժեշտություն է առաջանում կատարել հիմնարար վերլուծություններ՝ ուսումնասիրության շրջանակներում ընդգրկելով հարցերի այն հնարավոր համալիրը, որը թույլ կտա ստանալ արտաքին տնտեսական հարաբերությունների առկա վիճակի օբյեկտիվ ու հնարավորինս ճշգրիտ պատկերը: Նման վերլուծությունների բացակայությունը կամ դրանց մակերեսային բնույթը շատ դեպքերում ոչ միայն հնարավորություն չեն տալիս տնտեսվարող սուբյեկտներին՝ ճիշտ կողմնորոշվել միջազգային առևտրի բարդ համակարգում, այլև ապակողմնորոշում են նրանց, ստեղծում անոլորտության միջավայր և բարձրացնում տնտեսական, ֆինանսական և արժութային ռիսկերի առանց այն էլ ոչ ցածր մակարդակները:

Այս գրքում հեղինակները փորձել են թեկուզ մասամբ լրացնել նշված հիմնախնդիրների հետ կապված առկա բացերից մի քանիսը՝ հասկանալով, որ բոլոր հարցերի պատասխանները հնարավոր չէ տալ մեկ գրքում կամ ուսումնասիրության շրջանակներում: Ուստի, փորձ է կատարվել առանձնացնել Հայաստանի Հանրապետության համար վերջին 10-15 տարիներին արդիական դարձած այն հիմնահարցերը, խնդիրները, գործընթացներն ու միտումները, որոնք ամենից շատ են շոշափում հանրապետության տնտեսվարողների (հատկապես՝ արտահանողների) շահերը և անմիջական ազդեցություն են ունենում նրանց առօրյա գործունեության վրա՝ դիտարկելով դրանց ոչ միայն գործնական, այլև տեսական ու մեթոդաբանական հայեցակետերը: Մասնավորապես, քննարկման առարկա են դարձել

արտաքին տնտեսական հարաբերությունների տեսական հիմքերի էվոլյուցիան, արտահանման աճի, տնտեսության մասնագիտացման և ազգային տնտեսության պաշտպանվածության գնահատման չափորոշիչներն ու մեթոդական հիմքերը, հանրապետության արտաքին տնտեսական կապերի, ներդրումային և արժույթային քաղաքականությունների զարգացման միտումները, ՀՀ միջազգային համագործակցության ֆորմատներն ու ռազմավարությունը, ինչպես նաև արտահանման և ներմուծման քանակական ու որակական բնութագրերը, դրանց զարգացման միտումները, խոչընդոտները և հաղթահարման հնարավոր տարրերակները:

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏԱՅԱԼՍԱԼ ԱՃԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱԼ ՏԵՍԱԿԱԼ ԴԻՄՔԵՐԸ

1.1 Արտաքին տնտեսական հարաբերությունների հիմնական տեսությունները և դրանց հիմնարար դրույթները

Արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորման համար ժամանակակից աշխարհում կարևոր նշանակություն ունեն արտաքին տնտեսական քաղաքականությունը, միջազգային շուկաներում երկրի մասնակցության աստիճանն ու տնտեսության մասնագիտացման ուղղությունները: Տնտեսական զարգացման ներկա փուլում, երբ Հայաստանի Հանրապետությունը թևակոխում է տնտեսական ու կառուցվածքային վերափոխումների նոր շրջան (կամ այսպես կոչված երկրորդ սերնդի բարեփոխումների փուլ), առաջին պլան է մղվում պետության արտաքին տնտեսական, այդ թվում՝ արտահանման աճի խթանման և երկրի մասնագիտացման ուղղությամբ պետական քաղաքականության կատարելագործման խնդիրը: Դեռևս 1991 թվականից ՀՀ կառավարության որդեգրած արտաքին առևտրի ազատականացման քաղաքականությունը, որը կոչված էր ուղի հարթել «բաց» տնտեսության ստեղծման, համաշխարհային տնտեսության մեջ մեր երկրի ներգրավման և ինտեգրման համար, ներկայումս, կարծում ենք, պետք է ենթարկվի որոշակի փոփոխությունների՝ կապված ոչ միայն աշխարհում ընթացող գլոբալիզացիոն միտումների, այլև ՀՀ տնտեսության զարգացման ներկա մակարդակի, վերջին 5-6 տարիներին դրա կառուցվածքային փոփոխությունների, ՀՀ ազգային արժույթի արժևորման կայուն միտումների և արտահանման քաղաքականության վրա ազդող մի շարք այլ գործոնների առկայության հետ:

Խնդրի կարևորությունն ամրագրված է նաև ամենաբարձր մակարդակով, մասնավորապես՝ 2008 թ. ապրիլին ընդունված

ՀՀ կառավարության ծրագրում, որով կառավարությունը երկրի մրցունակության բարձրացումը դիտարկում է որպես տնտեսության տևական կայուն զարգացման գրավական: Այդ նպատակով 2008-2012 թվականներին որպես ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է հռչակվել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հաշվին արտադրական կարողությունների ընդլայնումը և արտահանման խթանումը՝ աջակցելով համաշխարհային չափանիշներին համապատասխանող հայկական ընկերությունների կայացմանը:

Բնականաբար, այսպիսի գլոբալ խնդրի լուծումը պահանջում է գիտականորեն հիմնավորված ուղիների և միջոցառումների համալիրի իրականացում, որի նպատակով էլ, նախ և առաջ, անհրաժեշտ է հստակ պատկերացնել արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման տեսական հիմքերը: Վերջիններիս համակողմանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի կողմից արտաքին տնտեսական գործունեության տեսական հիմքերը բավականին լայն են և բազմազան, իսկ մյուս կողմից՝ առկա են հիմնական տեսությունների բազմաթիվ մոդիֆիկացիաներ (որոնք հաշվի են առնում կամ առավել խորությամբ են մեկնաբանում այս կամ այն տեսության առանձին հարցեր), ինչը թույլ է տալիս խմբավորել դրանք և անդրադառնալ այդ հարցերին ըստ անհրաժեշտության: Այս կապակցությամբ մեր կողմից ստորև կներկայացվեն միայն այն հիմնական տեսությունները կամ դրանց հիմնարար դրույթները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ արտահանման աճի խթանման և տնտեսության մասնագիտացման գործնական հիմնախնդիրները լուծելու ժամանակ, մասնավորապես՝ կանդիդատներ Դ.Ռ.Կարդոյի, Է.Հեկչերի և Բ.Օլինի, Փ. Մամուելսոնի, Գ.Հուֆբաուերի և Ռ.Վերնոնի, Մ.Պոզների ու Մ. Պորտերի տեսություններին:

Արտաքին տնտեսական գործունեության տեսական հիմքերի մշակման բնագավառում ամենաառաջին տեսություններից մեկն առաջ է քաշվել Դ.Ռիկարդոյի կողմից, որն իր աշխատանքի միջազգային բաժանման տեսությամբ հիմնավորեց ազատ առևտրի քաղաքականության անհրաժեշտությունը: Վերջինս, ըստ Դ. Ռիկարդոյի, կապված չէ արտաքին առևտրում որևէ տիպի սահմանափակման հետ և արտաքին տնտեսական կապերում ներգրավված երկրներին թույլ է տալիս ստանալ ամենամեծ օգուտը: Տվյալ գաղափարախոսության սկզբնաղբյուրն արտադրական ծախքերի տարբերություններն են՝ լրացված այն առավելություններով, որոնք ծագում են այն ապրանքների արտադրության մեջ երկրների մասնագիտացման ժամանակ, որոնց արտադրական ծախքերի գծով առավելություններն առանձնապես մեծ են: Այսինքն, նա առաջ քաշեց «Համեմատական առավելությունների» տեսությունը, ըստ որի՝ երկրների միջև տեղի ունեցող առևտուրը, ապրանքների ու ծառայությունների փոխանակությունները շահավետ են ցանկացած տեսանկյունից, անգամ, եթե համագործակցող երկրներից մեկը յուրաքանչյուր ապրանք արտադրում է ավելի էժան գնով՝ կապված արտադրանքների տեսականու բազմազանության հետ: Հիմնական գաղափարը, հետևյալն էր. «Երկիրը պետք է մասնագիտանա այն ապրանքների արտահանման մեջ, որոնց արտադրության մեջ նա ունի ամենամեծ բացարձակ առավելությունը (եթե նա ունի բացարձակ առավելություն այդ ապրանքների գծով) կամ ամենավոքոր բացարձակ առավելությունը (եթե նա չունի բացարձակ առավելություն նույնիսկ մեկ ապրանքի գծով)»¹:

Այսպիսով, միջազգային առևտուրը հիմնված է համեմատական առավելությունների սկզբունքի վրա, որը կարելի է բացատրել հետևյալ կերպ. արտադրանքի թողարկման ծավալը

¹ В. И. Фомичев «Международная торговля»: Учебник; 2-е изд., перераб. и доп.-М.: ИНФРА-М, 2001г., т.9:

կլինի առավելագույնը, եթե այդ արտադրանքը թողարկվի այն երկրի կողմից, որն ունի համեմատական առավելություն, այսինքն՝ որտեղ արտադրանքի միավորի վրա կատարված ծախսումներն ամենացածրն են աշխարհում, ուստի հենց համեմատական առավելությունն է որոշում երկրի տնտեսության մասնագիտացման ուղղությունը, և վերջինիս վրա էլ հիմնված է միջազգային առևտուրը:

Այս ընդհանրական գաղափարն էլ ընկած է համեմատական առավելությունների տեսության հիմքում, որի հիման վրա էլ, ըստ Դ. Ռիկարդոյի, տեղի է ունենում աշխատանքի միջազգային բաժանումը և միջազգային շուկաներում տարբեր ապրանքների և ծառայությունների մատակարարման գործում առանձին երկրների մասնագիտացումը:

Հետագայում այս դրույթներն ավելի մասնավորեցվեցին և խորացվեցին Է.Հեքշերի և Բ.Օլինի կողմից, որոնց գաղափարների համադրությունը մասնագիտական գրականության մեջ ստացել է «Հեքշեր-Օլինի մոդել» անվանումը: Մասնավորապես, ըստ Է. Հեքշերի, միջազգային փոխանակումն առհասարակ առաջանում է արտադրության գործոնների (կապիտալի, աշխատանքի, հողի) հարաբերական ավելցուկից կամ սղությունից, որոնք գտնվում են տարբեր երկրների տրամադրության տակ: Ամեն մի երկիր հնարավորություն ունի մասնագիտանալու այն արտադրության մեջ, որի համար նրա կողմից տնօրինվող արտադրության գործոնների հարաբերակցությունը համարվում է ամենաբարենպաստը: Այստեղից հետևում էր, որ միջազգային փոխանակությունը ավելցուկային գործոնների փոխաբիւնումն է հազվագյուտ գործոններով: Այսինքն. «Ապրանքները, որոնց արտադրությունը պահանջում է զգալի ծախսեր (արտադրության ավելցուկային գործոններ) կամ փոքր ծախսեր (արտադրության պակասուրդային գործոններ), արտահանվում են փոխանակման համար այն ապրանքների հետ, որոնք արտադրվում են օգտա-

գործվող արտադրության գործոնների հակառակ համամասնությամբ»²:

Սրանով Հեքշերը և Օլինը հաստատում են, որ երկրների միջև աշխատանքի, հողի կամ կապիտալի միջև հարաբերակցությունը կարող է տարբեր լինել՝ ելնելով այն հանգամանքից, որ արտադրության գործոնների արժեքները տարբեր են: Նրանք ենթադրում էին, որ այս կամ այն երկրում, եթե աշխատանքային ռեսուրսները հողի և կապիտալի համեմատությամբ ավելի շատ են, ուստի հողի և կապիտալի գներն ավելի բարձր են: Եթե աշխատանքային ռեսուրսներն ավելի սահմանափակ լինեին, ապա նրանց արժեքը, հողի և կապիտալի գնի համեմատ, ավելի բարձր կլիներ (նույնը կարելի է ասել նաև մյուս գործոնների մասին): Արտադրության այդ գործոնների արժեքը կարող է մղել երկրներին՝ զարգացնելու արտադրությունը և արտահանումն այն արտադրանքի գծով, որի արտադրության մեջ կօգտագործվեին տվյալ ավելցուկը և արտադրության ավելի էժան գործոնները:

Փ. Սամուելսոնը 1948թ. (ճշգրտելով Հեքշեր-Օլին մոդելը) ներկայացրեց այս դրույթները հետևյալ թեորեմի տեսքով. որոշակի պայմաններում, այն է՝ արտադրության գործոնի միատարրություն, արտադրական տեխնոլոգիաների համարժեքություն, կատարյալ մրցակցության պայմանների առկայություն, արտադրության գործոնների անսահմանափակ շարժունակություն և այլն, միջազգային առևտրին մասնակցող երկրում արտադրության գործոնների գները կարող են հավասարեցվել: Այս կամ այն երկրի մասնագիտացումը կապիտալատար արտադրության մեջ հանգեցնում է դեպի արտահանող ճյուղեր կապիտալի ինտենսիվ հոսքին, որի հետևանքով համեմատաբար աճում է կապիտալի պահանջարկը և, բնականաբար, աճում է կապիտալի գինը, և ընդհակառակը՝ մյուս երկրների մասնագի-

² П. Х. Линдерт «Экономка мирохозяйственных связей» Пер. с англ., М., Прогресс, 1992г., էջ 34:

տացումն աշխատատար ապրանքների արտադրության գծով պայմանավորում է աշխատանքային ռեսուրսների հոսք դեպի այդ ճյուղերը, որը հանգեցնում է աշխատուժի գնի բարձրացմանը:

Այսինքն, Փ. Սամուելսոնը հերքում էր արտադրության գործոնների ավելցուկի կամ պակասուրդի առկայության հետևանքով դրանց գների տատանումների, դրանով, իսկ նաև՝ արտաքին առևտրում համեմատական առավելություն ստանալու և մասնագիտանալու գաղափարը: Մասնավորապես, ըստ նրա. «...արտաքին առևտուրը տանում է ոչ միայն ապրանքների, այլև արտադրության գործոնների գների հավասարեցմանը՝ այնպես, որ երկու երկրներում էլ աշխատավարձի դրույքները բոլոր բանվորների համար կլինեն նույնը, ինչպես նաև վարձակալական վճարների դրույքները՝ բոլոր հողակտորների համար, անկախ գոյություն ունեցող պահանջարկի կառուցվածքից կամ արտադրության գործոններով յուրաքանչյուր երկրի ապահովվածությունից...»³:

Այսպիսով, տվյալ մոդելին համապատասխան, երկրների երկու խումբն էլ աստիճանաբար կորցնում են իրենց նախնական առավելությունները, տեղի է ունենում դրանց մակարդակների համահարթեցում, որն էլ, իր հերթին, բերում է համապատասխան փոփոխություններ արտահանման կառուցվածքում:

Նշված երկու տեսակետներին հակադրությունը, որն առաջին հայացքից գոյություն ունի, իրականում տեղի է ունենում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, քանի որ սկզբնական շրջանում, երբ որևէ երկիր ձեռք է բերում համեմատական առավելություն արտադրության այս կամ այն գործոնի գծով, իսկապես Հեքշեր-Օլինի մոդելը լիարժեք «գործում է», սակայն որոշ ժամանակ անց, երբ ավարտվում են արտադրության գործոնների շահագործման նպատակով կապիտալի միջ-

³ П. Х. Линдерг «Экономика мирохозяйственных связей»Пер. с англ., М., Прогресс, 1992г., էջ 72:

ճյուղային հոսքերը և արտադրության գործոնների գները ձեռք են բերում համեմատական կայունություն, սկսում է «գործել» Փ. Սամուելսոնի թեորեմը՝ արտաքին առևտրում գների և ապրանքափոխանակության կառուցվածքի նոր մակարդակի ֆոնին: Սա էլ նշանակում է, որ իրականում Հեքշեր-Օլիմի և Փ. Սամուելսոնի մոդելները ոչ թե միմյանց հակասում, այլ փոխադարձ լրացնում են, այն տարբերությամբ, որ առաջինը գործում է համեմատաբար կարճ, իսկ երկրորդը՝ համեմատաբար երկար ժամանակահատվածում, թեև այս հարաբերակցությունը կարող է հակառակ տեսքը ստանալ համաշխարհային շուկաներում գների կտրուկ տատանումների շրջանում:

Փ.Սամուելսոնի մոդելին փոխարինելու եկավ միջազգային առևտրի մեկ այլ՝ նոր դասական կամ «ապրանքի կենսապարբերաշրջանի տեսությունը»: Այդ տեսության հիմնադիրները (Գ. Հուֆբաուեր և Ռ. Վերնոն) եկան այն եզրակացության, որ աշխատատար ապրանքների արտադրությունը շահութաբեր է այն երկրներում, որտեղ աշխատուժի որակավորման մակարդակը համեմատաբար բարձր է, և արտադրությունը հիմնված է առաջավոր տեխնոլոգիաների վրա: «Ապրանքի կենսապարբերաշրջանի» տեսությունը հետաքրքրեց շատ տնտեսագետների, քանի որ այն ավելի իրատեսուրեն էր արտացոլում աշխատանքի միջազգային բաժանման վիճակը արդի ժամանակաշրջանում: Այս տեսության համաձայն, յուրաքանչյուր նոր արտադրանք անցնում է հետևյալ փուլերը. ներդրում, ընդլայնում, հասունացում և անկում, որը հնարավորություն է տալիս երկրներին մասնագիտանալ միևնույն ապրանքն արտադրելու և արտահանելու գործում՝ դրա տարբեր փուլերում:

Այսպիսով, «ապրանքի կենսապարբերաշրջանի» տեսությունը ոչ միայն հաշվի է առնում Գ.ՏԱ-ն, այլ նաև բացատրում է արտադրության ծախսերի տարրերի անընդհատ փոփոխվող հարաբերակցության մեխանիզմը՝ վկայակոչված միջազգային մասնագիտացման և կոոպերացման գործընթացի դինամիզմով:

Ընդ որում, այս տեսության մեջ զարգացվեց Դ.Ռիկարդոյի համեմատական ծախսերի սկզբունքը՝ միջազգային մասնագիտացման պայմաններում, ոչ միայն տարածության, այլև ժամանակի մեջ:

Միևնույն ժամանակ այս տեսությունն արդարացնում է մի երկրի տեխնոլոգիական առավելությունը մյուսների համեմատությամբ, և փորձ է արվում աշխատանքի միջազգային բաժանման կառուցվածքը պարզաբանել տեխնոլոգիական գործոններով: Տեսական այս դպրոցը համեմատական առավելությունները կապում է նորարար ֆիրմաների կամ պետությունների մենաշնորհի դիրքերի հետ, որտեղից էլ բխում է առանձին ֆիրմաների համար նոր, օպտիմալ ռազմավարությունը՝ թողարկել ոչ թե այն ապրանքը, որը համեմատաբար է ժամ է, այլ այն, որն անհրաժեշտ է բոլորին, բայց դեռևս չի թողարկվում բոլորի կողմից: Իսկ երբ տվյալ տեխնոլոգիան յուրացնում են նաև ուրիշները, հարկ է մտածել նոր ապրանքի արտադրության մասին: Ընդ որում, այս դպրոցի ներկայացուցիչները գտնում են նաև, որ հնարավորության սահմաններում պետությունը պետք է օժանդակի բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտադրությանը:

Նոր տեխնոլոգիական տեսության շարունակությունը, ըստ էության, Մ.Պոզների «Տեխնոլոգիական խզման» տեսությունն է, համաձայն որի՝ տեխնոլոգիական նորույթների հետևանքով երկրների միջև ձևավորվում է տեխնոլոգիական խզում: «Տեխնոլոգիական խզման» մոդելում ենթադրվում է, որ արտաքին առևտուրը պայմանավորված է տեխնոլոգիական փոփոխություններով, որը կարող է ի հայտ գալ առևտրային հարաբերությունների մեջ գտնվող երկրներում կամ որևէ ճյուղում: Նոր տեխնոլոգիան հնարավորություն է ստեղծում արտադրելու համեմատաբար քիչ ծախսերով, որի արդյունքում այդ ապրանքն առաջինն արտադրող երկիրը որոշակի ժամանակահատվածում լրացուցիչ շահույթ է ստանում: Դա շարունակվում է այնքան ժամանակ, մինչև մյուս երկրները «արտատպում են» նորամուծությունը և իրենք

նույնպես սկսում են արտադրել այն: Բայց, երբ տվյալ տեխնոլոգիան յուրացնում են նաև մյուս երկրները, անհրաժեշտություն է առաջանում նորից «թարմացնել» արտադրությունն ու տեխնոլոգիաները, և այդպես շարունակ:

Ժամանակակից հեղինակների աշխատություններում մեծ ուշադրություն է հատկացվում միջազգային առևտրում առանձին երկրների ֆիրմաների մասնակցությանը: Ամերիկացի տնտեսագետ Մ.Պորտերը 1991 թվականին առաջ քաշեց «Երկրների մրցակցային առավելությունների» տեսությունը, համաձայն որի. «Միջազգային շուկայում մրցակցում են ֆիրմաները, այլ ոչ թե երկրները: Անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես է ֆիրման ստեղծում և պահպանում մրցակցային առավելությունը, որպեսզի հասկանանք երկրի դերը այդ գործընթացում»⁴: Նրա կարծիքով, մրցակցության հիմնական միավորը ճյուղն է, այսինքն՝ միևնույն ապրանքների թողարկող մրցակիցների խումբը, իսկ արտաքին շուկայում հաջողությունը կախված է ճիշտ ընտրված մրցակցային ռազմավարությունից: Դյուդում ֆիրմայի ռազմավարության ընտրության վրա, ըստ Մ.Պորտերի, ազդում են երկու հիմնական գործոններ.

- ճյուղի կառուցվածքը, այսինքն՝ մրցակցության առանձնահատկությունները (նոր մրցակցի, փոխադարձ փոխարինելի ապրանքի կամ ծառայության երևան գալը, մատակարարների ու գնորդների հետ սակարկելու ունակությունը և այլն).
- ճյուղում ֆիրմայի զբաղեցրած դիրքը (որը կանխորոշվում է մրցակցային առավելություններով՝ մրցակցային ոլորտի բնույթով, ավելի ցածր ծախսերով, ապրանքների տարբերակմամբ և այլն):

«Ինչու՞ է երկիրը հասնում միջազգային հաջողության այս կամ այն ճյուղում: Այս հարցի պատասխանը երկրի չորս հատ-

⁴ М. Портер «Международная конкуренция» М.: Междунар. Отношения, 1993г., էջ 51:

կությունների մեջ է, որոնք ունեն ընդհանուր բնույթ և ձևավորում են այն միջավայրը, որտեղ մրցակցում են տեղական ֆիրմաները: Այդ միջավայրը կարող է նպաստել կամ էլ խոչընդոտել մրցակցային առավելությունների ստեղծմանը: Ահա այդ չորս հատկությունները.

1. գործոնային պայմաններ,
2. պահանջարկի պայմաններ,
3. հարակից և օժանդակող ճյուղեր,
4. ֆիրմայի ռազմավարությունը, նրա կառուցվածքը և մրցակիցները...»⁵:

Ամփոփելով միջազգային առևտրի տեսությունների ներկայացված մոտեցումները, կարելի է նշել, որ ազատ առևտրի և հովանավորչության սկզբունքների տարանջատումը նկատելի է դասական տեսությունների շրջանակներում: Մինչդեռ ժամանակակից տեսություններում արտաքին առևտրային քաղաքականության սկզբունքները զուգակցվում են, որն առավել նկատելի է նոր տեխնոլոգիական ուղղությունների մոդելում. այստեղ հարկավոր է նաև պետության միջամտությունն ու կարգավորումը և աջակցությունը ազատ առևտրի պայմաններում:

Դասական տեսության պաշտպանների և քննադատողների միջև բոլոր վիճաբանությունները վերջին հաշվով հանգում են ազատ առևտրի պաշտպանների և հովանավորչության կողմնակիցների բանավեճին: Պատմականորեն ձևավորված արտաքին առևտրի քաղաքականության ձևերը՝ հովանավորչությունը և ազատ առևտուրը, գործում են կողք կողքի, և դրանցից որևէ մեկի գերակայության ընդունումը կախված է տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակից, միջազգային համագործակցության մեջ երկրների հետ հարաբերությունների բնույթից, պատմական զարգացման տվյալ փուլում երկրի առջև դրված

⁵ Նշվ. աշխ., 1993ր., էջ 92:

խնդիրներից, ինչպես նաև տնտեսական զարգացման կոնկրետ պայմաններից:

Տնտեսագիտության տեսության մեջ գոյություն ունեն մի շարք փաստարկներ, որոնք պաշտպանում են տնտեսական քաղաքականության բնագավառում հովանավորչության իրականացումը, որոնք հանգում են հետևյալին.

1. Պետության տնտեսական անվտանգության ապահովումը: Այս փաստարկի հեղինակները պնդում են, որ հովանավորչությունը թույլ է տալիս երկրում զարգացնել և պահպանել այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, մետաղագործությունը և քիմիական արդյունաբերության որոշ ճյուղեր: Սրանց զարգացումը հնարավորություն է տալիս ռազմական իրադրություններում պահպանել տվյալ երկրի անկախությունը, ինչպես նաև գոյատևելու հնարավորությունը: Այս փաստարկը բավականին ծանրակշիռ է հատկապես գյուղատնտեսության առումով:

2. Կառուցվածքային տեսակետից հովանավորչությունն անհրաժեշտ է, որպեսզի թույլ չտա նոր ի հայտ եկած արդյունաբերության ճյուղերի «մահը», որոնք չեն կարող դիմանալ միջազգային մրցակցությանը: Շուկաների այսպիսի սահմանազատումը կարող է նպաստել նոր ներդրումների ներգրավմանը և կոծանդակի ազգային արդյունաբերության զարգացմանը:

3. Իրավիճակային տեսակետից հովանավորչությունն օգտակար է նրանով, որ կարող է բարձրացնել զբաղվածության մակարդակը:

4. Այն կնպաստի բավարար կենսամակարդակի ապահովմանը, թույլ չի տա ապրանքների ներհոսքը ցածր կենսամակարդակ ունեցող երկրներից դեպի բարձր ցուցանիշներ ունեցող երկրներ:

5. Կապիտալի ներհոսքի մեծացման հնարավորությունը (որը հիմնավորել է Ռիխարդ Շուլլերը): Այս մասին նշել է դեռևս Ա. Սմիթը՝ այնդեղով, որ հովանավորչությունը տանում է կապիտալի

A 94885

ներհոսքի աճին: Իրոք, ցանկացած երկիր, որը կիրառում է հովանավորչություն, կարող է հույս ունենալ, որ օտարերկրյա ֆիրմաների ճանապարհին դրված մաքսատուրքերը կստիպեն նրանց ստեղծելու իրենց ձեռնարկությունները տվյալ երկրում, եթե, իհարկե, դրա համար ստեղծված են անհրաժեշտ մյուս նախադրյալները:

Ազատ առևտրի կողմնակիցները քննադատում են հովանավորչությունը: Նրանց պնդմամբ, երկարաժամկետ կտրվածքով հովանավորչությունը վնասում է ազգային տնտեսության զարգացմանը, քանի որ այն թուլացնում է մրցակցությունը, երկրների միջև տնտեսական կապերը, որի պատճառով էլ ավելի են խորանում տնտեսական զարգացման մակարդակների միջև անհավասարությունները:

Ազատ առևտուրն ունի մի շարք առավելություններ, որոնք հնարավորություն են տալիս զարգացնել երկրների տնտեսությունները, ինչպես նաև բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Ազատ առևտուրը նպաստում է միջազգային մասնագիտացմանը, մրցակցության զարգացմանը, շուկայի ընդլայնմանը, ինչպես նաև զանգվածային արտադրության կազմակերպմանը, որն օգտակար է առաջին հերթին սպառողների տեսանկյունից: Այդուհանդերձ, բացի եղած առավելություններից, ազատ առևտուրն ունի նաև ստվերոտ կողմեր. այն կարող է նպաստել տնտեսական անհավասարության խորացմանը՝ թույլ զարգացած և զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների միջև:

Ազատ առևտրի ճանապարհին ներկայումս գոյություն ունեն մի շարք սահմանափակումներ, որոնցից հիմնականներն են.

1. Մաքսատուրքերը և ներմուծվող ապրանքների նկատմամբ ակցիզային հարկը, որոնց կիրառման նպատակը և՛ եկամուտների ստացումն է, և՛ ազգային արտադրության հովանավորչությունը: Եկամուտների ստացման նպատակով սահմանված հարկերը, թեև շատ մեծ չեն, սակայն էապես նպաստում են բյուջեի եկամուտների ավելացմանը: Հովանավորչական հար-

կերը նույնպես շատ մեծ չեն, սակայն դրանք նպաստակ ունեն հովանավորելու սեփական արտադրությունը և կիրառվում են օտարերկրյա արտադրողների համեմատությամբ հայրենական ձեռնարկությունների մրցակցային հնարավորությունները բարձրացնելու նպատակով:

2. Արտահանման կամ ներմուծման քվոտաները, այսինքն՝ ապրանքների առավելագույն այն չափը, որը ներմուծող (արտահանող) երկիրը թույլատրում է ներկրել ներքին շուկա (արտահանել ներքին շուկայից):

3. Ոչ սակագնային սահմանափակումները. սրանք վերջին տարիներին ամենալայն տարածում ստացած սահմանափակումներն են, որոնք վերաբերում են ապրանքների որակական ստանդարտներին, դրանց անվտանգության ապահովմանը և այլն:

4. «Կամավոր» սահմանափակումներ, որոնք արտահանողների կողմից իրականացվող ինքնակամ սահմանափակումներ են: Դրանց նպատակը հիմնականում ներմուծող երկրների կողմից ավելի խիստ մաքսատուրքերից և արտահանման քվոտաներից խուսափելն է:

Ներկայումս Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործունեության զլխավոր միտումներից մեկը հովանավորչական պատմեշների վերանայումն է և անցումն առևտրի ազատական քաղաքականությանը: Այս քաղաքականությունը պահանջում է բոլոր երկրների ջանքերի կենտրոնացում՝ ներքին շուկայի կարգավորման և արտաքին տնտեսական կապերի միջազգայնացման ուղղությամբ, առավել ևս, որ արտաքին տնտեսական գործունեության ազատականացման գործընթացների վրա բավականին մեծ ազդեցություն են թողնում միջազգային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունները:

Ինչպես արդեն նշեցինք, «համեմատական առավելությունների» տեսության համաձայն (Հեքշեր-Օլինի տեսություն), ար-

տաղրության հիմնական գործոններ են համարվում հողը, կապիտալը (այդ թվում՝ նաև տեխնոլոգիան) և աշխատանքը: Եթե Հեկշեր-Օլինի եզրակացությունները ճշմարիտ են, ապա արտադրության գործոնների անհամաչափ տեղաբաշխումը պետք է համապատասխանաբար արտացոլվի արտաքին առևտրի կառուցվածքում: Օրինակ, Հայաստանը պետք է արտահանի այն ապրանքատեսակները, որոնց արտադրության համար բավականին ինտենսիվ կերպով օգտագործվում են ավելցուկային գործոնները, և ընդհակառակը՝ պետք է ներմուծի այն ապրանքատեսակները, որոնց արտադրությունը պահանջում է Հայաստանի համար պակասուրդային գործոնների օգտագործում: Ուստի, մեր հանրապետության արտահանման-ներմուծման կառուցվածքի վերլուծության նպատակով, հիմք ընդունելով նշված մոդելը, անհրաժեշտ է առաջին հերթին խմբավորել արտահանվող և ներմուծվող ապրանքները՝ այդ ապրանքների արտադրության համար առավել ինտենսիվ օգտագործվող արտադրության գործոնների տեսանկյունից:

Այս կապակցությամբ նախ նշենք, որ արևմտյան մասնագետները, մշակելով արտահանման քաղաքականությունը, առաջարկում են ապրանքախմբերի հետևյալ դասակարգումը.

- հումքատար ապրանքներ («ապրանքներ ըստ Ռ-իկարդի»)», որոնց շարքին դասվում են հումքը, գյուղատնտեսական արտադրանքը, մեծ քանակությամբ հայրենական արտադրության հումք պարունակող ապրանքները,
- աշխատատար ապրանքներ («ապրանքներ ըստ Հեքշեր-Օլինի»), որոնք հիմնականում արտահանվում են աշխատանքի գործոնով հարուստ երկրների կողմից,
- կապիտալատար ապրանքներ («ապրանքներ ըստ Հեքշեր-Օլինի»), որոնց արտադրության ժամանակ համեմատական առավելություն ունեն այն երկրները, որոնք հարուստ են կապիտալով,

- գիտատար ապրանքներ («ապրանքներ ըստ Շումպետերի»), որոնց արտադրության ժամանակ հաշվի են առնվում ոչ միայն ժամանակի և կապիտալի գործոնը, այլ նաև «բարոյական կապիտալը», այսինքն՝ ինտելեկտուալ ներուժը:

Նկատի ունենալով վերոհիշյալը՝ ապրանքները բաժանենք չորս հիմնական խմբի.

1. տեխնոլոգիատար ապրանքներ, որոնք բավականին ֆունդատար են և բարձրորակ տեխնոլոգիաներ են պահանջում (այս խմբի մեջ կընդգրկենք մեքենաները, սարքավորումները, սարքերը և գործիքները, բիմիական ճյուղերի արտադրանքը և այլն),

2. աշխատատար ապրանքներ, որոնք արտադրությունից պահանջում են աշխատանքային մեծ ծախսումներ (այս խմբի մեջ են մտնում տեքստիլ և կաշվեմշակող ճյուղերի արտադրանքը, հագուստը, կոշիկեղենը, հուշանվերները և այլն),

3. հումք, որն օգտագործվում է արտադրության համար, և որի հիմնական գործոնը հողը և ընդերքն են (այս խմբին են դասվում սև և գունավոր մետաղների ձուլումը, վառելիքաէներգետիկ պաշարները, հանքային հումքը, գյուղատնտեսական արտադրանքը և այլն),

4. ստանդարտ ապրանքատեսակներ, որոնց արտադրության ընթացքում արտադրության գործոններն օգտագործում են գրեթե հավասար չափով (այս խմբի մեջ են մտնում սննդի վերամշակման ճյուղերը, շինանյութերի, փայտամշակման ճյուղերի արտադրանքը և այլն):

Համեմատական առավելությունը գնահատվում է յուրաքանչյուր ապրանքախմբի կտրվածքով, արտահանման և ներմուծման հարաբերակցությամբ: Ընդ որում, հանրապետության համեմատական առավելությունն արտադրության այնպիսի ավելցուկային գործոնների հարցում, ինչպիսիք են աշխատանքը և մասամբ հիմնական ֆոնդերն ու տեխնոլոգիան (կապիտալը), նախկինում օգտագործվել է այնքան հմտորեն, որ արդյունքում

հանրապետությունը բավականին մրցունակ էր համարվում, չնայած հումքային պաշարների ծայրահեղ պակասուրդին:

Պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ 90-ական թվականների սկզբին տեխնոլոգիատար ապրանքները հիմնականում ներկայացվում էին քիմիական և ծանր մեքենաշինության ճյուղերի արտադրանքով, այսինքն՝ հիմնականում ֆոնդատար արտադրանքով: Աշխատատար ապրանքները ներառում էին հիմնականում միջին և բարձր որակավորում ունեցող աշխատանքը, թեև դրանց համեմատական առավելությունների օգտագործման մակարդակը, նախկինի համեմատությամբ, ներկայումս բավականին իջել է:

Հանրապետությունն ներկայումս ներմուծվում են հիմնականում անհատական սպառման ապրանքներ կամ այն արտադրանքը և հումքը, որն օգտագործվում է ավելցուկային գործունեի օգտագործման արդյունավետության ցածր գործակից ունեցող ճյուղերում:

Առաջ անցնելով կարելի է նշել նաև այն միտումը, որ այն ապրանքատեսակները, որոնք նախկինում եղել են հայրենական արտադրության արտադրանք (օրինակ՝ հրուշակեղեն, մսամթերք, ծխախոտ, կահույք, կաթնամթերք, օճառ, գինիներ, կոնյակ, բնական հյութեր, պահածոներ և այլն), այսօր մեծ քանակությամբ ներմուծվում են: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ արտաքին առևտրի զարգացման նպատակային կարգավորման մակարդակը դեռևս բավականին ցածր է, որն էլ բացասաբար է ազդում սպառողական ներքին շուկայի վրա:

Հարաբերական առավելությունների տեսության առումով Հայաստանի տնտեսության կառուցվածքը մինչև շուկայական հարաբերություններին անցումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. հանրապետության ամենախոշոր ձեռնարկությունները կենտրոնացված են եղել քիմիական, մեքենաշինական և թեթև արդյունաբերության բնագավառներում: Սակայն, եթե քիմիական, մեքենաշինական ճյուղերը ներկայացված էին հիմնակա-

նում հսկայական մենաշնորհներով, ապա թեթև արդյունաբերության ենթաճյուղերում գործում էին ինչպես խոշոր, այնպես էլ տրիկոտաժ ու հագուստ արտադրող փոքր և միջին ձեռնարկություններ: Հետևաբար, արտադրության մասշտաբի արդյունքը ՀՀ-ում ավելի քիչ էր ազդում արտահանման-ներմուծման կառուցվածքի, քան արտադրության գործոնների տնօրինման վրա, ինչը պայմանավորված էր նաև երաշխավորված (իսկ ըստ էության՝ պարտադրված) մատակարարումներով և սպառմամբ:

Բացի այդ, Հայաստանում արտադրության կենտրոնացման և մասնագիտացման քաղաքականությունը հիմնվում է հենց արտադրության ավելցուկային գործոնների, մասնավորապես՝ որակյալ աշխատուժի, ինչպես նաև արտադրության առանձին բնագավառում որոշակի ավանդույթների առկայության վրա: Այլ կերպ ասած, առաջնային է համեմատական առավելությամբ ճշտված գործոնի ընտրությունը, իսկ ընտրված գործոնի հիմքի վրա խոշոր արտադրական միավորների կազմակերպումը երկրորդական է:

ՀՀ-ի համար, որպես փոքր տարածք ունեցող պետության, որը բնութագրվում է հողային պաշարների սակավությամբ (նաև հումքային և այլ պաշարների սակավությամբ և ներքին շուկայի նեղ շրջանակներով), զանգվածային արտադրության պայմաններում նկատվում է արտադրական և անհատական սպառման ծավալի ցածր մակարդակ, և կարևոր նշանակություն է ձեռք բերում արտաքին տնտեսական ակտիվ գործունեությունը: Մյաժամանակ, անհրաժեշտ է պահպանել ազգային ավանդույթները և սովորույթները՝ կարևոր ճյուղերի գործունեության մեջ, կամ այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել առևտրի ազատականացման և հովանավորչության միջև:

Նշենք նաև, որ խորհրդային ժամանակաշրջանում, երբ արտաքին տնտեսական կապերը բավականին կարգավորված էին, Հայաստանն արտահանում էր աշխատատար և տեխնոլոգիատար ապրանքներ և ներմուծում էր հումք ու ստանդարտ

ապրանքատեսակներ: Դա հիմնականում պայմանավորված էր արտադրության տարբեր գործոններով ապահովվածության աստիճանով, և առաջ անցնելով փաստենք, որ ինչպես ցույց է տալիս ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքի վերլուծությունը, ներկայումս հիմնականում պահպանվում է նշված հարաբերակցությունները, հանրապետությունում արտադրության ավելցուկային գործոններից են բարձր որակավորում ունեցող աշխատուժը և մասամբ՝ տեխնոլոգիաները, իսկ առավել պակասուրդային են հումքը, հողը և կապիտալը:

Շուկայական հարաբերությունների անցումային ժամանակաշրջանում (1991թ. սկսած) արտադրության ավելցուկային գործոնների հաջող համակցման կորստի և տեխնոլոգիատար ճյուղերի լրիվ կամ մասնակի քայքայման հետևանքով Հայաստանի վիճակն արտաքին առևտրի ասպարեզում զգալիորեն վատթարացավ: Արտադրության պակասուրդային գործոնների ներմուծումը, ըստ պաշտոնական վիճակագրության, կրկնակի գերազանցում էր ավելցուկային գործոնների արտահանմանը: Ներկայումս համեմատաբար մրցունակ են թեթև և սննդի արդյունաբերության ապրանքները, որոնց արտադրությունը հիմնականում իրականացվում է միջին և փոքր ձեռնարկությունների միջոցով: Մեքենաշինության արտադրանքը թողարկվում է մանր և միջին ձեռնարկություններում: Դա խոսում է այն մասին, որ հանրապետության արտաքին առևտրային հաշվեկշռի բարելավումը կախված չէ (կամ քիչ չափով է կախված) արտադրության ծավալի աճից՝ խոշոր ձեռնարկություններում դրա կենտրոնացման ճանապարհով: Ուստի, անհրաժեշտ է հրաժարվել «չարտահանել այն, ինչ մեզ է անհրաժեշտ» մոտեցումից, հաշվի առնելով Դ.Ռ.իկարդոյի «Հարաբերական առավելության» օրենքը: Ցանկացած երկիր ունի հարաբերական առավելություն որևէ ապրանքատեսակի արտադրության մեջ և շահում է՝ փոխանակելով այն այլ ապրանքների հետ:

Ամփոփելով արտաքին տնտեսական գործունեության տեսական մոտեցումները կարծում ենք, կարելի է կատարել ևս


մեկ կարևոր եզրահանգում. ինչպես ցույց են տալիս ներկայացված բոլոր տեսությունների և հատկապես Մ.Պորտերի առաջ քաշած հիմնադրույթները, արտաքին առևտրի զլոբալ մոտեցումները սերտորեն կապված են տվյալ ժամանակահատվածում գործող մրցակցության մոդելով: Ավելին, մեր կարծիքով, հենց մրցակցության մոդելն է որոշակիորեն կամ մասամբ ուղղորդում արտաքին տնտեսական գործունեության հիմնական վեկտորը և նպաստում դրա հիմնական պայմանների ձևավորմանը: Այսպես, եթե Դ.Ռ.իկարդոյի մոտեցումների վրա մեծ ազդեցություն են ունեցել ազատ մրցակցության գաղափարները, ապա Է. Հեքշերի, Բ.Օլինի և Փ.Սամուելսոնի մոտեցումների վրա՝ ոչ կատարյալ մրցակցության մոդելի, իսկ Գ.Հուֆբաուերի, Ռ.Վերնոնի, Մ.Պոզների և Մ.Պորտերի մոտեցումների վրա՝ մենաշնորհային մրցակցության մոդելի հիմնական պայմանները և սկզբունքները: Սա նշանակում է, որ ինչպես արտահանման խթանման և արտաքին առևտրում երկրի մասնագիտացման, այնպես էլ դրանց պետական կարգավորման ոլորտներում համապատասխան քաղաքականության մշակման ժամանակ անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել երկրում մրցակցային միջավայրի վիճակը, դրա զարգացման միտումները և այն ազդեցությունը, որն ունի մրցակցությունը տվյալ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեության և հատկապես արտահանման գործընթացների վրա:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանին անհրաժեշտ է գտնել իր ուրույն տեղը համաշխարհային շուկայում ու ձևավորել արտադրական և ոչ արտադրական շահավետ մասնագիտացման ուղղություններ: Բայց քանի որ համաշխարհային շուկան փոխկապակցված և բավականին «հագեցած» համակարգ է, ուստի Հայաստանը չի կարող ազատ ընտրել իր դիրքը կամ այդ համակարգը համապատասխանեցնել իր տնտեսության կառուցվածքին: Ժամանակակից համաշխարհային շուկայում որևէ հատվածի գրավումը ներկայումս պահանջում է արագ և կտրուկ գործողություններ, որոնք պետք է իրենց

արտացոլումը գտնեն գիտականորեն մշակված և հիմնավոր արտաքին տնտեսական (այդ թվում՝ արտաքին առևտրի) քաղաքականության մեջ:

Բնականաբար, արտաքին տնտեսական գործունեության զարգացման և երկրի մասնագիտացման խորացման ուղղությամբ քայլերի իրականացումն անհնարին է պատկերացնել առանց պետության ակտիվ և նպատակամետ մասնակցության, որի հետ կապված, անհրաժեշտ ենք համարում հակիրճ ներկայացնել նաև դրա տեսական հիմքերը⁶:

Մասնավորապես, արտաքին տնտեսական գործունեության կարգավորման հիմնական լծակները (գործիքները) կարելի է բաժանել երկու՝ ուղղակի և անուղղակի խմբերի, ըստ արտաքին տնտեսական գործունեության (ԱՏԳ) վրա դրանց ունեցած ազդեցության ձևի (տե՛ս գծանկար 1-ը):



Գծանկար 1. ԱՏԳ պետական կարգավորման գործիքները

⁶ Արտաքին տնտեսական գործունեության պետական կարգավորման և համապատասխան քաղաքականության բնութագիրը կներկայացվի 2-րդ գլխում:

Ուղղակի գործիքներին են վերաբերում գլխավորապես կարգավորման զուտ վարչական միջոցները, օրինակ՝ արտասահմանից ներմուծվող ապրանքների նկատմամբ քանակական սահմանափակումների կիրառումը, արտարժույթի արտահանման հայտարարագրումը կամ քվոտավորումը, ներմուծման արտոնագրումը և այլն: Անուղղակի կարգավորումը հիմնվում է այն գործիքների վրա, որոնք արտաքին տնտեսական գործարքների ուղղությունների և ծավալների վրա կարող են ունենալ խթանող կամ սահմանափակող ազդեցություն՝ ոչ թե անմիջականորեն, այլ ծախսերի և շահույթի չափերի կարգավորման ճանապարհով (այս երկու չափանիշների՝ զուտ վարչական ազդեցության և ծախսերի ու շահույթի անուղղակի կարգավորման հիման վրա էլ կատարվել է ներկայացված դասակարգումը):

Արտոնագրումն արտաքին տնտեսական գործունեության կարգավորման և պետության վերահսկողության ուղղակի վարչական մեթոդներից է և կիրառվում է հիմնականում արտաքին առևտրային գործունեության կազմակերպման, ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և ներմուծման հաշվեկշռվածության ապահովման նպատակով: Արտոնագրման համակարգը ենթադրում է, որ ներմուծողը կամ արտահանողը պետք է ունենա համապատասխան թույլտվություն, ինչը հնարավորություն է տալիս պետությանը՝ սահմանափակել արտահանման և ներմուծման չափերը, ինչպես նաև ապահովել երկրի տնտեսական անվտանգությունը, սպառողների ու արտադրողների շահերի պաշտպանությունը և այլն:

Քվոտավորումն արտաքին առևտրի կարգավորումն է քանակական որոշակի սահմանափակումների՝ քվոտաների օգնությամբ: Արտահանման քվոտավորումը սահմանվում է հիմնականում այն ապրանքների նկատմամբ, որոնք պակասհարգային են տեղական շուկայում: Քվոտաները սահմանվում են միջազգային համաձայնագրերի հիման վրա, սահմանելով այդ համա-

ձայնագրի մասնակից յուրաքանչյուր երկրի մասնաբաժինն ապրանքների արտադրության կամ արտահանման մեջ: Չարգացած երկրներում ավելի հաճախ կիրառվում է ներմուծման քվոտավորումը, որը կոչված է պաշտպանելու ազգային արտադրողների շահերը, նպաստելու մատակարարման, վճարային հաշվեկշռի հաշվեկշռվածության, ներքին շուկայում առաջարկի և պահանջարկի կարգավորմանը:

Արտաքին առևտրի կարգավորման կարևոր միջոցներից են ոչ սակագնային գործիքները, որոնց դերը՝ ներմուծման և արտահանման կառուցվածքի, ծավալի և աշխարհագրական ուղղվածության վրա ազդեցություն ունենալու իմաստով, ավելի մեծ է, քան մաքսային սակագներիինը: Դրանք, որպես կանոն, բաժանվում են չորս խմբի (որն ընդունվել է նաև ՄԱԿ-ի կողմից):

1) Արտաքին առևտրային միջոցներ, որոնք ուղղված են ներմուծման ուղղակի սահմանափակմանը՝ հայրենական արտադրողի շահերի պաշտպանության նպատակով, որոնցից ամենատարածվածը արտոնագրումն է:

2) Ոչ սակագնային միջոցներ, որոնք ուղղված են արտաքին ապրանքաշրջանառության կարգավորմանը և ավելի շատ վերաբերում են դրա վարչական ընթացակարգերին (տեխնիկական ստանդարտներ և նորմեր, սանիտարական, փաթեթավորման և մակնիշավորման չափանիշներ և այլն): Վերջին տասնամյակում մեծ տարածում է ստացել այս ուղղությամբ համաձայնագրերի կնքումը, արտահանման «կամավոր» սահմանափակումը և ներմուծման նվազագույն գների սահմանումը, որը կատարվում է զարգացած պետությունների կողմից՝ պարտադրելով այն տնտեսապես թույլ և հունք արտահանող երկրներին:

3) Ներմուծման կարգավորման ոչ սակագնային ֆինանսական այնպիսի միջոցներ, որոնք սահմանափակում են ներմուծումը, մասնավորապես՝ ներմուծման հարկերը և ներմուծման դեպոզիտները: Կարգավորման ոչ սակագնային գործիքների համակարգում հատուկ տեղ են զբաղում արժութային սահմա-

նափակումները, որոնք հանդես են գալիս ոչ միայն որպես արտաքին առևտրի, այլ նաև ամբողջ արտաքին տնտեսական գործունեությունը կարգավորող գործոն:

4) Այլ միջոցներ, որոնք անմիջապես չեն ուղղված ներմուծման սահմանափակմանը կամ արտահանման խթանմանը, սակայն դրանց գործողությունը բերում է հենց այդ արդյունքին:

Ներմուծումը կարգավորող վարչական միջոցների մեջ հատուկ տեղ է զբաղեցնում ներմուծվող արտադրանքի՝ միջազգային և ազգային ստանդարտներին համապատասխանության ստուգումը:

Ստանդարտացման համակարգի զարգացումն անմիջականորեն առնչվում է արտադրանքի որակի կառավարման հետ, քանի որ ստանդարտների և նորմատիվ-գիտատեխնիկական այլ փաստաթղթերի պահանջները շատ դեպքերում կոչված են բարձրացնելու ապրանքների տեխնիկական և որակական մակարդակը, ինչպես նաև արտադրանքի սպառողական հատկությունները: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ շուկայական տնտեսության պայմաններում, որն առանց մրցակցության անհնար է պատկերացնել, ի հայտ են գալիս գործոններ, որոնք արտադրանքի որակը դարձնում են արտադրողների գոյատևման նախապայման և նրանց տնտեսական գործունեության արդյունավետության չափանիշ:

Որակի կառավարումն իրականացվում է ֆիրմայի (ձեռնարկության) մակարդակով, բայց այստեղ մեծ դեր է կատարում պետությունը: Պետական համապատասխան մարմինների կողմից մշակվում, հրապարակվում և օգտագործվում են ստանդարտներ, որոնք կիրառվում են հոգուտ սպառողների՝ միաժամանակ նպաստելով արտադրողների միջև մրցակցության զարգացմանը:

1.2 Արտահամման աճի և տնտեսության մասնագիտացման չափորոշիչները

Միջազգային տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող գործընթացների առավել համակողմանի պարզաբանման նպատակով համաշխարհային տնտեսությունը բաժանվում է մի քանի ենթահամակարգերի՝ ելնելով հետևյալ չափանիշներից.

1. տնտեսական զարգացման մակարդակը բնութագրվում է բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալով,
2. տնտեսության սոցիալական կառուցվածքը ցույց է տալիս սեփականության իրացման ձևերը և բնութագիլը, ինչպես նաև դրա հետ կապված ճյուղային կառուցվածքը,
3. տնտեսական աճի տիպն արտահայտում է ապրանքների և ծառայությունների քանակական և որակական փոփոխություններն առանձին երկրների տնտեսական զարգացման ինտենսիվ և էքստենսիվ ուղիների պայմաններում,
4. արտաքին տնտեսական կապերի մակարդակը և բնույթը ցույց են տալիս տվյալ երկրի մասնակցության աստիճանը աշխատանքի միջազգային բաժանմանը,
5. տնտեսական ներուժի մեծությունը, որը կախված է ոչ միայն տնտեսական զարգացման մակարդակից, այլ նաև արտադրողական ուժերից, բնակչության թվաքանակից, տարածքի չափերից, բնական ռեսուրսների առկայությունից և այլն:

Տնտեսության միջազգային մասնագիտացումը կոնկրետ երկրի մասնագիտացումն է որոշակի ապրանքների և ծառայությունների այնպիսի ծավալներով արտադրության գծով, որը գերազանցում է ներքին պահանջմունքները և ենթակա է իրացման միջազգային շուկայում: Այսինքն, այն երկրների միջև աշխատանքի բաժանման ձև է, որի պայմաններում երկարաժամկետ

հատվածում տեղի է ունենում միանման արտադրանքի արտադրության կենտրոնացում երկրի (երկրների խմբի) շրջանակում՝ տեխնիկական զինվածության բարձր մակարդակով և օպտիմալ չափերով օժտված ձեռնարկությունների ստեղծման, ինքնարժեքի նվազեցման և որակի բարձրացման նպատակով (թեև հարկ է նշել, որ արտադրության ոչ բոլոր տեսակներն են, որպես կանոն, հավասար չափով մասնակցում մասնագիտացմանը): Արդյունքում, աճում է ազգային տնտեսությունների փոխկախվածությունը և փոխըացվածությունը:

Արտադրողական ուժերի զարգացումը հանգեցրել է աշխատանքի հասարակական բաժանման երեք տիպերի տարանջատման.

- ընդհանուր՝ հասարակական արտադրության խոշոր ոլորտների միջև (արտադրական և ոչ արտադրական ոլորտներ. արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, առևտուր և այլն),
- մասնակի՝ խոշոր ճյուղերի, ենթաճյուղերի և դրանց ձեռնարկությունների ներսում (օրինակ՝ արդյունաբերության ճյուղերի միջև, ավտոմոբիլաշինության ճյուղի ներսում բեռնատար և մարդատար ավտոմեքենաների արտադրության միջև և այլն),
- ներքին՝ ձեռնարկությունների ներսում:

Մասնագիտանալով որոշակի տեսակի ապրանքների արտադրության ուղղությամբ, որոնց արտադրության համար տվյալ երկիրն ունի մրցակցային առավելություններ, նա միաժամանակ նախընտրում է ներմուծել այնպիսի ապրանքներ, որոնք հանդիսանում են այլ երկրների մասնագիտացման առարկա: Արդյունքում, աշխատանքի միջազգային բաժանումը հանդես է գալիս որպես համաշխարհային տնտեսության կազմակերպման ձև, որի պայմաններում տարբեր երկրների տնտեսվարող սուբյեկտները մասնագիտանում են որոշակի ապրանքների և ծառա-

յությունների արտադրության, իսկ այնուհետև նաև փոխանակության մեջ:

Մասնագիտացումը, դրսևորվելով ինչպես միջճյուղային, այնպես էլ ներճյուղային մակարդակում, կարող է իրականացվել տարերային կերպով կամ էլ համաձայնեցված, կոորդինացված գործընթացի տեսքով:

Տարբերակվում են.

1. տարածքային միջազգային մասնագիտացում, որն արտահայտում է երկրների, դրանց ինտեգրացիոն և ռեգիոնալ միավորումների մասնագիտացումը,
2. երկրների արտադրական մասնագիտացում, որն էլ, իր հերթին, տարանջատվում է հետևյալ տեսակների՝
 - առարկայական տարանջատում՝ պատրաստի արտադրանքի արտադրություն,
 - դետալային՝ առարկաների առանձին մասերի կամ բաղադրիչների արտադրություն,
 - տեխնոլոգիական կամ փուլային մասնագիտացում:

Առարկայական մասնագիտացումը ժամանակակից պայմաններում ներառում է ոչ միայն նյութական տեսքով պատրաստի արտադրանքի արտադրության, այլ նաև տրանսպորտային, ֆինանսական, ապահովագրական և այլ ծառայությունների մատուցման գծով մասնագիտացումը:

Դետալային մասնագիտացումը սլայմանավորված է պատրաստի արտադրանքի թողարկման գործընթացի բարդությամբ: Մարդատար ավտոմեքենաների արտադրության գործընթացում, օրինակ, օգտագործվում են մոտ 20 հազար դետալներ, իսկ նավաշինության մեջ՝ տասնյակ անգամ ավելին: Նման պայմաններում տարբեր երկրների հարյուրավոր ֆիրմաներ մասնագիտանում են առանձին հանգույցների, ազրեգատների և դետալների արտադրության և վերջնական (պատրաստի) արտադրանք թողարկողներին մատակարարելու մեջ: Ինչ վերաբերում է տեխնոլոգիական մասնագիտացմանը, ապա այն նշանակում է տարբեր

երկրների գործընկեր արտադրողների մասնագիտացում՝ առանձին տեխնոլոգիական գործընթացների իրականացման մեջ:

Մասնագիտացումը հնարավորություն է տալիս առավելազույնս օգտագործել արտադրության գործոնները (տնտեսական ռեսուրսներ՝ բնական, աշխատանքային և այլն), իսկ միջազգային մասնագիտացման հիմքերն են հանդիսանում երկրի ներսում աշխատանքի բաժանման բնույթը և բովանդակությունը: Ինչքան բարձր է արտադրողական ուժերի զարգացման մակարդակը երկրում, այնքան զարգացած և բազմաճյուղ է ներերկրային մասնագիտացումը:

Ներքին և միջազգային մասնագիտացման միջև գոյություն չունի լիակատար նմանություն: Մեկ երկրի ներսում արտադրության մասնագիտացման բարձր աստիճանը ոչ միշտ է նշանակում տվյալ երկրի լայն մասնակցություն աշխատանքի միջազգային բաժանմանը, ինչը շատ դեպքերում պայմանավորված է ներքին շուկայի ծավալներով:

Միջազգային մասնագիտացման գնահատման համար կիրառվում է ցուցանիշների համակարգ, որոնց շարքում օգտագործվում են արտադրության և արտահանման երկու գործակիցներ:

1. Արտադրության մասնագիտացման գործակից՝ մեկ երկրի կամ երկրների խմբի ճյուղի բաժինը տվյալ ճյուղի միջազգային թողարկման մեջ, որն արտահայտվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$G_{\text{մճ}} = U_{\text{ճա}} / U_{\text{ճն}},$$

որտեղ.

$G_{\text{մճ}}$ -ն ճյուղային մասնագիտացման գործակիցն է, .

$U_{\text{ճա}}$ -ն ճյուղի արտադրության ծավալն է Ա երկրում,

$U_{\text{ճն}}$ -ն ճյուղի արտադրության ծավալն է տվյալ ճյուղի համաշխարհային թողարկման մեջ:

2. Միջազգային մասնագիտացման գործակից, որն արտահայտվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$Q_{\text{մծ}} = (U_{Yb} / U_b) / (U_{Yh} / U_{Yh}),$$

որտեղ.

$Q_{\text{մծ}}$ -ն միջազգային մասնագիտացման գործակիցն է,
 U_{Yb} -ն տվյալ երկրի Y ճյուղի արտահանման ծավալն է,
 U_b -ն տվյալ երկրի արտահանման ծավալն է,
 U_{Yh} -ն՝ Y ճյուղի համաշխարհային արտադրության արտահանման ծավալն է,

U_{Yh} -ն համաշխարհային արտահանման ծավալն է:

Այս առումով ընդունված է, որ եթե $Q_{\text{մծ}}$ -ն մեծ է 1.5-ից, ապա դա վկայում է տվյալ երկրի միջազգային մասնագիտացման առկայության մասին, իսկ եթե ցածր է 0.5-ից՝ ապա դրա բացակայության մասին:

Տնտեսության միջազգային մասնագիտացման արդյունքում պետությունները բաժանվում են մի քանի խմբերի:

Առաջին խմբին պատկանում են այն երկրները, որոնք արտադրում և միջազգային շուկա են արտահանում վերամշակող արդյունաբերության արտադրանք: Մասնավորապես, տվյալ խմբում ընդգրկված են այնպիսի զարգացած արդյունաբերական երկրներ, ինչպիսիք են՝ Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան, Կանադան, Ճապոնիան, ԱՄՆ-ը, որոնք միջազգային շուկա են մատակարարում՝

- բարձր տեխնոլոգիական սարքավորումներ,
- ավտոմեքենաներ,
- հաստոցներ,
- քիմիական նյութեր (ապրանքներ),
- կենցաղային տեխնիկա և այլն:

Բացի այդ, հենց նշված խմբերի ներսում ևս գոյություն ունի մասնագիտացում որոշ արտադրատեսակների գծով, օրինակ՝

ավիացիոն արտադրանքի, ավտոմոբիլային արտադրանքի, կենցաղային տեխնիկայի և այլնի գծով:

Երկրորդ խմբին են դասվում այն երկրները, որոնք արտահանում են հանքարդյունաբերական արտադրանք: Գրանց շարքին են պատկանում այն երկրները, որոնք տիրապետում են խոշոր հանքահումքային ռեսուրսների և արտահանում են համաշխարհային շուկա: Որպես այդպիսիք կարելի է նշել Մերձավոր Արևելքի, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի նավթարդյունահանող երկրները, որոնք արդյունաբերական զարգացած երկրների նավթի և գազի հիմնական մատակարարներն են: Բացի այդ, նշված խմբի երկրներից են նաև Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի մի շարք պետություններ, ինչպես նաև Շվեդիան, Ավստրալիան, Կանադան, որոնք արդյունահանում և արտահանում են մեծ քանակությամբ քարածուխ, սև և գունավոր մետաղներ, ոսկի, արծաթ և այլն:

Երրորդ խմբին պատկանում են այն պետությունները, որոնք մասնագիտացած են գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և վաճառքի մեջ: Որպես այդպիսիք, առաջին հերթին, կարելի է նշել Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի պետությունները: Համաշխարհային շուկայում գյուղատնտեսական արտադրանքի մատակարար են հանդիսանում նաև մի շարք զարգացած արդյունաբերական երկրներ, մասնավորապես՝ Արևմտյան Եվրոպայի գրեթե բոլոր պետությունները, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Կանադան, ԱՄՆ-ը: Հատկանշական է այն հանգամանքը, որ այս խմբի պետությունները մեծ մասամբ մասնագիտացած են կոնկրետ տեսակի գյուղատնտեսական արտադրանքի արտահանման մեջ: Մասնավորապես, Բրազիլիան՝ սուրճի, Արգենտինան՝ մսի, Կուբան՝ շաքարի, Հնդկաստանը և Շրի Լանկան՝ թեյի, արաբական երկրները՝ խորմայի, ցիտրուսների, բամբակի, իսկ Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները՝ բանանի արտահանման մեջ: Միաժամանակ, գոյություն ունի նաև պետությունների չորրորդ

խումբը, որոնք միաժամանակ արտադրում և արտահանում են հանքարդյունաբերության, վերամշակող արդյունաբերության և գյուղատնտեսական արտադրանք: Դրանք զարգացած արդյունաբերական երկրներն են՝ Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, ԱՄՆ, Կանադա և այլն:

Այսինքն, կարելի է փաստել, որ չնայած առկա մասնագիտացման կոնկրետ ուղղություններին և տեսակներին, ընդհանուր առմամբ երկրների մեծ մասին կարող է բնորոշ լինել մասնագիտացման մի քանի ուղղություններ, ինչն էլ պայմանավորված է մի շարք գործոններով:

1.3 Ազգային տնտեսության պաշտպանվածության գնահատման մեթոդական հիմքերը

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, արտաքին առևտրի ոլորտում պետության միջամտությունն արտահայտվում է պետական կարգավորման լծակների (արտահանման ու ներմուծման տուրքերի, պարզևների ու նպաստների, քվոտաների և այլն) օգտագործմամբ և համալիր միջոցառումների օգնությամբ վճարային հաշվեկշռի կայունացմամբ, արժույթային կուրսի կարգավորմամբ, ֆինանսական քաղաքականությամբ, կապիտալի միջազգային շարժով և երկարաժամկետ ներդրումների ապահովմամբ, ուղղակի փոխառություններ ձեռք բերելու համար կառավարական համապատասխան համաձայնագրերի կնքմամբ և այլն, որոնց հիմնական նպատակներից մեկն էլ արտաքին տնտեսական հարաբերությունների ոլորտում ազգային տնտեսության պաշտպանվածության ապահովումն է: Այս առումով, ՀՀ-ում դրանց մշակման ու իրականացման ընթացքում, բնականաբար, անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակը, այնպես էլ մեր հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը, տա-

րածաշրջանային հիմնախնդիրները, ազգային մտածելակերպի, բարոյահոգեբանական և մյուս առանձնահատկությունները:

Պետության կողմից այս ոլորտում միջամտության ձևերը և մեթոդները, դրանց առնչվող հիմնահարցերի լուծումն անխուսափելիորեն կապվում են նրա կողմից կարգավորիչ գործառույթների, լծակների և մեխանիզմների կիրառման համալիր բնույթի հետ: Խառը տիպի շուկայական տնտեսությունում, ինչպիսին է ՀՀ ներկայիս տնտեսական համակարգը, մասնավորապես՝ արտաքին տնտեսական գործունեության և արտաքին առևտրի բնագավառում պետության հիմնական կարգավորիչ գործառույթը պետք է ներառի առևտրային գործունեության կարգավորման և կոորդինացման, մաքսային գործի և արժուքային ռեսուրսների, կապիտալի հոսքերի, հարկային և վարկային քաղաքականության, ինչպես նաև վճարային հաշվեկշռի և ինտեգրացիոն գործընթացների կարգավորումը: Դրանց զուգակցումը և համալիր իրականացումը կնպաստի անցումային տնտեսության և ճգնաժամային երևույթների հետևանքների շուտափույթ հաղթահարմանը և բարենպաստ պայմաններ կստեղծի տնտեսության կայունացման ու աճի ապահովման համար: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ շատ երկրների տնտեսական աճը կտրուկ արագացել է հենց արտաքին տնտեսական ոլորտում իրականացված հիմնարար վերափոխումների արդյունքում և պետության անմիջական աջակցությամբ:

Պետության արտաքին տնտեսական, այդ թվում՝ արտաքին առևտրի քաղաքականության ձևավորման վրա կարող են ազդել համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող մի շարք երևույթներ, այդ թվում՝ միջազգային շուկաներում մրցակցային պայքարի սրումը, միջազգային շուկայում տվյալ երկրի դրամական միավորի փոխարժեքի նակայունությունը, վճարային հաշվեկշռի պակասուրդի մեծացումը, արտաքին պարտքի կուտակումը և այլն: Այս տեսանկյունից շատ կարևոր է հստակ պատկերացնել ԱՏԳ ոլորտում երկրի տնտեսության պաշտպան-

վածության հիմնախնդիրները և ունենալ այդ երևույթի և երկրում գործող առևտրային ռեժիմների ուղղվածության գնահատման կիրառական մեթոդիկա:

Առևտրային ռեժիմների ուղղվածության (ԱՌ) գնահատման լայնորեն օգտագործվող մեթոդը հիմնված է «տնտեսության փաստացի պաշտպանության» հասկացության վրա և որոշվում է հետևյալ հարաբերությամբ⁷.

$$ԱՌ = \frac{\text{ներմուծման գծով միջին փաստացի պաշտպանվածության մակարդակ}}{\text{արտահանման գծով միջին փաստացի պաշտպանվածության մակարդակ}} \quad (1):$$

Պաշտպանվածության փաստացի մակարդակը ցանկացած ապրանքի համար արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$\eta \Gamma = \frac{ԱԱ_{\text{ն}} - ԱԱ_{\text{հ}}}{ԱԱ_{\text{հ}}} \quad (2),$$

որտեղ.

ՊՄ-ն պաշտպանվածության մակարդակն է,

ԱԱ_ն-ն ներքին շուկայում ապրանքների զներում ավելացված արժեքն է՝ ներառյալ սակագները և սուբսիդիաները, ԱԱ_հ -ն ավելացված արժեքն է համաշխարհային զներում:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ.

ա) ԱՌ=1՝ նշանակում է չեզոքություն, այն դեպքում, երբ ԱՌ>1-ից՝ նշանակում է, որ ներմուծումն ավելի է պաշտպանված, քան արտահանումը, իսկ երբ ԱՌ<1-ից՝ ընդհակառակը,

բ) տնտեսության պաշտպանվածությանն ուղղված ցանկացած ամբողջական միջոցի օգտագործումը հաճախ կարող է հանգեցնել սխալ ենթադրությունների, քանի որ տարբեր ճյուղերի միջինացված փաստացի պաշտպանվածության մակար-

⁷ World Development Report 1987 (Washington, Oxford University Press for the World Bank, 1987), p. 180

դակները կարող են հավասար լինել 0-ի (դա նշանակում է, որ պաշտպանվածության փաստացի մակարդակները զգալիորեն տարբերվում են ըստ ճյուղերի): Հետևաբար, առևտրի պայմանների լրիվ չեզոքությունը ոչ միշտ է ենթադրում արտահանման ենթակա ապրանքախմբերի թողարկման մակարդակի զգալի տատանումներ և արտահանման ծավալների աճ:

Միաժամանակ, հաճախ համապատասխան տեղեկատվությունը կարող է բացակայել, որն անհրաժեշտություն է առաջացնում թեկուզ մոտավոր ձևով, բայց գնահատել այդ պայմանների չեզոքությունը: Այս դեպքում կարևոր է հաշվի առնել նաև այն հիմնական գործոնները, որոնք կանխորոշում են արտահանման խթանման կառուցվածքը, մասնավորապես՝

1. արժութային կուրսի չափազանց բարձր մակարդակը,
2. առևտրի նկատմամբ վերահսկողության ուղղակի միջոցների օգտագործումը, ինչպիսիք են քվոտաները և ներմուծման արտոնագրերը,
3. պաշտպանվածության փաստացի մակարդակը,
4. արտահանման խթանիչների օգտագործումը՝ ներառյալ արտահանման ուղղակի և անուղղակի սուբսիդիաները:

Մեկ այլ մոտեցմամբ, տնտեսության (կամ առևտրի) մաքսային պաշտպանվածության (իրական արդյունավետ հովանավորչության) մակարդակի գնահատումը ելնում է պատրաստի արդյունքի և հումքի նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի միջև տարբերության մակարդակից և այն հանգամանքներից, թե որքան է հումքի բաժինը պատրաստի արդյունքում⁸: Այս մոտեցմամբ մաքսային պաշտպանության իրական մեծությունը ($\mathcal{M}_{մաքս.}$) կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\mathcal{M}_{մաքս.} = \frac{U_{վ. արտ.} - \sum U_{տ} \times \sum \zeta_{անվ. սակ.}}{1 - \sum U_{տ}} \quad (3),$$

⁸ В.Б.Буглай, Н.Н.Ливенцев “Международные экономические отношения: Учеб. Пособие-М.: Финансы и статистика, 1996г., էջ 46.

որտեղ.

Մ_{վ.արտ} - ը ներմուծվող վերջնական արդյունքի նկատմամբ կիրառվող մաքսատուրքի անվանական մակարդակն է,
ՀԱ_տ - ն մաքսային սակագների բացակայության պայմաններում վերջնական արդյունքի գնի մեջ ներմուծվող հումքի արժեքային մասնաբաժինն է,

ՆՀ_{անվ.սակ.} - ը ներմուծվող հումքի անվանական սակագինն է:

Վերոհիշյալ քանաձևից հետևում է, որ պաշտպանվածության մակարդակը տվյալ դեպքում բարձրանում է ոչ միայն հումքի և պատրաստի արդյունքների նկատմամբ մաքսատուրքերի մեծությունների միջև տարբերության աճին, այլ նաև հումքի մշակման մակարդակի իջեցմանը և ավելացված արժեքի կրճատմանը զուգահեռ: Նման քաղաքականությունը հատկապես զգալի ազդեցություն է ունենում զարգացող երկրների վրա, որոնք ձգտում են բարձրացնել արտահանվող հումքի մշակվածության մակարդակը:

Այսպիսով, մաքսատուրքերի անվանական մակարդակը որոշվում է վերջնական արդյունքի ընդհանուր գնից ելնելով և կարևոր է տվյալ ապրանքի իրացման առումով, իսկ իրական կամ արդյունավետ մաքսային պաշտպանվածության մակարդակը մեծ նշանակություն ունի նաև արտադրողի համար:

Սակայն այս դեպքում հիմնախնդիրներ են առաջանում առանձին երկրների մաքսային սակագների մակարդակների համեմատման ժամանակ, քանի որ միանման մաքսատուրքերի համեմատման մեթոդներ դեռևս մշակված չեն: Սակագների «կշռումը» կարող է իրականացվել կամ ներմուծվող ապրանքների գներին, կամ ազգային արտադրության մեծությանը համապատասխան: Եթե օգտագործվեն ազգային արտադրության տվյալները, ապա արդյունքները կլինեն առավել ակնառու և արժանահավատ, քանի որ դրանք կանխորոշում են մաքսասակագնային համակարգի ուղղվածությունը: Միևնույն ժամանակ, նման հաշվարկների իրականացումը կապված է մի շարք

դժվարությունների հետ, քանի որ սակագների դասակարգումը և արտադրության կառուցվածքը ոչ միշտ են համընկնում:

Արտաքին առևտրային քաղաքականության բարեփոխումները, որոնք կատարվում են մեր հանրապետությունում, տեղիք են տալիս մտածելու որոշակի քայլերի իրականացման ուղղությամբ՝ ազգային տնտեսության պաշտպանության մակարդակի գնահատման (հովանավորչության աստիճանի որոշման) կտրվածքով: Հաշվի առնելով արտաքին շուկաներից մեր հանրապետության ներքին շուկայի կախվածությունը, ինչպես նաև ներմուծվող և արտահանվող ապրանքների սահմանափակ տեսականին, փորձենք ցույց տալ, թե ինչպիսի մեթոդական մոտեցում կարելի է ցուցաբերել ՀՀ-ում՝ տնտեսության պաշտպանվածության մակարդակի հաշվարկման առումով: Համաշխարհային պրակտիկայում կիրառվող մոտեցումների քննարկումը թույլ է տալիս որոշ համեմատություններ կատարել և գուզահեռներ անցկացնել ՀՀ-ում և մյուս երկրներում կիրառվող ցուցանիշների միջև, թեև հասկանալի է, որ նման հետազոտությունների ընթացքում կհանդիպեն որոշ դժվարություններ՝ տեղեկատվության հավաքման և ցուցանիշների բացակայության հետ կապված:

Այնուհանդերձ, ՀՀ տնտեսության պաշտպանվածության մակարդակի գնահատումը առաջարկում ենք կատարել հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\mathcal{M}_q = \frac{ԻԳ_{q-6} - ՍԱ_6}{ԻԳ_{q-6}} \quad (4),$$

որտեղ.

\mathcal{M}_q -ն տնտեսության պաշտպանվածության գործակիցն է (կամ 100-ով բազմապատկելու դեպքում՝ պաշտպանվածության աստիճանը),

$ԻԳ_{q-6}$ -ն ներմուծվող ապրանքի իրացման գինն է ներքին շուկայում (ներառյալ բոլոր անուղղակի հարկերն ու վճարները),

ՄԱԳ-ն ներմուծվող նույն ապրանքի մաքսային արժեքն է՝ մինչև մաքսային սահմանի հատումը:

Ինչպես կարելի է նկատել բանաձևի կառուցվածքից, դրա հիմքում դրված են վերը ներկայացված (2) բանաձևի տրամաբանությունը, այսինքն՝ ներքին շուկայի պաշտպանվածության (հովանավորչության) գնահատականը կշռվում է ներմուծվող ապրանքների գներով: Սակայն, դրա հետ միասին, կան նաև զգալի տարբերություններ, մասնավորապես՝ բացի այն, որ հաշվարկի մեխանիզմն ավելի պարզ է, իսկ ներկա պայմաններում օգտագործվող տեղեկատվությունը համեմատաբար մատչելի, տվյալ մոտեցումը թույլ է տալիս հաշվի առնելու ոչ միայն ավելացված արժեքը (ապրանքի գնում), այլև տվյալ ապրանքի գծով ներքին շուկայի մաքսային պաշտպանվածության «քեռը»:

Բացի այդ, տվյալ բանաձևի հայտարարի որոշակի փոփոխությունները թույլ կտան (հնարավորության դեպքում) ավելի ճշգրտել հաշվարկվող ցուցանիշը: Այսպես, տվյալ դեպքում բանաձևի հայտարարում ԻԳ₆ - ի օգտագործումը նախատեսված է այն դեպքերի համար, երբ ներմուծվող ապրանքից կամ դրա փոխարինիչներից ներքին շուկայում չի արտադրվում: Հակառակ դեպքում, երբ նույն ապրանքն արտադրվում է նաև ներքին շուկայում, հայտարարում օգտագործելով հայրենական արտադրության նույն ապրանքատեսակի իրացման շուկայական գինը, կստանանք տվյալ ապրանքի գծով ներքին շուկայի սուբյեկտների հովանավորչության առավել ճշգրիտ պատկերը:

Ամփոփելով նշենք, որ տվյալ բանաձևի կիրառումից կարող են ստացվել հետևյալ հնարավոր արդյունքները.

ա) պաշտպանվածության գործակիցը նորմալ պայմաններում կտատանվի 0-ից 1-ի միջակայքում, և որքան այն ձգտի 1-ին, այնքան հովանավորչության մակարդակը բարձր կլինի (և հակառակը).

բ) հնարավոր է՝ պաշտպանվածության գործակիցը լինի բացասական նշանով այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքի

մաքսային արժեքը կգերազանցի ներքին շուկայում դրա իրացման գինը (այս դեպքում մենք գործ կունենանք ներմուծողի կողմից դեմպինգային գների կիրառման հետ): Տեսականորեն տվյալ գործակիցը կարող է լինել նաև գրոյին կամ մեկին հավասար, երբ առաջին դեպքում ներմուծվող ապրանքի մաքսային արժեքը հավասար է լինում իրացման գնին (օրինակ՝ եթե «անմաքս խանութ» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքն իրացվել է հենց սահմանի վրա, ըստ որում՝ առանց շահույթի ստացման), իսկ երկրորդ դեպքում, երբ ներմուծվող ապրանքի մաքսային արժեքը հավասար լինի 0-ի:

գ) ներքին շուկայի պաշտպանվածության մակարդակը որոշվում է այն հարկերի, մաքսատուրքերի, պարտադիր և կամավոր մյուս վճարների (այսինքն՝ պետական կարգավորիչների) կիրառման ծավալներից և «ժանրությունից» ելնելով, որոնք գումարվում են ներմուծվող ապրանքի արժեքին՝ մաքսային սահմանը հատելուց հետո,

դ) համապատասխան տվյալներն ունենալու դեպքում, տվյալ բանաձևի միջոցով կարելի է հաշվարկել նաև ապրանքային առանձին խմբերի գծով (միջինացված) ներքին շուկայի պաշտպանվածության մակարդակը:

:

ՉԼՈՒՑ 2. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Մակրոտնտեսական քաղաքականության և, ընդհանուր առմամբ, սոցիալ-տնտեսական հարաբերությունների ողջ համալիրի վրա էական ազդեցություն ունեն համաշխարհային առևտուրը և արտաքին տնտեսական հարաբերությունները: Ժամանակակից տնտեսությունն անհնարին է պատկերացնել առանց երկրների միջև ապրանքների և ծառայությունների ակտիվ փոխանակման, կապիտալի և աշխատուժի օրինաչափ հոսքերի, առանց արտաքին ներդրումների, երկրների ու տարածաշրջանների մասնագիտացման, բացարձակ և հարաբերական առավելությունների ձեռքբերման, տնտեսական համագործակցության և միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների հայտնի մյուս երևույթների. որոնք վերջին հաշվով հանգեցրել են ինտեգրացիոն գործընթացների սկզբնավորմանը և համաշխարհային տնտեսության ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետության համար արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը և դրանց կարգավորմանն ուղղված պետական քաղաքականությունն ազգային տնտեսության արդյունավետության և բնակչության կյանքի մակարդակի բարձրացման կարևոր և ազդեցիկ լծակներից են, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում համեմատաբար կարճ ժամանակահատվածում լուծել այն խնդիրները, որոնք կենտրոնացված կառավարման համակարգի արդյունք էին: Մասնավորապես, նախկին խորհրդային հանրապետությունները, ըստ էության, կտրված էին համաշխարհային տնտեսությունից, չունեին ինքնուրույն արտաքին տնտեսական քաղաքականություն վարելու իրավունք, զգալիորեն ետ էին մնացել շուկայական տնտեսություն ունեցող երկրների զարգացման մակարդա-

կից և այլն: Հետևաբար, միանգամայն օրինաչափ էր, որ քաղաքական անկախության ձեռքբերումից հետո հանրապետության իշխանությունները պետք է ակտիվ ջանքեր գործադրեին արտաքին տնտեսական հարաբերությունների ամբողջ սպեկտրի վերակառուցման և համաշխարհային առևտրատնտեսական գործընթացներին, միջազգային կազմակերպություններին ու շուկաներին ինտեգրվելու ուղղությամբ:

Արտաքին տնտեսական հարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության ներուժի նույնիսկ հպանցիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ համաշխարհային տնտեսությանն արագ ինտեգրվելու տեսանկյունից ներկայումս առկա են ինչպես բավականաչափ ծանրակշիռ նախադրյալներ ու բարենպաստ գործոններ, այնպես էլ ինտեգրման գործընթացը դանդաղեցնող և խոչընդոտող լուրջ դժվարություններ, որոնք, բնականաբար, պետք է իրենց արտացոլումը ստանան հանրապետության մակրոտնտեսական քաղաքականության քաղկացուցիչ մասը կազմող արտաքին տնտեսական քաղաքականության և ինտեգրացիոն գործընթացների ռազմավարության մեջ:

2.1 ՀՀ արտաքին տնտեսական գործունեության բնագավառի պետական քաղաքականության էվոլյուցիան

Արտաքին տնտեսական գործունեության ծավալման առումով, մինչև 1991 թվականի Անկախության հռչակագրի ընդունումը և տնտեսական համակարգում արժատական վերափոխումների իրականացումը, Հայաստանում, դեռևս գոյքաչուլյան վերակառուցման վերջին տարիներին, արդեն ստեղծվել էին որոշակի նախադրյալներ անկախ արտաքին քաղաքականություն վարելու համար: Մասնավորապես, հատկանշական են «Պետական, կոոպերատիվ և այլ հասարակական ձեռնարկությունների, միավորումների ու կազմակերպությունների արտաքին տնտեսա-

կան գործունեության հետագա զարգացման մասին» ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988թ. դեկտեմբերի 2-ի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի՝ 1989թ. հունվարի 12-ի համանման որոշումները, «Արտաքին տնտեսական գործունեության պետական կարգավորման միջոցառումների մասին» ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1989թ. մարտի 7-ի որոշումը և այլն, որոնք հիմք դրեցին արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների պետական գրանցման, առևտրային գործառնությունների հաշվառման, տեղեկատվական ու խորհրդատվական ծառայություններից օգտվելու համար և այլն: Ներդրվեցին նաև արտաքին տնտեսական գործունեության պետական կարգավորման այնպիսի բաղկացուցիչներ, ինչպիսիք են լիցենզավորման ինստիտուտը, արտահանման ու ներմուծման քվոտավորումը և այլն:

Իրավիճակն արձատապես փոխվեց կենտրոնացված կառավարման սկզբունքներից շուկայական հարաբերություններին անցումից հետո, երբ նախկին միութենական հանրապետությունները ստացան քաղաքական, այդ թվում՝ նաև արտաքին տնտեսական հարաբերությունների հաստատման անկախություն և համաշխարհային շուկաներում ինքնուրույն տնտեսական գործունեություն իրականացնելու ազատություն:

Միևնույն ժամանակ, դեռևս շարունակում էին գործել նաև խորհրդային կառավարման ոգուն բնորոշ տարբեր սահմանափակումներ, որոնք, ըստ էության, կաշկանդում էին արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների ակտիվությունը և զարգացման հնարավորությունները: Այդ սահմանափակումների աստիճանական վերացումը, որը սկսվեց 1992 թվականից, թերևս կարելի է որոշակի առաջընթաց համարել, քանզի այդ գործընթացի վերջում Հայաստանն արդեն ուներ արտաքին տնտեսական կապերի ազատականացման անհրաժեշտ մակարդակ և այդ առումով չէր զիջում ԱՊՀ մյուս երկրներին: Մասնավորապես, այդ նույն թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում արտաքին տնտեսական գործունեության մա-

սին» և «Հայաստանի Հանրապետության տարածքում արժու-
թային գործառնությունների կարգավորման մասին» իրավական
ակտերով վերացվեցին արտաքին տնտեսական գործունեու-
թյամբ զբաղվող սուբյեկտների գրանցման կարգը և տնտեսվա-
րող սուբյեկտների կողմից արժութային գործառնությունների
իրականացման սահմանափակումները, իսկ ուրուտի ազատա-
կանացման գործընթացը, բացառությամբ որոշ ապրանքատե-
սակների հսկիչ գների, իր ավարտին հասավ արդեն ՀՀ կառա-
վարության կողմից 1995թ. դեկտեմբերի 29-ին ընդունված
«Հայաստանի Հանրապետությունում ապրանքների արտահան-
ման ու ներմուծման ոչ տարիֆային կարգավորման կարգի մա-
սին» որոշման ընդունումով: Վերջինս սահմանում էր ապրանք-
ների այն ցանկը (մասնավորապես՝ կոնյակը, կաբելային ար-
տադրանքը, կաուչուկը, մետաղական հանքանյութերը և այլն),
որոնց համար նախատեսվում էր կիրառել արտահանման նվա-
զագույն հսկիչ գներ՝ միջազգային շուկաներում այդ ապրանք-
ների գների հետ համապատասխանության ապահովման
նպատակով, որոնք էլ հետագայում վերացվեցին Մաքսային
օրենսգրքի ընդունմամբ:

Ակնհայտ դրական արդյունքների հետ միասին այս գործ-
ընթացն ունեցավ նաև որոշակի բացասական հետևանքներ,
որոնք հիմնականում հանգեցրին նախկին տնտեսական կապերի
աստիճանաբար խզմանը և սուր մրցակցային պայքարի մեջ
գտնվող միջազգային ապրանքային շուկաներ մուտք գործելու
նպատակով հին, ֆիզիկապես ու բարոյապես մաշված արտա-
դրության միջոցներով ընդլայնված վերարտադրության կազմա-
կերպման գրեթե անհնարիվությունը: Նման պարագայում, այն-
պես, ինչպես մյուս հանրապետությունները, Հայաստանը ևս
ձեռնամուխ եղավ արտաքին շուկաներ դուրս գալու ուղիների
մշակմանը և այդ նպատակով սեփական հանքահումքային,
էներգետիկ, աշխատանքային և մյուս ռեսուրսների «գույքա-
զրմանը»: Հարկ է նշել, որ միութենական նախկին տնտեսական

կապերի քայքայումից ամենաշատ տուժած հանրապետություններից մեկն էլ հենց Հայաստանն էր, որի ռեսուրսային ներուժի սահմանափակվածությանն այս շրջանում ավելացան աղետի գոտու հետևանքների հաղթահարման, դարաբաղյան պատերազմի, տրանսպորտային ուղիների համատարած շրջափակման և հայտնի մյուս դժվարությունները:

Որպես արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման նախադրյալներ, այդ ժամանակաշրջանում դիտարկվում էին առանձին (հազվագյուտ) հանքային հումքատեսակների առկայությունը (պեռլիտները, հանքային ջրերը, խորդենին և այլն), բարձր որակավորում ունեցող և հարաբերականորեն էժան աշխատուժը, արտաքին գրուսաշրջության զարգացման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը (բարենպաստ կլիմա, տեսարժան վայրեր և այլն), բազմախազարանոց սփյուռքի գոյությունը, միջազգային կազմակերպություններին անդամակցության հնարավորությունների առկայությունը, արտաքին տնտեսական գործունեության համար համապատասխան օրենսդրության ձևավորումը, Հայաստանը որպես արտաքին կապերի համար տարանցիկ գոտի դառնալու հնարավորությունը և այլն:

Մյուս կողմից որպես հիմնական և առաջնային լուծման ենթակա խնդիրներ էին համարվում՝

- ազատ ձեռնարկատիրական (տնտեսական) գոտիների ստեղծումը,
- համատեղ ձեռնարկությունների ստեղծման և օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսումը,
- կոնցեսիաների տրամադրման համար հիմքերի ստեղծումը և դրանց շրջանակների աստիճանական ընդլայնումը,
- կայուն արժութային քաղաքականության իրականացումը,
- վճարային հաշվեկշռի կտրուկ բարելավումը,

- արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների համար մատչելի տեղեկատվական համակարգի ստեղծումը,
- արտաքին տնտեսական հարաբերությունների օրենսդրաիրավական հիմքերի համալրումը և կատարելագործումը,
- արտահանման խրախուսումը և արտահանման ու ներմուծման կառուցվածքների բարելավումը,
- մաքսային և հարկային արդյունավետ վերահսկողության իրականացումը,
- արտահանման և ներմուծման գործարքների ապահովագրության շրջանակների ընդլայնումը և այլն:

Նշված դժվարություններն, իհարկե, իրենց բացասական ազդեցությունն ունեցան հանրապետության արտաքին տնտեսական քաղաքականության վրա, սակայն, մյուս կողմից՝ դրանք էականորեն խթանեցին ոլորտի օրենսդրական կարգավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Մասնավորապես, համեմատաբար կարճ ժամանակահատվածում ընդունվեցին ՀՀ Մաքսային օրենսգիրքը, «Մաքսային սակագնի մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների աշխատողների հատուկ կոչումներ սահմանելու մասին», «Միջազգային արժույթային հիմնադրամին, վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, միջազգային ֆինանսական կորպորացիային, զարգացման միջազգային ասոցիացիային, կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և կապիտալ ներդրումների վերաբերյալ տարածայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին ՀՀ անդամակցության մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Օտարերկրյա ներդրումների մասին», «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին», «Արտոնագրերի մասին», «Ակցիզային հարկի մասին», «ՀՀ պետական սահմանի մասին», «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական

վիճակի մասին» ՀՀ օրենքները և այլն, որոնք, սակայն, իրենց էությունը միջանկյալ բնույթ ունենին՝ միջազգային կազմակերպություններին անդամակցության և միջազգային օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանեցման տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, այս փուլում ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացումը դեռևս չուներ համակարգվածության անհրաժեշտ մակարդակ, իսկ օտարերկրյա ներդրումները և համատեղ ձեռնարկությունների ստեղծումը հիմնականում պայմանավորված էին 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացման բնագավառում օտարերկրյա պետությունների և սփյուռքահայության օգնությամբ ու այդ հետևանքների արագ վերացման ցանկությամբ: Այս առումով բավական է նշել, որ տվյալ ժամանակահատվածում գրանցված հարյուրավոր համատեղ ձեռնարկություններից գործում էին ընդամենը մի քանիսը, ինչը վկայում է այն մասին, որ ներդրումների կատարման ցանկությունը զուգորդված չէր ձեռնարկատիրության համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ, ավելին՝ առկա էին շահավետ ներդրումներ կատարելուն և շահութաբեր գործունեություն ծավալելուն խոչընդոտող այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ բնակչության գնողունակության ցածր մակարդակը, ֆինանսական անկայուն վիճակը, ռիսկի բարձր մակարդակը, փոխադարձ չվճարումների հսկայական ծավալները, պետության կողմից իր ֆինանսական պարտավորությունների չկատարման հաճախակի դեպքերը և այլն:

Արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման նշված փուլին բնորոշ էր նաև տարբեր տեսակի արտոնությունների գոյությունը, որոնք տեսականորեն պետք է նպաստեին այս ոլորտի սուբյեկտների գործունեության աշխուժացմանը: Սակայն գործնականում արտոնությունների այս համակարգն ունեցավ որոշակի բացասական հետևանքներ՝ կապված տնտեսվարող սուբյեկտների կողմից այդ արտոնությունների չարաշահման, շուկայում գերիշխող կամ մենաշնորհային դիր-

քերի ձեռքբերման, ստվերային շրջանառության ծավալների և մաքսանենգության ընդլայնման, ոչ որակյալ ապրանքների ներմուծման աճի և բացասական մի շարք այլ հանգամանքների հետ: Այս շրջանում, ի թիվս նշվածների, արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման վրա բացասական լուրջ ազդեցություն էին գործում նաև դրամավարկային և հատկապես՝ արժույթային քաղաքականության չլուծված հիմնախնդիրները և բանկային համակարգի անկայուն, ոչ հուսալի վիճակը:

Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին կապերի զարգացման ոլորտում որակապես նոր փուլ սկսվեց 1997-1998 թվականներից, երբ մակրոտնտեսական քաղաքականության կայունացման ֆոնի վրա առաջնային խնդիր դրվեց Առևտրի համաշխարհային կազմակերպությանն (ԱՀԿ) անդամակցության հիմնահարցի լուծումը: Այս նպատակով արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներ դարձան՝

- արտաքին տնտեսական գործունեության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համապատասխանեցումը ԱՀԿ պահանջներին և, առաջին հերթին, մաքսային նոր օրենսգրքի մշակումն ու ընդունումը,
- արտահանման աճի տեմպերի արագացումը և ներմուծման տեմպերի նվազեցումը,
- առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի կրճատումը,
- օտարերկրյա ուղղակի ներդրումները դեպի ռազմավարական նշանակության օբյեկտներ ուղղելը,
- արտահանման ու ներմուծման աշխարհագրության ընդլայնումը,
- տրանսպորտային ուղիների այլընտրանքային սխեմաների մշակումը,
- Իրանի հետ առևտրատնտեսական կապերի ակտիվացումը (հատկապես՝ Իրան-Հայաստան գազամուղի շինարարության ուղղությամբ),

- ստանդարտացման և չափաբանության համակարգերի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին,
- մաքսային վարչարարության կատարելագործումը,
- չգործող կամ չարաշահումների տեղիք տվող արտոնությունների վերացումը,
- ներգնա զբոսաշրջության ծավալների և շրջագայությունների տևողության մեծացումը և այլն:

Նշված խնդիրների գերակշիռ մասը հիմնականում հաջողվեց լուծել, իսկ դրանց մի մասի լուծումը, պետք է նշել, բավականին երկար ժամանակահատված է պահանջում (օրինակ՝ տրանսպորտային հաղորդակցության հնարավորությունների ընդլայնումը, ներգնա զբոսաշրջության զարգացումը, ազգային ստանդարտների համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունվածներին և ազգային տեխնիկական կանոնակարգերի մշակումը, մաքսային վարչարարության կատարելագործումը և այլն), որոնք ներկայումս էլ գտնվում են արտաքին տնտեսական քաղաքականության գերակա խնդիրների շարքում: Դրանց լուծման նպատակով, մինչև 2005 թվականն ընկած ժամանակաշրջանում, ընդունվեցին մի շարք կարևոր օրենքներ, որոնք ոչ միայն ապահովեցին ԱՀԿ օրենսդրական պահանջների կատարումն, այլև իրական հիմքեր ստեղծեցին արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների հարաբերությունների իրավական կանոնակարգման համար: Որպես այդպիսիք, հատկանշական են ՀՀ Մաքսային նոր օրենսգիրքը, «Մաքսային ծառայության մասին», «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային սահմանին չի հաշվարկվում և զանձվում», «Հակազնագցման (հակադեմպինգային) և փոխհատուցման միջոցների մասին», «Ներքին շուկայի պաշտպանության մասին», «Ստանդարտացման մասին», «Չափում-

ների միասնականության ապահովման մասին», «Համապատասխանության գնահատման մասին», «Առևտրաարդյունաբերական պալատների մասին», «Երևանի «Չվարթնոց» օդանավակայանի և «Երևան» ազատ տնտեսական գոտու տարածքներում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու մասին», «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքները, որոնք մի կողմից շարունակաբար կատարելագործվում են, իսկ մյուս կողմից՝ ընդունվում են այդ օրենքներից բխող նորմատիվային ակտեր, դրանով, իսկ ամբողջացնելով ոլորտի օրենսդրությունը և ապահովելով նշված օրենքների արդյունավետ կիրարկումը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունն ինքնուրույն արտաքին տնտեսական գործունեություն (ԱՏԳ) իրականացնելու հնարավորություն ստացավ միայն հանրապետության անկախության հռչակումից հետո, որից անցել է ընդամենը 17 տարի: Այս ժամանակաշրջանը մի կողմից քիչ է կայացած ԱՏԳ համակարգ, երկրի մասնագիտացված ճյուղեր և ոլորտներ ունենալու համար, իսկ մյուս կողմից՝ բավականին տևական շրջան կարելի է համարել այս նպատակներին հասնելու իրավաքաղաքական, տնտեսական, սոցիալական, կազմակերպական և ֆինանսական հիմքեր ձևավորելու առումով:

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրատնտեսական քաղաքականությունը ձևավորվել և մինչ այժմ իրականացվում է ազատական (լիբերալ) սկզբունքների հիման վրա, մի քանի գլխավոր ուղղություններով, որոնցից են՝ համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ ինտեգրումը, արտահանման խթանումը, ներդրումների ներգրավման գործընթացի խթանումը, արտաքին տնտեսական գործունեության զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, արտերկրի հետ միջպետական տնտեսական համագործակցության ընդլայնումը,

արտաքին առևտրատնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնող ենթակառուցվածքների զարգացումը և այլն: Ընդհանուր առմամբ, ՀՀ իշխանությունները միշտ էլ խնդիր են դրել ԱՏԳ ոլորտում իրականացնել հավասարակշռված քաղաքականություն, ինչը պայմանավորված է ընտրված գերակայությունների շրջանակներում ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ համագործակցության խորացմամբ և Հայաստանի համար առավել նպաստավոր նոր հարաբերությունների հաստատմամբ: Մասնավորապես, այս ուղղությամբ շարունակական աշխատանքներ են իրականացվում առևտրատնտեսական ոլորտի բազմակողմ և երկկողմ միջազգային համաձայնագրերի կնքման, օտարերկրյա պետությունների հետ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության բնագավառում միջկառավարական հանձնաժողովների ձևավորման և դրանց համատեղ նիստերի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման, հանրապետական և միջազգային առևտրաարդյունաբերական ցուցահանդեսներում հայաստանյան արտադրանքը ներկայացնող մասնակիցներին խորհրդատվական ու կազմակերպական օգնության ցուցաբերման և այլ գործողությունների իրականացման տեսանկյունից:

2.2 Ներդրումային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում

≈

Մակրոտնտեսական ընդհանուր քաղաքականության հիմնական ուղղությունների շարքում իր կարևորությամբ առանձնահատուկ է ներդրումային քաղաքականությունը, որն անհրաժեշտ նախադրյալ է ոչ միայն տնտեսական կյանքի աշխուժացման, կառուցվածքային վերափոխումների իրականացման, գիտատեխնիկական առաջընթացի ապահովման, մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման, տնտեսական զարգացման կայուն տեմպերի ձևավորման, այլև արտաքին տնտեսական

կապերի աշխուժացման ու դրանց արդյունավետության մակարդակի բարձրացման համար:

Ներդրումների աճի ապահովումն ակնհայտորեն լուծում է մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, տնտեսության դինամիկ զարգացման նպատակով նոր տեխնոլոգիաների արմատավորումը, նոր շուկաների բացահայտումը, դրանց մատչելիության ապահովումը, այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնումը և այլն:

Շուկայական վերափոխումների անցած ժամանակահատվածում, թերևս, մակրոտնտեսական միջավայրի «ամենանորբ» և դրանով պայմանավորված՝ ամենախոցելի տեղամաս պետք է համարել ներդրումային քաղաքականության ոլորտը: Վերջինս մշտապես գտնվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների ազդեցության տակ, ինչն էլ, ըստ էության, կանխորոշում է տվյալ ոլորտում պետական քաղաքականության արդյունավետությունը: Այս առումով, մինչև 1999թ. հանրապետությունում կատարված ներդրումները հիմնականում չհանգեցրին այնպիսի արդյունքների, որոնք կնպաստեին գրադվածության մակարդակի էական բարձրացմանը, շինարարության ծավալների մեծացմանը, բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, էներգետիկ համակարգի տեխնիկական վերազինմանը և այլն:

Հետագայում, ներդրումների օգտագործման նպատակայնության և արդյունավետության աստիճանական բարձրացման շնորհիվ, որոշակիորեն հաջողվեց լուծել ներդրումային առողջ միջավայրի ստեղծման և այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացման խնդիրները, ինչը, իր հերթին, թույլ տվեց զգալիորեն մեծացնել հատկապես կապիտալ շինարարության ծավալները:

Տնտեսական վերափոխումների վերջին տարիներին, երբ հանրապետությունում արձանագրվեց մակրոտնտեսական և ներքաղաքական հարաբերական կայունություն, ներդրումների

համար ստեղծվեցին որոշ նախադրյալներ, մասնավորապես՝ պետական գույքի մասնավորեցման նոր ռազմավարության ընդունումը, ներդրումների պաշտպանության իրավական երաշխիքների ձևավորումը, կապիտալի հոսքերի նկատմամբ սահմանափակումների վերացումը և այլն: Այդուհանդերձ, տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակի անկայունությունը, հանրապետության տրանսպորտային ցանցի սահմանափակ հնարավորությունները, ներքին շուկայի փոքր ծավալները, կոռուպցիոն երևույթները, դեպի ծով ելքի բացակայությունը և այլն, ակնհայտորեն դեռևս բարձր են պահում ձեռնարկատիրական ռիսկի մակարդակը՝ նվազեցնելով հանրապետության ներդրումային գրավչությունը:

Հանրապետության ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման առումով, տվյալ ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակ պետք է դառնա ներդրումային միջավայրի շարունակական բարելավումը, ներդրումային ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի կայացումը և ներդրումների իրական պաշտպանության ապահովումը: Վերջիններիս իրականացման համար առաջնահերթ լուծում են պահանջում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- ներդրումների և ներդրողների շահերի իրավական պաշտպանության ապահովումը,
- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսվարման հավասար պայմանների ապահովումը,
- մեծածավալ ներդրումների համար արտոնությունների տրամադրումը,
- ներդրումները կարգավորող միջազգային իրավական նորմերի և պրակտիկայի կիրարկման ապահովումը,
- ներդրումային ծրագրերի մշակման և իրականացման հարցում պետական աջակցության ցուցաբերումը,

- ներդրումային ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմինների օպտիմալ կառուցվածքի և հանրապետությունում ներդրումների համար բարոյահոգեբանական առողջ միջավայրի ձևավորումը,
- ներդրումները խթանող ենթակառուցվածքների կայացումը և զարգացումը,
- պետական ներդրումային համալիր ծրագրերի իրականացումը և այլն:

Հարկ է նշել նաև, որ թվարկված խնդիրների լուծումն, այդուհանդերձ, բարդ և տևական մի գործընթաց է, քանի որ այն ուղղակի և անուղղակի ձևով պայմանավորված է ինչպես մակրոտնտեսական հաշվեկշռվածության ապահովման խնդիրների լուծմամբ և տնտեսության իրական հատվածի արդյունավետ զարգացմամբ, այնպես էլ տարածաշրջանային և ներքաղաքական կայունությամբ:

2.3 Արժուքային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում

Արտաքին տնտեսական կապերի ակտիվացման կարևոր պայմաններից մեկը, համապատասխան (խրախուսող) արժուքային քաղաքականության իրականացումն է, ինչը հատկապես ցայտուն դրսևորում ստացավ հայկական դրամի կայուն արժեւորման գործընթացների և 2008 թվականի միջազգային ֆինանսական ու տնտեսական ճգնաժամի ֆոնին:

ՀՀ կենտրոնական բանկի արժուքային քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության արժուքային պահուստների արդյունավետ կառավարման միջոցով ՀՀ դրամի հուսալիության ու միջազգային հեղինակության բարձրացմանը, ընթացիկ արժուքային գործառնությունների և կապիտալի շարժի, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ իրավատնտեսական դաշտի ստեղծմանը: Այդ նպատակների

իրականացման համար հայտարարվել է համապատասխան արժուրթային ռեժիմ, մշակվել են արժուրթային համակարգի գործունեության սկզբունքները և սահմանվել օրենսդրական կարգավորման շրջանակները:

ՀՀ կենտրոնական բանկը վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն, ինչը համահունչ է ազատականացված կապիտալի հաշվին գործարքների և անկախ դրամավարկային քաղաքականության իրականացման սկզբունքներին: Կենտրոնական բանկի միջամտությունն արժուրթային շուկային իրականացվում է՝ ելնելով դրամավարկային քաղաքականության նպատակներից: Շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա Կենտրոնական բանկը սահմանում է արտարժույթի նկատմամբ հայկական դրամի պաշտոնական (հաշվարկային) փոխարժեքը:

Արժութային կարգավորման դաշտը ներառում է Հայաստանի Հանրապետությունում արժութային գործարքների կնքման կարգն ու պայմանները, արժութային արժեքների տնօրինման, տիրապետման և օգտագործման դեպքերը, կարգն ու պայմանները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արժութային կարգավորման ու վերահսկողության հետ կապված այլ հարաբերությունները: Մասնավորապես, ՀՀ տարածքում Հայաստանի Հանրապետության դրամով են իրականացվում՝

- ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման փողային գնանշումները (բացառությամբ անկանխիկ վճարումներ նախատեսող և գրավոր ձևով կնքված այն պայմանագրերում կատարված գնանշումների, որոնք կնքվել են իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռեզիդենտի և իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ոչ ռեզիդենտի միջև)*,

* Տվյալ բացառությունը կատարվել է միայն 2007 թվականին՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի

- ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները (ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները),
- իրավաբանական անձանց կանոնադրական և բաժնեհավաք կապիտալում փողային ներդրումները,
- փողային շահումների գովազդը և այլն:

Ներքին արժութային շուկայում ինչպես ՀՀ ռեզիդենտները, այնպես էլ ոչ ռեզիդենտներն առանց սահմանափակումների և իրենց համար նախընտրելի փոխհամաձայնեցված փոխարժեքով իրականացնում են արտարժույթի առք ու վաճառքի գործարքներ՝ Կենտրոնական բանկի և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց (բանկերի, վարկային կազմակերպությունների, արժութային դիլերների, փոխանակման կետերի), ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի միջոցով:

Ազատականացված է ինչպես վճարային համակարգի, այնպես էլ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից հաճախորդների սպասարկման հետ կապված արժութային գործառնությունների իրականացումը: ՀՀ տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը, ինչպես նաև ոչ ռեզիդենտ բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերը կարող են սպասարկել միջազգային պրակտիկայում ընդունված բոլոր տեսակի հաշիվները: Նման սկզբունք է գործում նաև ռեզիդենտների կողմից օտարերկրյա բանկերում միջազգային բանկային պրակտիկայում կիրառվող հաշիվների բացման ոլորտում:

Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (04.12.2007թ. ՀՕ-258), ինչը պայմանավորված էր հայկական դրամի արժեւորման արդյունքում ԱՏԳ- սուբյեկտների գործունեության ճկունության բարձրացման և արժութային ռիսկերից առաջացող վնասներից խուսափելու անհրաժեշտությամբ:

Առանց սահմանափակումների իրականացվում է կանխիկ արտարժույթի և արտարժույթով արտահայտված արժեթղթերի ներմուծում: Թույլատրվում է առանց որևէ փաստաթղթի Հայաստանի Հանրապետությունից արտահանել արտարժույթով արտահայտված արժեթղթեր և մինչև 5 մլն. կանխիկ դրամ կամ դրան համարժեք կանխիկ արտարժույթ՝ բանկային տոմսերի, գանձատան թղթադրամների և մետաղադրամների տեսքով: Նշված գումարը գերազանցելու դեպքում արտահանումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ բանկային փոխանցումների միջոցով:

Ազատականացված են նաև կապիտալի շարժի հետ կապված գործառնությունները (ուղղակի և պորտֆելային ներդրումները, անշարժ գույքի նկատմամբ սեփականության և այլ իրավունքների ձեռք բերման վճարների փոխանցումները, երկարաժամկետ (180 օրվանից ավելի) ֆինանսական միջոցներով գործառնությունների իրականացումը): Սակայն Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի անկայունության, հանցավոր ճանապարհով ձեռքբերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, վիճակագրական կամ տնտեսական ռիսկերի կանխարգելման նպատակով կարող է սահմանել կապիտալի շարժի ու ֆինանսական արժութային գործարքների իրականացման կարգն ու պայմանները:

Վերը նշվածը վկայում է, որ արտաքին տնտեսական քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ պետական տնտեսական քաղաքականության հարակից ոլորտներում նույնպես Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ազատական ռեժիմներ և իր գործողություններով ընթանում է ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ:

2.4 Ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները ՀՀ-ում

Հայաստանը, բացի ԱՀԿ-ից, նաև Սննդի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO), Էպիզոտների միջազգային գրասենյակի (OIE) և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների անդամ է, ինչը թույլ է տալիս ոչ միայն օգտվել այդ կազմակերպությունների տեղեկատվական բազաներից, դրանց կողմից տրամադրվող խորհրդատվական և տեխնիկական աջակցության ծրագրերից, այլև ակտիվորեն մասնակցել այդ կազմակերպությունների գործունեությանը և այդ կազմակերպությունների համար հնարավորինս «տեսանելի դարձնել» Հայաստանի առանձնահատկություններն ու զարգացման ինստիտուցիոնալ կարիքները:

Լինելով ցամաքով շրջապատված երկիր և ունենալով սահմանափակ բնական պաշարներ, Հայաստանը, բնականաբար, համաշխարհային առևտրում ունի շատ փոքր մասնաբաժին և միջազգային շուկաների մասշտաբով մասնագիտացման շատ սահմանափակ հնարավորություններ, ինչն էլ արտացոլում է գլոբալ առևտրային ցանցերում Հայաստանի ոչ բավարար ինտեգրացումը: Այս իմաստով, ՀՀ ջանքերը, ուղղված համաշխարհային շուկաներին ինտեգրման գործընթացի ակտիվացմանը, չէին կարող «շրջանցել» տնտեսության և պետական քաղաքականության տարբեր ոլորտներում ինստիտուցիոնալ այն կառույցները և օրենսդրական այն միջավայրը, որոնք գոյություն ունեին երկրի անկախացման սկզբնական շրջանում:

Մասնավորապես, ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո ուժը կորցրած ճանաչվեց տեքստիլ ոլորտում առևտրի երկկողմանի համաձայնությունը, և այս ոլորտում առևտուրը հետագայում սկսեց իրականացվել առանց քանակական սահ-

մանափակումների կամ ստուգումների՝ «MFN» կարգավիճակի (ազատ առևտրի և համագործակցության համաձայնագրերի) հիման վրա: Նման համաձայնագրեր Հայաստանը կնքել է ոչ միայն ԱՊՀ, այլև մի շարք ոչ ԵՄ անդամ երկրների հետ:

Անասնաբուժական և ֆիտոսանիտարական խնդիրների կապակցությամբ Հայաստանը 1999-2000թթ. ընդունել է համապատասխան օրենսդրություն, որը ներառում է անասնաբուժական, պարենի ապահովության և բույսերի պաշտպանության հետ կապված հարաբերությունների կարգավորումը: Չնայած որ այս օրենսդրությունը պետական և տեղական, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների մակարդակներով սահմանում է որոշակի բարեփոխումներ, լիազորություններ և առաջնահերթություններ, սակայն գործնականում շատ քիչ քայլեր են կատարվել այս ուղղությամբ (անասնաբուժական և ֆիտոսանիտարական համապատասխան հանրապետական ծառայությունների ապահովման և լիարժեք գործունեության համար ոլորտին չի բավարարում ֆինանսավորումը, տարբեր նախարարություններ և գերատեսչություններ սննդի անվտանգության ապահովման բնագավառում ունեն տարբեր լիազորություններ, ինչը հանգեցնում է համակարգման բարոյությունների և այլն):

Կենդանիների ինքնության հաստատման համակարգի բացակայությունը, որը հնարավորություն է տալիս վերահսկել կենդանիների հիվանդությունները, սահմանափակ և վատ սարքավորված լաբորատորիաները, վատ վերապատրաստված աշխատակիցները և միջազգայնորեն չներդաշնակեցված սննդի ստանդարտները սահմանափակում են ոլորտի հետագա զարգացումները:

Այսինքն, արտաքին շուկաներ դուրս գալու համար ՀՀ-ին խոչընդոտում են ոչ միայն աշխարհաքաղաքական և բիզնես-միջավայրի հայտնի գործոնները, այլև այդ շուկաների և միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող պահանջներին, ստանդարտներին և չափորոշիչներին մեր հանրապետու-

քյան պետական քաղաքականության և մասնավոր սուբյեկտների անհամապատասխանությունը, ինչն էլ խիստ բացասական ազդեցություն է ունենում համաշխարհային շուկաներում այդ սուբյեկտների և ընդհանուր առմամբ ողջ երկրի մրցունակության վրա: Ուստի, նաև այս հանգամանքները ստիպում են ՀՀ իշխանություններին՝ շարունակաբար կատարելագործել ոլորտի օրենսդրությունը և ինստիտուցիոնալ միջավայրը, որի հետ կապված գործընթացները շարունակվում են նաև ներկայումս՝ առաջին հերթին կապված հանրապետության մաքսային համակարգի բարեփոխման հետ:

1992թ. ստեղծված մաքսային վարչությունը 2001թ. դարձավ անմիջապես կառավարության ենթակայության տակ գտնվող պետական մաքսային կոմիտե (ՊՄԿ) և այն պատասխանատու էր Հայաստանում մաքսային քաղաքականության կառավարման համար, և կազմակերպական տարբեր ձևափոխումներից (ՀՀ հարկային տեսչության հետ միացվելուց, նորից առանձնացվելուց, մաքսային ծառայություն դառնալուց) հետո, ի վերջո 2008 թվականին այն նորից միավորվեց ՀՀ հարկային ծառայության հետ և ստեղծվեց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն: Հանրապետությունում ձևավորվել է 6 տարածաշրջանային մաքսատուն և 11 մաքսակետ: Չնայած մաքսային անցակետերի առկայությանը, Ադրբեջանի և Թուրքիայի հետ սահմանները փակ են առևտրային երթևեկության համար:

Հայաստանը 1991 թվականից կիրառում է Ապրանքների դասակարգման ներդաշնակեցված համակարգ (HS) և ԱՀԿ-ին անդամակցության պայմաններին համապատասխան, ընդունել է նոր մաքսային օրենսգիրք, որն ուժի մեջ մտավ 2001թ. հունվարի 1-ին, իսկ 2003թ. դրանում կատարված փոփոխություններով հիմքեր դրվեցին հետմաքսագերծման ստուգումների համար: Սակայն մաքսային օրենսդրության կիրառելիության տեսանկյունից դեռևս գոյություն ունեն մի շարք խնդիրներ, այդ թվում՝

նաև ապրանքների մաքսային արժեքի գնահատման առումով: Բացի այդ, օրենսգիրքը չի պարունակում ոլորտի հետ կապված բոլոր կարգավորումները և գոյություն ունեն բազմաթիվ օրենքներ և որոշումներ, որոնք լրացնում են այս օրենսգրքի գործողության ամբողջ դաշտը:

Նշենք նաև, որ մաքսային ընթացակարգերի համար Հայաստանը կիրառում է Եզակի վարչական փաստաթուղթը (SAD), մաքսային հայտարարագրերի մշակման համակարգը (ASYCUDA), գոյություն ունի տեղեկատվության փոխանակման ու առևտրականների և այլ շահագրգիռ անձանց հետ մաքսային հարցերի քննարկման հանձնաժողով և հանրության համար մատչելի բազմալեզու ինտերնետային էջ, ի լրումն մաքսային տուրքերի՝ զանձվում են մի քանի մաքսային վճարներ՝ մաքսային ձևակերպումների համար և այլն:

Ինչ վերաբերում է հարկերին, ապա ներկայումս գոյություն չունի միասնական հարկային օրենսգիրք, որը կներառի Հայաստանում կիրառվող բոլոր հարկերը: Այս ոլորտի կարգավորման բնագավառում տարբեր օրենքների գոյությունը, ինչպես նաև դրանց հաճախակի փոփոխությունները բավականին նեղատիվ ազդեցություն են ունենում բնագավառի իրավական ապահովվածության և դրա հիմքերի հստակության վրա:

Երկրի հարկային եկամտի հիմնական աղբյուրը ավելացված արժեքի հարկն է (ԱԱՀ), որը ներդրվել է 1997թ.՝ 20% ստանդարտ դրույքաչափով և կիրառվում է տեղական ու ներմուծվող ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) վրա: Որոշ ապրանքատեսակների համար կիրառվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ, իսկ որոշակի ապրանքատեսակներ և ծառայություններ ազատված են ԱԱՀ-ից: Ներմուծվող այն ապրանքատեսակները, որոնք ենթական չեն ակցիզային հարկով հարկման և ազատված են մաքսատուրքից, ԱԱՀ-ով հարկվում են հարկային մարմինների կողմից՝ վաճառքի կամ սպառման պահին, իսկ մյուս դեպքերում ԱԱՀ-ն զանձում են մաքսային

մարմինները (իսկ ներկայումս այն իրականացվում է մեկ միասնական մարմնի՝ Պետական եկամուտների կոմիտեի կողմից):

ԱԱՀ-ի հաշվարկման և գանձման հետ կապված հերթական խոշոր փոփոխությունները կատարվեցին 2008թ. վերջին (որոնք ուժի մեջ պետք է մտնեն 2009թ. հունվարի 1-ից), համաձայն որի, ուժը կորցրած ճանաչվեց «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը (որով հատուկ ռեժիմ էր նախատեսված փոքր և միջին ձեռնարկությունների համար ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտահարկի գծով), ԱԱՀ-ի չհարկվող շենք բարձրացվեց մինչև տարեկան 58,35 մլն. դրամի և այլն, որոնք բավականին լարվածություն առաջացրին հարկատուների շրջանում, թեև պետական կառավարման արդյունավետության տեսանկյունից դրանք միանգամայն հիմնավորված էին:

Տեխնիկական կարգավորումների և արդյունաբերական արտադրանքների ստանդարտների առումով ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել են համապատասխան օրենքներ՝ «Ստանդարտացման մասին» (09.11.1999թ.), «Համապատասխանության գնահատման մասին» (26.05.2004թ.), «Չափումների միասնականության ապահովման մասին» (26.05.2004թ.) ՀՀ օրենքները և այլն, որոնք ապահովում են Հայաստանի օրենսդրության համադրելիությունը ԱՀԿ-ի Առևտրի տեխնիկական արգելքների համաձայնագրի սկզբունքներին և կարգավորման միջազգային նորմերին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և համապատասխանության գնահատման ոլորտներում ստանդարտացման, չափագրության և համապատասխանության գնահատման ազգային մարմինն է, որն, ի թիվս այլ լիազորությունների, իրականացնում է նաև ազգային ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի ստեղծումն ու ղեկավարումը, ազգային ստանդարտների և դասակարգիչների ընդունումը, միջազգային ստանդարտների կիրառումը, սերտիֆիկացման մարմինների և

փորձարկման լաբորատորիաների հավատարմագրումը, սերտիֆիկացման հարցերով բողոքների ու վեճերի կարգավորումը և այլն:

Ոլորտի կարգավորման աշխատանքների արյունավետ համակարգման նպատակով, ՀՀ կառավարության՝ 2002թ. դեկտեմբերի 19-ի N 2042-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչությունը վերակազմավորվեց, որի արդյունքում ստեղծվեցին ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման վարչությունը (նախարարության առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով), ՀՀ որակի տեսչությունը (նախարարության առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով), ՀՀ հավատարմագրման գործակալությունը (նախարարության առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով), Չափագիտության ազգային ինստիտուտը և Ստանդարտների ազգային ինստիտուտը (վերջինս 2007թ. հունվարի 1-ից ստացել է Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (CEN) «գործընկեր ստանդարտացման մարմնի» (PSB) կարգավիճակ):

Սերտիֆիկացնող մարմինների և ստուգող լաբորատորիաների հավաստագրման գործընթացը հիմնադրվել է 2000թ. որոշմամբ: Տեղական և օտարերկրյա մարմինները և լաբորատորիաները, համաձայն համապատասխանության գնահատման Ազգային Համակարգի, ունեն հավաստագրման հավասար իրավունքներ: Հայաստանը Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) և Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման Եվրասիական Խորհրդի (EASC) անդամ է: Ջանքեր են գործադրվում Հայաստանում ԵՄ համապատասխան ստանդարտների ներդրման գործընթացն ավարտելու և անկախ լաբորատորիաների ստեղծման ու լիցենզավորման համար, որտեղ հնարավոր է ստուգել օրենսդրության մեջ սահմանված տեխնիկական և անվտանգության պահանջները:

Օրենսդրությունն ապահովում է նաև գրական, գիտական և արվեստի գործերի (ներառյալ համակարգչային ծրագրերն ու տվյալների բազաները) արտոնագրերը, մոդելները, արդյունաբերական նախագծերը, ապրանքային նշանների և առևտրային ծառայությունների նշանների, ֆիրմային անվանումների, ինտեգրացված պատկերների, հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների և ծագման անվանման մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունքի պաշտպանությունը: 1993թ. Հայաստանը դարձավ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) անդամ:

ՀՀ արտաքին առևտրի հիմնական բնութագրերը համառոտ հետևյալներն են.

ա) ՀՀ արտաքին առևտրի քաղաքականությունը կարգավորվում է նորմատիվային և օրենսդրական ակտերով հաստատված ռեժիմներով, երկկողմ և բազմակողմ միջպետական և միջկառավարական համաձայնագրերով:

բ) ՀՀ-ի արտաքին առևտրի քաղաքականության նպատակներն են՝

- արտաքին առևտրի ազատականացումը,
- արտահանման և ներմուծման, սակագնային և ոչ սակագնային կարգավորման մեխանիզմների պարզեցումը,
- արտադրողների շահերի պաշտպանումը, հայրենական արտադրանքի արտահանման խթանումը,
- սպառողների շահերի պաշտպանության նպատակով՝ ներմուծվող ապրանքի որակը ապահովելու համար անցկացվող միջոցառումներին աջակցումը,
- արտաքին տնտեսական կապերի զարգացմանն աջակցումը:

գ) ՀՀ առևտրատնտեսական օրենսդրությունը լիովին համապատասխանում է ԱՀԿ-ի սկզբունքներին և օրենքներին: 2005թ. ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է ներկայացուցչություն, և նշանակվել է ՀՀ մշտական ներկայացուցիչ ԱՀԿ-ում:

դ) ՀՀ-ն հանդիսանալով 1994թ. ապրիլի 15-ի ԱՊՀ ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագրի կողմերից մեկը, ԱՊՀ պետությունների հետ առևտրում ղեկավարվում է ստորագրված երկկողմ ազատ առևտրի մասին համաձայնագրերով: ՀՀ-ի հետ ազատ առևտրի մասին համաձայնագրեր են ստորագրել Ռուսաստանի Դաշնությունը, Ոսկրահնան, Բելառուսը, Թուրքմենստանը, Վրաստանը, Մոլդովան, Գրդգստանը, Դազախստանը և Տաջիկստանը: Այդ համաձայնագրերով նախատեսված են փոխադարձ չկիրառվող մաքսատուրքերը և հարկերը:

ե) Այն անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները, որոնք զբաղվում են արտաքին առևտրի գործունեությամբ, պետք է գրանցվեն այն մաքսային մարմիններում, որտեղ կատարվում են իրենց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպումները: Մաքսային հսկողությունն ապահովելու համար մաքսային ծառայությունների կողմից պահանջվում են ՀՀ կառավարության 15.05.2001թ. N413 որոշմամբ հաստատված համապատասխան փաստաթղթերը:

զ) Ապրանքները և տրանսպորտային միջոցները ՀՀ մաքսային սահմանով կարող են տեղափոխվել ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված 15 ռեժիմներով: Ներմուծող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող ապրանքները մաքսային կետում ենթարկվում են նախնական արտաքին զննման, որից հետո համապատասխան փաստաթղթերի հիման վրա լրացվում է փոխադրման հայտարարագիր, որով ապրանքները և տրանսպորտային միջոցներն ուղարկվում են այն մաքսային մարմին, որտեղ պետք է կատարվեն վերջիններիս մաքսային ձևակերպումները:

Ապրանքները և տրանսպորտային միջոցները բաց են թողնվում փաստաթղթային ձևակերպումների ավարտից և համապատասխան մաքսային վճարումներից հետո: Մաքսային վճարումները կարող են կատարվել նաև տվյալ մաքսատան

տարածքում գտնվող բանկերի մասնաճյուղերի միջոցով: Անհրաժեշտության դեպքում, ՀՀ պետական մարմինների կողմից կարող է կատարվել անասնաբուժական, սանհիտարական և այլ տիպի հսկողություն:

ե) ՀՀ-ում արտաքին տնտեսական գործունեությունը չի լիցենզավորվում, իսկ ՀՀ ներմուծվող ապրանքներն էլ չեն քվոտավորվում: ՀՀ տարածքով մաքսային ռեժիմներով տեղափոխման ժամանակ արգելված ապրանքների ցանկը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից (վերջին անգամ այն կատարվել է 2000թ. դեկտեմբերի 31-ի N 902 որոշմամբ՝ ի լրումն 29.09.01թ. N 913 որոշման): ՀՀ մաքսային սահմանով անցնող ապրանքների ծագման երկիրը որոշվում է համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի նորմերի՝ ԱՀԿ-ի կողմից երաշխավորված մեթոդաբանությանը համապատասխան:

ը) ՀՀ-ում նախաառաքումային ստուգում դեռևս չի իրականացվում գործնականում, թեև դրա համար անհրաժեշտ օրենսդրական բազան արդեն ստեղծված է: Որոշ ապրանքների բացթողումը մաքսային մարմինների կողմից իրականացվում է ստանդարտներին և տեխնիկական պահանջներին համապատասխանելիության մասին եզրակացության առկայության դեպքում, որը տրվում է անասնաբուժական, ֆիտոսանհիտարական և բնապահպանական հսկողության ավարտից հետո:

թ) Ներմուծվող ապրանքներից ավելացված արժեքի հարկը հաշվարկվում և գանձվում է ՀՀ սահմանի վրա՝ մաքսային ծառայությունների կողմից, իսկ ՀՀ մաքսային սահմաններից ապրանքների արտահանման համար սահմանած է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ:

ժ) Ապրանքի մաքսային արժեքը որոշվում է ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն, որը համահունչ է ապրանքի մաքսային արժեքի որոշման ԱՀԿ-ի համաձայնագրի դրույթներին:

Սպառողական ապրանքների ներմուծման ժամանակ գործում են մաքսային տուրքեր՝ 0% և 10% դրույքաչափերը: 0%

դրույքաչափը սահմանված է այն ապրանքների համար, որոնք չեն համարվում վերջնական սպառման ապրանքներ: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի՝ բենզինի, դիզելային, ծխախոտի և ծխախոտային արտադրանքի համար ՀՀ ներմուծման ժամանակ սահմանված են հաստատագրված վճարներ: Քաղաքացիներին քույրատրվում է տարին երկու անգամ ՀՀ ներմուծել և ՀՀ-ից արտահանել ոչ ավել քան 50 կգ ուղեկցող բեռ՝ ոչ ավելի, քան 300 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի:

Ժա) Երկկողմ միջազգային պայմանագրերով, ինչպես նաև ՀՀ-ի միջազգային պարտավորություններով ՀՀ-ից ապրանքների արտահանման ժամանակ գործում են ոչ սակագնային որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, ՀՀ-ից վայրի կենդանիների և բույսերի (ԱԱ ԱՏԳ ծածկագիր 010290350,0601-060499900) արտահանումը (ներմուծումը) կատարվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված լիցենզիայի հիման վրա, իոնացված ճառագայթների աղբյուրների արտահանումը (ներմուծումը), որոնք ունեն կարճ երաշխիքային ժամկետ և օգտագործվում են առողջապահության ոլորտում, կատարվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված եզրակացության հիման վրա, դեղորայքի և դեղորայքային միջոցների արտահանումը (ներմուծումը) կատարվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված հավաստագրի հիման վրա, փայտանյութի արտահանումը ՀՀ-ից կատարվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրված եզրակացության հիման վրա, մշակութային արժեքների արտահանումը ՀՀ-ից կարգավորվում է «Մշակութային արժեքների ներմուծման և արտահանման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 26.02.2004թ. N 245 որոշմամբ: Բացի այդ, ՀՀ-ում իրականացվում է երկակի նշանակություն ունեցող ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման նկատմամբ հսկողություն (համաձայն ստանձնած միջազգային պարտավորությունների), ինչպես նաև ՀՀ կառավարության որոշմամբ հաս-

տատված է այն ապրանքների ցանկը, որոնք արգելված են ՀՀ տարածքով մաքսային ընդհանուր ռեժիմներով տեղափոխման համար:

ժբ) ՀՀ-ից ապրանքների արտահանման ժամանակ սակագնային կարգավորում չի իրականացվում, մասնավորապես՝ սահմանված չեն մաքսային տուրքեր, ակցիզային հարկեր և ԱԱՀ, իսկ ապրանքների արտահանումն էլ չի սուբսիդավորվում:

2.5 ՀՀ-ԵՄ գործընկերության և համագործակցության համաձայնագիրը և ՀՀ-ԵՄ միջև հարաբերությունները

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունները, այդ թվում՝ առևտրատնտեսական, կարգավորվում են 1996թ. ապրիլի 22-ին ՀՀ և Եվրոպական համայնքների ու դրա անդամ պետությունների միջև կնքված և 1999թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած գործընկերության և համագործակցության համաձայնագրով (ԳՀՀ), որն ընդգրկում է համագործակցության բոլոր ոլորտները (բացի պաշտպանությունից) և հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները՝

- համապատասխան հիմքեր ապահովել կողմերի միջև քաղաքական երկխոսության համար՝ նպատակ ունենալով զարգացնել քաղաքական կապերը,
- աջակցել Հայաստանի Հանրապետությանը՝ երկրում ժողովրդավարությունն ամրապնդելու, տնտեսությունը զարգացնելու և շուկայական տնտեսությանն անցումն ավարտելու հարցում,
- ամրապնդել օրենքի իշխանությունը, ներառյալ իրավական համակարգի բարեփոխումները,
- նպաստել կողմերի միջև առևտրի զարգացմանը, ներդրումների ակտիվացմանը և ներդաշնակ տնտեսական կապերի ձևավորմանը,

- նպաստել մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության պաշտպանությանը,
- հիմք ստեղծել օրենսդրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար:

Եվրոպական միության ընդլայնումն էլ ավելի ամրապնդեց Հայաստանի և ԵՄ միջև քաղաքական և տնտեսական փոխկապվածությունը: Դա հնարավորություն է ընձեռում ԵՄ-ին և Հայաստանին զարգացնել համագործակցության շրջանակներից դուրս եկող ավելի սերտ հարաբերություններ՝ ներառելով նշանակալի չափով տնտեսական ինտեգրացիան և քաղաքական համագործակցության խորացումը: Դրանք արտացոլում գտան Եվրամիության «Եվրոպական հարևանության քաղաքականության» ծրագրում (ԵՀԶ), որը բավականին հավակնոտ նպատակներ է սահմանում՝ հիմնվելով ընդհանուր արժեքների նկատմամբ կողմերի մվիրվածության և քաղաքական, տնտեսական, սոցիալական ու ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունավետ իրականացման վրա:

Եվրոպական միության հետ հարաբերությունների խորացման հաջորդ փուլը դարձավ 2004թ. հունիսին Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ընդգրկումը, որի արդյունքում «գործընկեր և համագործակցող» կարգավիճակ ունեցող երկրից Հայաստանը դարձավ ԵՄ հարևան երկիր, ինչը ՀՀ-ԵՄ հարաբերությունները տեղափոխեց որակական նոր մակարդակի, իսկ 2006թ. նոյեմբերի 14-ին, բանակցությունների 3 փուլերի արդյունքում, Բրյուսելում հաստատվեց և ստորագրվեց ՀՀ-ԵՄ համատեղ Գործողությունների ծրագիրը (ԳԾ):

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ Գործողությունների ծրագրի իրականացումից Հայաստանն ակնկալում է, որ ամուր հիմքեր կստեղծվեն հետա-

գա տնտեսական ինտեգրման համար՝ հիմնվելով տնտեսության և առևտրի բնագավառներում այնպիսի կանոնների ու դրույթների ընդունման և կիրառման վրա, որոնք կխթանեն առևտուրը, ներդրումները և տնտեսական աճը: ԳԾ-ն կօգնի մշակել և իրականացնել այնպիսի քաղաքականություն և միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն տնտեսական աճին, սոցիալական հարաբերությունների ներդաշնակեցմանը, աղքատության նվազեցմանը և շրջակա միջավայրի պահպանությանը՝ խթանելով կայուն, երկարաժամկետ զարգացումը, ինչպես նաև էականորեն կնպաստի ԵՄ չափանիշներին ՀՀ օրենսդրության, իրավական նորմերի և ստանդարտների համապատասխանեցմանը:

ԵՀԶ-ի նպատակների իրականացման առումով մշակված և հաստատված Գործողությունների ծրագիրը, որն ինտեգրացիոն գործընթացի առաջին քայլը կարելի է համարել, ըստ էության, քաղաքական փաստաթուղթ է, որտեղ ուրվագծված են Հայաստանի և ԵՄ միջև համագործակցության ռազմավարական նպատակները: Այն նախատեսված է հինգ տարի ժամանակահատվածի համար, որի իրականացումը կնպաստի ԳՀՀ-ի դրույթների իրականացմանը, նոր բնագավառներում կապերի ձևավորմանը և կիրախուսի ու կաջակցի եվրոպական տնտեսական և սոցիալական հիմնարկներում Հայաստանի հետագա ինտեգրմանը:

Նշենք նաև, որ ԵՄ կողմից ՀՀ-ին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու նպատակով, 2005թ. փետրվարին ՀՀ-ն պաշտոնապես դիմել է այդ կառույցին՝ ներկայացնելով անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, և եվրոպական կողմը, համաձայն սահմանված ընթացակարգերի, ներկայումս քննարկում է ՀՀ-ին շուկայական տնտեսությամբ երկրի կարգավիճակ շնորհելու հարցը:

Իսկ մինչ այդ, ԳՀՀ-ի միջոցով, որը վերացնում է նաև առևտրային քվոտաները և հնարավորություններ է ընձեռում մտավոր, արդյունաբերական և առևտրային իրավունքի պաշտպանության համար, Կողմերը համաձայնվել են միմյանց տալ

Ամենապատասխանատու (MFN) կարգավիճակ և Հայաստանն օգտվում է ԵՄ-ի Նախապատվությունների ընդհանրացված համակարգից (GSP):

ԵՀԶ-ն և Գործողությունների ծրագիրը գործընկերության նոր հեռանկարներ է բացում ՀՀ-ի համար, մասնավորապես դրանց իրականացումը կարող է ապահովել՝

- համագործակցությունից դեպի առավել բարձր մակարդակի ինտեգրացիայի հնարավորություն՝ ներառյալ ԵՄ ներքին շուկայում և առանցքային ուղղություններով ԵՄ քաղաքականությունում և ծրագրերում Հայաստանի մասնակցության հնարավորությունը,
- քաղաքական համագործակցության շրջանակների ընդլայնում և խորացում՝ քաղաքական երկխոսության համար մեխանիզմների հետագա զարգացման միջոցով,
- ԵՄ շարունակական ջանքերը՝ աջակցելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը՝ օգտվելով ԵՄ համար մատչելի գործիքներից,
- առևտրային և տնտեսական հարաբերությունների խորացում, տնտեսական օրենսդրության ներդաշնակեցման հնարավորության ընձեռում, միմյանց համար տնտեսությունների բացում, առևտրային ոչ տարիֆային արգելքների շարունակական կրճատում, ինչը կնպաստի ներդրումների, արտահանման և տնտեսության աճին,
- հավելյալ ֆինանսական աջակցություն. ԵՄ ֆինանսական աջակցությունը Հայաստանին նախատեսված կլինի տվյալ փաստաթղթում նշված գործողությունների իրականացմանն աջակցելու համար: Եվրոպական հանձնաժողովը նույնպես առաջարկում է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (European Neighbourhood and Partnership Instrument – ENPI), որը կներառի ԵՄ ֆինանսական աջակցության հիմնական մասը և կօգտագործվի

նաև անդրսահմանային և տարազգային համագործակցության նպատակների համար,

- տնտեսական, մշակութային, կրթական, բնապահպանական, տեխնիկական և գիտական կապերին նպաստող Եվրահամայնքի որոշ ծրագրերի աստիճանաբար բացման և (կամ) դրանց շրջանակներում ավելի լայն մասնակցության հնարավորություն,
- աջակցություն, ներառյալ տեխնիկական և «թվինիկ» ծրագրերի միջոցով՝ ԵՄ նորմերին և ստանդարտներին համապատասխանելու հարցում, օրենսդրական ներդաշնակության ապահովման համար նպատակային խորհրդատվություն և օժանդակություն՝ համապատասխան մեխանիզմների միջոցով,
- ԵՄ ընդհանուր օրենսդրությանը համապատասխան՝ ԵՄ-ի և Հայաստանի միջև մարդկանց տեղաշարժին և մուտքի վիզային առնչվող հարցերի շուրջ երկխոսության սկսում և այլն:

Գործողությունների ծրագիրը սահմանում է Գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում ընդգրկված և դրանից դուրս գոյություն ունեցող առաջնայնությունների համապարփակ շրջանակ: Այդ առաջնայնություններից, որոնք, իհարկե, բոլորն էլ կարևոր են, արտահանման աճի խրախուսման և տնտեսության մասնագիտացման տեսանկյունից հատկանշական պետք է համարել հետևյալները:

1. Խթանել հետագա տնտեսական զարգացումը, ավելացնել ջանքերն աղքատության նվազեցման և սոցիալական ներդաշնակեցման հարցերում՝ այդպիսով ներդրում բերելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանը: Այս առումով անհրաժեշտ է իրականացնել հատուկ գործողություններ, այդ թվում՝

- պահպանել մակրոտնտեսական կայունությունը՝ ողջամիտ դրամավարկային և ֆիսկալ քաղաքականության իրականացման և միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության միջոցով,
- շարունակել հարկային պարտքերի կրճատումը,
- շարունակել իրականացնել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, որը կծառայի որպես ուղենշային քաղաքականության շրջանակ աղքատության կրճատմանը միտված միջնաժամկետ տնտեսական աճի և հարստության հավասար բաշխման համար՝ երկրի կարիքներին համապատասխան,
- շարունակել բարելավել գյուղատնտեսությունը, գյուղական ենթակառուցվածքները, ջրային պաշարները և այդ պաշարների կառավարումը, սոցիալական պաշտպանությունը և կրթությունը՝ որպես աղքատության դեմ հետագա պայքարի միջոց,
- շարունակել բարեփոխումներն աշխատանքի և սոցիալական անվտանգության ու սոցիալական պաշտպանության բնագավառներում,
- ամրապնդել հանրային ծառայությունների, աշխատանքի տեսչության և սոցիալական ծառայությունների գործակալությունների վարչական կարողությունները, մասնավորապես՝ տարածքային մակարդակով,
- շարունակել երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում ծրագրերի իրականացումը,
- շարունակել բարեփոխումներն առողջապահության ոլորտում,
- շարունակել ջանքերը կրթության, միջնակարգ մասնագիտական ուսուցման, ինչպես նաև շարունակական կրթության ոլորտներում բարեփոխումների իրականացման

ուղղությամբ (խթանել ԱՀՌ-Ծ հենասյուններից մեկի՝ մարդկային ռեսուրսների զարգացումը),

- տեղական մակարդակով վարչական գրանցումների կատարելագործման միջոցով բարելավել վիճակագրական տվյալները՝ ապահովելու համար ԱՀՌ-Ծ-ի ավելի արդյունավետ դիտանցումը,
- վարչական կառույցների և ընթացակարգերի ամրապնդմամբ ապահովել բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորումը և շահագրգիռ մարմինների գործունեության համակարգումը և այլն:

2. Ներդրումային միջավայրի հետագա բարելավում և մասնավոր հատվածի զարգացման միջոցով տնտեսական աճի ամրապնդում, որի նպատակով անհրաժեշտ է՝

- մշակել և իրականացնել գործարար միջավայրի բարելավման համապարփակ ծրագիր, որով, մասնավորապես, կբարելավվեն բիզնես հիմնադրելու, աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու, սեփականություն գրանցելու, վարկեր ստանալու, ներդրողներին պաշտպանելու, պայմանագրեր կատարելու և բիզնեսը փակելու պայմանները,
- շարունակել հարկային վարչարարության արդիականացումը և պարզեցումը, բարելավել հարկային համակարգի ներդաշնակությունը և վստահելիությունը, նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և ստվերային տնտեսությունը,
- սահմանել անհրաժեշտ վարչական կառուցվածքներ և ընթացակարգեր, ներառյալ ֆինանսական վերահսկողության ռազմավարությունը, ատոլիտի և հետաքննության մերուկները, համագործակցությունը հարկատուների հետ՝ հարկերի համապատասխանելիությունը և հարկահավաքման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- շարունակել աշխատանքները ՀՀ և ԵՄ անդամ պետությունների միջև կրկնակի հարկումից խուսափելու մասին

համաձայնագրերի կնքման գործընթացն ավարտին հասցնելու ուղղությամբ՝ ներառյալ միջազգային չափանիշներից համապատասխան թափանցիկության բարելավումը և տեղեկատվության փոխանակումը,

- ամրապնդել մաքսային վարչարարության ընդհանուր վարչական կարողությունները, մասնավորապես՝ մաքսային կանոնների, ընթացակարգերի և տարիֆների թափանցիկությունն ավելացնելու, մաքսային գնահատման կանոնների ճշգրիտ կիրառումն ապահովելու, ռիսկի վրա հիմնված մաքսային վերահսկողության և հետբացթողումային սկզբունքները կյանքի կոչելու համար,
- մշակել և ներդնել մաքսային էթիկայի կանոններ և վարել համապատասխան քաղաքականություն,
- ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն արտահանման և ներմուծման կանոնների ու կանոնակարգերի վերաբերյալ կանոնավոր խորհրդակցությունների անցկացումը և տեղեկատվության փոխանակումը գործարար շրջանակների միջև և այլն:

3. Ավելացնել ջանքերը տարածաշրջանային համագործակցության բնագավառում, այդ թվում՝

- շարունակել ջանքերը համագործակցության միջոցով հարևան երկրների հետ տարածաշրջանային և հարակից այլ խնդիրների կարգավորման ուղղությամբ,
- ընդլայնել մասնակցությունը Հարավային Կովկասի տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններում, մասնավորապես՝ շրջակա միջավայրի, ջրային ռեսուրսների կառավարման, էներգետիկայի, կրթության, սահմանների կառավարման, տրանսպորտի և տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև խորհրդարանական կապերի ոլորտներում՝ աջակցելու նշված բնագավառներում համագործակցությանը,

- շարունակել համագործակցությունն էներգետիկայի և տրանսպորտի բնագավառում՝ ԵՄ, Սևծովյան և Կասպյան ավազանների երկրների և դրանց հարևանների նախաձեռնության շրջանակներում,
- ամրապնդել Հայաստանի մասնակցությունը Հարավային Կովկասում տարածաշրջանային իրավապահպանության բնագավառի համագործակցության նախաձեռնություններում, ներառյալ ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության նախաձեռնությունները, ինչպիսին է օրինակ SCAD-ը (Հարավային Կովկասի թմրանյութերի վերաբերյալ գործողությունների ծրագիր),
- աջակցել Բնապահպանության կովկասյան տարածաշրջանային կենտրոնին՝ տարածաշրջանի կառավարական և հասարակական կազմակերպությունների համագործակցության զարգացման գործում, ինչպես նաև ակտիվացնել մասնակցությունը կենտրոնի աշխատանքներում,
- ընդլայնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանում, որը կներառի ՄՄՏՀ-ի հետ տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը, ինչպես նաև ակտիվացնել հարաբերությունները Բալթյան տարածաշրջանի հետ,
- ընդլայնել հարավկովկասյան երեք երկրների միջև երիտասարդների փոխանակումը և համագործակցությունը, ներառյալ հատկապես ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով և այլն:

Այս առաջնայնությունների ուղղությամբ առաջընթացին պետք է հետևեն Գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում ստեղծված մարմինները, իսկ Եվրոպական հանձնաժողովը կպատրաստի միջնաժամկետ գեկոյց՝ արձանագրված առաջընթացի վերաբերյալ՝ տալով նաև համապատասխան գնահատականներ: Այդ գնահատականների

հիման վրա ԵՄ-ն Հայաստանի հետ միասին կվերանայի Գործողությունների ծրագրի բովանդակությունը և որոշում կկայացնի դրա արդիականացման և նորացման վերաբերյալ: Հինգ տարվա ժամկետի ավարտին մոտ՝ Հանձնաժողովը կհրապարակի երկրորդ զեկույցը, որի հիման վրա կարող է որոշում կայացվել երկկողմ հարաբերությունների զարգացման հետագա քայլի, այդ թվում՝ նոր խորացված պայմանագրային կապեր հաստատելու հնարավորության վերաբերյալ:

Բացի վերը նշված ԳՀՀ-ի ռազմավարական նպատակներից, Գործողությունների ծրագրով նախատեսված են նաև մի շարք կոնկրետ միջոցառումներ, ըստ հետևյալ հիմնական ոլորտների.

1) Առևտրին առնչվող հարցեր, շուկայական և կարգավորող դաշտի բարեփոխումներ, այդ թվում՝

- խթանել ԵՄ-Հայաստան երկկողմ առևտուրը՝ ապահովելով ԳՀՀ-ում ամրագրված Հայաստանի բոլոր պարտավորությունների լիարժեք կատարումը,
- վերահսկել համապատասխանելիությունը ԱՀԿ-ի կանոնների՝ ԱՀԿ գործող կանոնների և ընթացակարգերի շրջանակներում,
- խթանել աշխատակիցների վերապատրաստումը և կարողությունների ամրապնդումը միջազգային առևտրական հարաբերությունների ոլորտում,
- միջոցներ ձեռնարկել՝ բարելավելու համար Արտոնությունների ընդհանուր համակարգից (GSP) օգուտները և այդպիսով բարելավել Հայաստանի արտահանումը,
- ԵՄ և Հայաստանը համատեղ կերպով կքննեն երկկողմ առևտրի հետագա ընդլայնման հնարավոր տարբերակները՝ ներառյալ ԵՄ-ի և Հայաստանի միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքման հնարավորությունը:

2) Մաքսային ոլորտ, այդ թվում՝

- շարունակել ներդաշնակեցնել և պարզեցնել մաքսային օրենսդրությունը՝ ներառյալ մաքսային ոլորտի ենթաօրենսդրական դաշտը,
- ամրապնդել մաքսային վերահսկողությունը՝ չարտոնագրված կամ կեղծ ապրանքների ներմուծման և արտահանման հարցում,
- ուժեղացնել համագործակցությունը մաքսային և այլ (ներառյալ սահմանակետերում տեղակայված) գործակալությունների միջև,
- զարգացնել ԵՄ-Հայաստան համագործակցությունն ընտրողականության վրա հիմնված մաքսային զննման ոլորտում, ինչը կապահովի ներմուծված, արտահանված և տարանցիկ ապրանքների ապահովությունը և անվտանգությունը,
- զարգացնել ԵՄ-Հայաստան համագործակցությունը՝ ԵՄ լավագույն փորձի հիման վրա ներմուծողների, արտահանողների և փոխադրողների իդենտիֆիկացման չափանիշները սահմանելու նպատակով:

3) Չափանիշներ, տեխնիկական կանոններ և համապատասխանելիության գնահատման ընթացակարգեր (ԵՄ-ի ներդաշնակեցված ոլորտներ), այդ թվում՝

- անցում դեպի չափանիշների, տեխնիկական կանոնների և համապատասխանելիության գնահատման ընթացակարգերի (ԵՄ-ի ներդաշնակեցված ոլորտներ) ԵՄ և միջազգային օրենսդրական ու վարչական պրակտիկային,
- արտադրողների և արտահանողների հետ խորհրդակցությունների միջոցով առաջնային արդյունաբերական ոլորտների համատեղ որոշում՝ օրենսդրական ինտեգրման նպատակով և այն հնարավորության ապահովմամբ, որ բոլոր պահանջվող պայմանների ընդունման և իրականացման դեպքում դրանք կներառվեն «Արդյունաբերական

ապրանքների համապատասխանելիության գնահատման և ճանաչման մասին համաձայնագրում» (ACAA),

- շարունակել ջանքերը ԵՄ համապատասխան չափանիշները հայերեն թարգմանելու գործընթացն ավարտին հասցնելու համար,
- ամրապնդել ստանդարտացման, հավատարմագրման, համապատասխանելիության գնահատման, չափագիտության և շուկայի վերահսկողության պատասխանատու ինստիտուտները, հնարավորինս ինտեգրել դրանք ԵՄ և միջազգային կառույցներին,
- պարզեցնել արդյունաբերական ապրանքների համապատասխանելիության գնահատման ընթացակարգերը՝ նպատակ ունենալով խուսափել ցածր ռիսկային ապրանքների հարկադրական սերտիֆիկացումից և կրկնվող փորձաքննությունից,
- ստեղծել տվյալ ոլորտում շուկայի վերահսկման ինստիտուտներ և համապատասխան կարողություններ՝ հիմնված ԵՄ անդամ պետությունների լավագույն փորձի վրա,
- ուսումնասիրել չափանիշների վերաբերյալ ԵՄ տեղեկատվական քաղաքացի անվճար օգտվելու հնարավորությունները:
4) Սահմանափակումներ և ռաջիոնալիզացված վարչարարություն (ԵՄ չներդաշնակեցված ոլորտներ), այդ թվում՝
 - ներկրված ապրանքների նկատմամբ խտրականությունը և սահմանափակումները հայտնաբերելու և աստիճանաբար վերացնելու նպատակով վերլուծել համապատասխան օրենսդրությունը և վարչական կանոնակարգերը,
 - տեղեկատվության հոսքը և տնտեսվարող սուբյեկտների հետ համագործակցությունը հեշտացնելու համար նշանակել կենտրոնական համակարգող:
- 5) Սանիտարական և ֆիտոսանիտարական հարցեր, այդ թվում՝

- բարելավել սննդի անվտանգությունը սպառողների համար և սանիտարական ու ֆիտոսանիտարական ոլորտների բարեփոխումների և արդիականացման միջոցով հեշտացնել առևտուրը,
- շարունակել աշխատանքները սանիտարական ու ֆիտոսանիտարական միջոցառումների կիրառման մասով ԱՀԿ համաձայնագրի իրականացման ուղղությամբ և ակտիվորեն մասնակցել համապատասխան միջազգային մարմիններում,
- տեղեկատվություն փոխանակել և ուսումնասիրել ԵՄ-ում կիրառվող փորձի հետ համապատասխանության հնարավոր բնագավառները՝ սանիտարական ու ֆիտոսանիտարական ոլորտում (օրինակ՝ քաղաքականություն, օրենսդրություն, ինստիտուտների, ներառյալ՝ լաբորատորիաների ամրապնդում, փորձի կիրառում և այլն),
- մշակել առաջնային միջոցառումների ցանկ միջնաժամկետ կտրվածքով, որով պետք է իրականացվի աստիճանական համապատասխանեցումը ԵՄ սննդի անվտանգության ընդհանուր սկզբունքների և պահանջների հետ (կենդանիների և բույսերի նույնականացման և վերահսկելիության համակարգերը, հիգիենան սննդի արտադրության մեջ), այս ոլորտում իրականացնել Հայաստանի օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին,
- կիրառել կենդանիների առողջությանը և կենդանածին ապրանքների արտադրությանն առնչվող ԵՄ պահանջները (օրինակ՝ այն ընթացակարգերի մասով, որոնց պետք է հետևել, երբ ԵՄ երկրներ ներմուծվում են կենդանիներ կամ կենդանածին ապրանքներ),
- աշխատանքներ տանել ԵՄ Սննդի և սնուցման արագ արձագանքման համակարգի հետ փոխկապակցվածություն ապահովելու ուղղությամբ:

6) Ընկերություններ հիմնելու իրավունք և ընկերությունների մասին օրենսդրություն, այդ թվում՝

- ԳՀՀ-ի IV մասի, երկրորդ գլխի (ընկերությունների հիմնադրման և գործունեության վրա ազդող պայմաններ) և VI մասի հոդված 45 (ներդրումների խթանում և պաշտպանություն) լրիվ իրականացում,
- ապահովել այն սկզբունքի կիրառումը, որով ընկերությունների հիմնադրման պայմաններն ավելի խիստ չպետք է լինեն, քան ԳՀՀ-ի կնքումից առաջ էին,
- ուժեղացնել «Հայկական զարգացման գործակալության» վարչական կարողությունները և ապահովել դրա արդյունավետ գործունեությունը,
- համապատասխանեցնել Ընկերությունների մասին օրենքի, հաշվապահության և աուդիտի հիմնական սկզբունքները ԵՄ և միջազգային չափանիշներին և ապահովել դրանց արդյունավետ իրականացումը,
- բարելավել Ընկերությունների մասին օրենքի և դրան առնչվող ներդրումային միջավայրի վերահսկողության համար պատասխանատու վարչական և դատաիրավական մարմինների կայունությունը և կանխատեսելիությունը,
- ապահովել ձեռնարկությունների պետական գրանցման արդյունավետ իրականացումը և պետական պաշտոնական տեղեկագրում հրապարակել ոլորչակի տեղեկատվություն, մասնավորապես՝ ընկերությունների մասին կազմակերպչական և ֆինանսական մանրամասնությունները՝ ԵՄ-ում կիրառվող ընթացակարգերին համահունչ,
- արդիականացնել կորպորատիվ կառավարման մասին օրենսդրությունը և ապահովել դրա արդյունավետ իրականացումը,
- զարգացնել կորպորատիվ բացահայտման և աուդիտի չափանիշները,

- բարելավել սնանկության մասին օրենսդրությունը և ապահովել դրա արդյունավետ կիրառումը, մասնավորապես՝ գործընթացի թափանցիկության բարձրացման միջոցով:

7) Ծառայություններ, այդ թվում՝

- ծառայությունների մատուցմանն առնչվող արգելքները վեր հանելու և դրանք վերացնելու նպատակով հիմնովին վերանայել ՀՀ ազգային օրենսդրությունը,
- հիմնել համապատասխան վարչական կառույցներ և ապահովել դրանց արդյունավետ իրականացումը՝ ներառյալ կենտրոնական համակարգող մարմինը, որը պետք է դյուրացնի ծառայությունների մատուցումը,
- կատարել ԱՄՀ-ի ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի (FSAP) առաջարկությունները (հաստատված 2005թ. մայիսի 25-ին),
- զարգացնել ֆինանսական ծառայությունների և վերահսկողության ողջամիտ կարգավորիչ դաշտ՝ ԵՄ-ում գոյություն ունեցող օրինակին համապատասխան,
- միջազգային ճանաչված չափանիշներին համապատասխան, հիմնել անկախ ֆինանսական վերահսկիչ մարմին և ապահովել դրա արդյունավետ գործունեությունը,
- զարգացնել ապահովագրական շուկան՝ եվրոպական չափանիշներին համապատասխան:

8) Կապիտալի տեղաշարժ և ընթացիկ վճարներ, անձանց,

ներառյալ աշխատավորների տեղաշարժը, այդ թվում՝

- ապահովել ընկերություններում արված ուղիղ և ըստ ընկերությունների հիմնադրման մասին հոդվածների՝ այլ ներդրումներին առնչվող կապիտալի ազատ տեղաշարժը,
- ապահովել օտարերկրյա վերոհիշյալ ներդրումների պաշտպանությունը,
- ապահովել այն սկզբունքի կիրառումը, որով ընկերությունների հիմնադրման պայմաններն ավելի խիստ չպետք է լինեն, քան Գ-ՀՀ-ի կնքումից առաջ էին՝ վերացնելով քաղա-

քացիության վրա հիմնված ամեն տեսակ խտրական միջոցառումները (մասնավորապես՝ աշխատանքային պայմաններին, վարձատրմանը և արձակուրդներին վերաբերող խտրականությունները), որոնք ազդում են գաղթական աշխատողների վրա:

9) Հարկային ոլորտ, այդ թվում՝

- շարունակել իրականացնել ՄԱՀ-ի առաջարկները, ներառյալ միասնական հարկային օրենսգրքի ընդունումը,
- զարգացնել Հայաստանի հարկային համակարգը՝ ԵՄ-ի և միջազգային ընդհանուր սկզբունքներին համահունչ,
- սկսել երկխոսություն ԵՄ «Բիզնեսի հարկման էթիկայի օրենսգրքի» սկզբունքների վերաբերյալ՝ նպատակ ունենալով Հայաստանի համար ապահովել արդար պայմաններ՝ ԵՄ միասնական շուկայում նրա ինտեգրման ընթացքում:

10) Մրցակցային քաղաքականություն, հակամենաշնորհալին քաղաքականություն և պետական օգնության վերահսկում, այդ թվում՝

- ուսումնասիրել լիակատար թափանցիկության հաստատման հնարավորությունը Հայաստանում տրվող պետական օգնության ոլորտում, մասնավորապես՝ կազմել (ա) օգնություն տրամադրողների ամբողջական ցուցակը, (բ) ստեղծել համապետական մեխանիզմներ՝ Հայաստանում պետական օգնության մասին տեղեկատվությունը մեկ տեղում կենտրոնացնելու համար, նպատակ ունենալով կազմել տարեկան հաշվետվություններ օգնության ծավալի, տեսակի և շահառուների մասին,
- ընդլայնել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի վարչական կարողությունները և անկախությունը,
- մրցակցության գործակալության համար ապահովել պատշաճ իրավական լիազորություններ, ներառյալ տեղում ստուգումներ անցկացնելու իրավունքը:

11) Մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունք, այդ թվում՝

- ապահովել մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ օրենսդրության լրիվ համապատասխանությունը ԳՀՀ-ի պարտավորություններին ու TRIPS պահանջներին, ինչպես նաև ապահովել դրա արդյունավետ իրականացումը,
- ապահովել դատաիրավական համակարգի պատշաճ գործունեությունը, որպեսզի երաշխավորվի արդարադատության հասանելիությունը հեղինակային իրավունք ունեցողների համար, ինչպես նաև ապահովվեն պատժամիջոցների նշանակումը և արդյունավետ կիրառումը,
- կոնսոլիդացնել համապատասխան ինստիտուցիոնալ կառույցները, ինչպես նաև արդյունաբերական իրավունքների, հեղինակային իրավունքի պաշտպանության և կոլեկտիվ միությունների գրասենյակները,
- ընդլայնել համագործակցությունը երրորդ երկրների իշխանությունների և արդյունաբերական միավորումների հետ,
- ավելացնել օրենքի կիրառմանը, այդ թվում՝ դատաիրավական համակարգին, տրամադրվող ռեսուրսները,
- բարելավել Գործընկերության և համագործակցության համաձայնագրով նախատեսված համապատասխան կոնվենցիաների կիրառումը,
- զարգացնել Հայաստանի և ԵՄ օրինապահ մարմինների միջև համագործակցությունը՝ մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարում:

12) Պետական գնումներ, այդ թվում՝

- մշակել կողմերի միջև համաձայնագրերի բաց և մրցունակ բաշխման համար պայմաններ, մասնավորապես՝ մրցույթների մասին հայտարարությունների միջոցով՝ ԳՀՀ 48-րդ հոդվածի համաձայն և շարունակել պետական գնումների համակարգի բարեփոխումները,

- ապահովել պետական գնումների վերաբերյալ օրենսդրության անվերապահ կիրառումը,
 - ապահովել գնումների համակարգի համապատասխանությունը ԵՄ գնումների մասին օրենսդրության և սկզբունքների հետ, մասնավորապես՝ թափանցիկության, տեղեկատվության տրամադրման, իրավական օգնության մատչելիության, պատվիրատուների և գործարարների շրջանակներում իրազեկման և վերապատրաստման միջոցով, ինչպես նաև հնարավորինս սահմանափակել բացառությունների կիրառումը,
 - վերանայել գործող ընթացակարգերը և բարելավել Պետական գնումների գործակալության վարչական կարողությունները,
 - ապահովել Հայաստանում էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարության իրականացումը,
 - միանալ Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ «Պետական գնումների մասին» համաձայնագրին:
- 13) Վիճակագրություն, այդ թվում՝
- ԵՄ ստանդարտներին համապատասխանող վիճակագրական մեթոդների ընդունում և Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության արդիականացում.
 - մշակել և իրականացնել կարճաժամկետ և միջնաժամկետ ռազմավարություն՝ վիճակագրական համապատասխան ոլորտներում եվրոպական ստանդարտներին համապատասխանելու նպատակով, հիմնվելով ԵՄ փորձագետների կողմից Հայաստանի վիճակագրական համակարգի ընդհանուր գնահատման վրա,
 - բարելավել գործարար ռեգիստրի որակը և ծածկույթը,
 - նախապատրաստել և իրականացնել գյուղատնտեսության համատարած հաշվառում՝ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցների համաձայն:

14) Պետական ներքին ֆինանսական վերահսկողություն և հարակից խնդիրներ, Պետական ֆինանսների պատշաճ կառավարում և վերահսկում, այդ թվում՝

- խրախուսել պատշաճ վարչական կարողության զարգացումը՝ ազգային և միջազգային ֆինանսական միջոցների վրա բացառաբար ազդող խաբեությունները և այլ անօրինականությունները կանխելու և դրանց դեմ արդյունավետ պայքարելու համար, այդ թվում՝ բոլոր համապատասխան ազգային միավորները ներառող արդյունավետ կառույցների ստեղծումը,
- բարելավել պետական ֆինանսների կառավարումն ու թափանցիկությունը, մասնավորապես՝ զանձապահության հաշիվների և պետական հատվածի հաշվապահության երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման և պետական ֆինանսների կառավարման, ներառյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունները, ամբողջական տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման միջոցով,
- ապահովել ԵՄ համապատասխան ինստիտուտների և մարմինների հետ արդյունավետ համագործակցությունը՝ ԵՄ ֆինանսական միջոցների կառավարմանը և վերահսկմանն առնչվող դեպքերում տեղում ստուգումներ կատարելու և տեսչության միջոցով:

15) Պետական ներքին ֆինանսական վերահսկողություն, այդ թվում՝

- ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի հետ սերտ համագործակցությամբ ողջ պետական սեկտորի համար ներդրել պետական ներքին ֆինանսական վերահսկողության համակարգ, որը հիմնված կլինի մենեջերական հաշվետվելիության և գործնականում անկախ ներքին աուդիտի սկզբունքների վրա՝ միջազգայնորեն համաձայնեցված չափանիշներին (IFAC, IIA, INTOSAI) և մեթոդաբանություններին համահունչ,

- ապահովել Հայաստանի կառավարության կողմից ընդունված ներքին աուդիտի համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը, որը ներառում է Հայաստանի պետական ոլորտում ներքին աուդիտի զարգացումը՝ միջազգային ստանդարտներին համապատասխան (IIA, INTOSAI, IFAC):

16) Արտաքին աուդիտ, այդ թվում՝ շարունակել ամրապնդել ՀՀ Վերահսկիչ պալատը (անկախություն, կազմակերպչական կարողություն, աուդիտ, մեթոդաբանություն, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ) որպես Հայաստանում աուդիտի բարձրագույն ատյան՝ արտաքին աուդիտի միջազգայնորեն ընդունված և ԵՄ լավագույն փորձի չափանիշներին համապատասխան (INTOSAI չափանիշներ):

17) Ձեռնարկությունների ոլորտում քաղաքականություն, այդ թվում՝

- զարգացնել և ամրապնդել փոքր և միջին ձեռնարկությունները և դրանց միավորումները, ինչպես նաև Եվրոպական համայնքում և Հայաստանում գործող փոքր և միջին ձեռնարկությունների միջև համագործակցությունը՝ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 62-րդ հոդվածի համաձայն,
- աջակցել Հայաստանի ՓՄՁ զարգացմանը՝ համապատասխան օրենսդրական շրջանակ և ենթակառուցվածքներ ստեղծելու միջոցով, ինչպես նախատեսված է Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 62-րդ հոդվածով,
- խթանել տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը ԵՄ ձեռնարկությունների և արդյունաբերական քաղաքականությունների վերաբերյալ,
- Հայաստանը մասնակից դարձնել ԵՄ նախաձեռնություններին՝ մրցակցության խրախուսման նպատակով (օրինակ՝ տեղեկատվության փոխանակման, ցանցերում և

ուսումնասիրություններում մասնակցության, դասընթացների կազմակերպման միջոցով),

- ուսումնասիրել ձեռնարկությունների և արդյունաբերական քաղաքականության շուրջ երկխոսություն սկսելու նպատակահարմարությունը և հնարավոր տարբերակները և այլն:

Ամփոփելով նշենք, որ Գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը կորուշվի համատեղ համաձայնեցված չափանիշների հիման վրա, և Եվրահանձնաժողովը, գլխավոր քարտուղարի (Բարձր ներկայացուցչի) հետ սերտ համագործակցելով, պատշաճ կերպով կանոնավոր ժամանակահատվածներում կներկայացնի Գործողությունների ծրագրի կատարման վերաբերյալ զեկույցներ: Եվրոհանձնաժողովը սերտորեն կհամագործակցի այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Եվրոպայի խորհուրդը, ԵԱՀԿ-ն, ՄԱԿ-ի համապատասխան մարմինները և միջազգային ֆինանսական հաստատությունները: Գործողությունների ծրագրի իրականացման առաջին զեկույցը կկատարվի դրա ընդունումից երկու տարի հետո:

Ամփոփելով, կարելի է նշել, որ ՀՀ արտաքին առևտրի հիմնական բնութագրերը ցույց են տալիս, որ համաշխարհային տնտեսությանն ինտեգրման ճանապարհին հանրապետությունն ունի բավականին ծանրակշիռ հաջողություններ (այդ թվում՝ ԱՀԿ-ին անդամակցության և ՀՀ-ԵՄ հարաբերությունների առումով), իսկ ընտրված ռազմավարությունն ու մարտավարությունը ըստ էության համապատասխանում են դրված խնդիրների լուծմանը և ՀՀ ներուժի օգտագործման փաստացի հնարավորություններին:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

3.1 ՀՀ արտահանման ու ներմուծման դինամիկան և ԱՏԳ զարգացման միտումները անցումային փուլի սկզբում (1993-1995թթ.)

Արտաքին տնտեսական գործունեությունը տնտեսության այն կարևորագույն ոլորտն է, որն ուղղակի կամ անուղղակի ձևով նպաստում է երկրում արտադրության զարգացմանը, դրա տեխնիկական մակարդակի բարձրացմանը, թողարկվող արտադրանքի ծավալների մեծացմանը և դրանով իսկ՝ հասարակական պահանջմունքների բավարարմանը:

Քանի որ անցումային շրջանի սկզբում հանրապետության տնտեսական զարգացումն ուղեկցվում էր ապրանքային և վարկային պակասուրդով, ուստի տնտեսության կայունացման համար այդ շրջանում առաջնահերթ խնդիր էր դարձել կենսականորեն կարևոր ապրանքների (սննդամթերք, դեղորայք, լայն սպառման ապրանքներ, վառելիք, հումք, կիսաֆաբրիկատներ և այլն) և կապիտալի ներմուծումը: Բացի այն, որ ներմուծման սպառողական բնույթը չէր նպաստում հայրենական գիտության և արտադրության առաջընթացին, միաժամանակ պահանջվում էր նաև կարգավորել ներմուծման գործարքների սպառողական ուղղվածությունը և ընդլայնել ներմուծման առավել կարևոր հոսքերը՝ համեմատաբար պակաս կարևորների ծավալների կրճատման հաշվին:

Հանրապետության նյութական արտադրության անխափան գործունեության ցավոտ խնդիրներից մեկը, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս, ռեսուրսաապահովվածության ցածր մակարդակն է: Ակնհայտ է արտադրության էներգատա-

րության, նյութատարության, մետաղատարության մակարդակի առավելագույն իջեցման, ռեսուրսների խնայողաբար օգտագործման, անթափոն արտադրությունների ստեղծման և ներքին արտադրությամբ ներմուծման փոխարինման անհրաժեշտությունը: Մյուս կողմից ՀՀ-ն ընթանում է արտաքին աշխարհի հետ սերտ համագործակցության և համաշխարհային տնտեսությանը սերտաճման ուղիով, որով պայմանավորված կարևորվում է ՀՀ արտաքին առևտրի զարգացման արդի իրավիճակի և դրա տարբեր հայեցակետերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչն էլ հնարավորություն կտա ՀՀ արտաքին տնտեսական կապերի և տնտեսական իրավիճակի վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում կազմել: Ըստ այդմ, նպատակահարմար ենք համարում նախ առանձին ներկայացնել ՀՀ արտաքին առևտրի դինամիկան 1993-95թթ. ժամանակահատվածում՝ ըստ առանձին տարիների, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ շրջանում դեռևս գոյություն չունեին ներկայումս գործող վիճակագրական միասնական դասակարգումները, իսկ վիճակագրական բազան էլ բավականին աղքատիկ էր ու արժանահավատության տեսակետից այնքան էլ «հուսալի» չէր: Բացի այդ, ներկայիս վիճակագրական բազաների հետ այդ ժամանակահատվածի ցուցանիշները համադրելի չեն, ուստի դրանք թույլ չեն տալիս 1993-2007թթ. համար կազմել միասնական դինամիկ շարքեր, ինչն էլ պայմանավորում է ըստ առանձին տարիների ԱՏԳ ցուցանիշների ներկայացման անհրաժեշտությունը, և ընդամենը նախնական պատկերացումներ տալու նպատակ է հետապնդում:

Արտահանում

Այսպես. 1993թ. ՀՀ արտաքին առևտրի ապրանքաշրջանառության ծավալը, ըստ այն ժամանակվա ՀՀ ՎՊՄՎ նախարարության տվյալների, կազմել է 410.4 մլն. դոլար, այդ թվում. արտահանումը՝ 156.2 մլն. դոլար, իսկ ներմուծումը՝ 254.2 մլն. դոլար: Այլ կերպ ասած, արտահանումը կազմել է ապրանքաշրջանառության

ընդհանուր ծավալի 38%-ը, իսկ ներմուծումը՝ 62%-ը, իսկ առևտրային հաշվեկշիռը բացասական է եղել 98 մլն. դոլարով:

ՀՀ արտահանման կառուցվածքում առաջատար դերը պատկանում էր քանկարժեք և կիսաքանկարժեք քարերին, քանկարժեք մետաղներին և դրանցից պատրաստված իրերին, որոնց շրջանառության ծավալը կազմել է 41 մլն. դոլար կամ արտահանման ընդհանուր ծավալի 26.2%-ը: Այնուհետև գալիս են մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 16.2%, կոշկեղենը, գլխարկները և հովանոցները՝ 12%, մանածագործական իրերը՝ 9.5%: Պետք է նշել նաև, որ պատրաստի սննդի (6.6%) և տարբեր արդյունաբերական արտադրանքների բաժինը (5.9%) շատ փոքր էր:

Արտահանման աշխարհագրական կառուցվածքում 1993թ. գերակշիռ դերը պատկանում էր ԱՊՀ երկրներին՝ 126.6 մլն. դոլար (կամ արտահանման ընդհանուր ծավալի 81%-ը), այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությանը՝ 37.4%, Թուրքմենստանինը՝ 36.5%, Ուկրաինայինը՝ 2.6%: Համապատասխանաբար՝ շատ ավելի փոքր է եղել ԵՄ երկրների (10.6%), այդ թվում՝ Բելգիայի (9.5%) և Իրանի (3.5%) մասնաբաժինը:

1994թ. ՀՀ արտաքին առևտրի ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 609.3 մլն. դոլար, այսինքն՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ ավելացել է 48.5%-ով: Արտահանման ծավալը եղել է 215.5 մլն. դոլար, իսկ ներմուծումը՝ 393.8 մլն. դոլար, որը կազմել է ապրանքաշրջանառության համապատասխանաբար՝ 38%-ը և 54.6%-ը: Առևտրային հաշվեկշիռը բացասական էր 178.3 մլն. դոլարով՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 1.8 անգամ:

Արտահանման կառուցվածքում նախկինի նման գերակշռում էին քանկարժեք և կիսաքանկարժեք քարերը, քանկարժեք մետաղներն ու դրանցից պատրաստված իրերը՝ 33.5%, որոնք նախորդ տարվա համեմատ դրսևորել են 76% աճի միտում: Մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների ար-

տահանման ծավալներն ավելացել են 22.1%-ով և արդյունքում կազմել 30.9 մլն. դոլար (արտահանման ընդհանուր ծավալի 14.3%-ը): Հանքահումքային արտադրանքի արտահանումն ավելացել է 7.7 անգամ, կազմելով 17.8 մլն. դոլար (ընդհանուրի 8.3%-ը), իսկ կոշկեղենի, գլխարկների և հովանոցների բաժինը նվազել է 18.2%-ով, հասնելով 15.9 մլն. դոլարի (7.38 %):

Արտահանման աշխարհագրական կառուցվածքում շարունակում էին առաջատար մնալ ԱՊՀ երկրները (73%), որոնց հետ, 1993 թ. համեմատ, արտահանման ծավալն ավելացել է 24.7%-ով: Այստեղ ևս հիմնական գործընկեր երկիրը Ռուսաստանի Դաշնությունն է՝ 39%, այնուհետև Թուրքմենստանը՝ 30% և Ուկրաինան՝ 1.7%: ԵՄ երկրներին արտահանման գծով բաժին է ընկել 16.4% (1993 թ. համեմատ 2.1 անգամ աճել է), այդ թվում. Բելգիային՝ 12%: Իրան արտահանվել է 14.6 մլն. դոլարի արժեքով (6.8%), որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.6 անգամ:

1995 թվականին Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 944.8 մլն. դոլար (1994թ. համեմատ աճելով 55%-ով), այդ թվում. արտահանումը՝ 270.9 մլն. դոլար (26%-ով) և ներմուծումը՝ 673.9 մլն. դոլար (71%-ով): Այսինքն, ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի մեջ արտահանումը կազմել է 28.7% իսկ ներմուծումը՝ 71.3%: Առևտրային հաշվեկշիռը բացասական էր 403 մլն. դոլարով:

Արտահանման կառուցվածքում նորից գերակշռում են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղներն ու դրանցից պատրաստված իրերը՝ 89.6 մլն. դոլար կամ 33% (նախորդ տարվա նկատմամբ 24.1%-ով աճ), այնուհետև մեքենա-սարքավորումները և մեխանիզմները՝ 39.1 մլն. դոլար կամ 14% (26.5%-ով աճ), ոչ թանկարժեք մետաղները և դրանցից իրերը՝ 30.5 մլն. դոլար կամ 11.2% (3.2 անգամ աճ), հանքահումքային արտադրանքը՝ 28.8 մլն. դոլար կամ 10.6% (62%-ով

ան): Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանքի արտահանումն ավելացել է 3.7 անգամ և կազմել 14.5 մլն. դոլար, որը կազմում է արտահանման ծավալի 5.35%-ը:

Դեպի ԱՊՀ երկրներ արտահանման ծավալն աճել է 7.4%-ով: Աճ է արձանագրվել նաև դեպի ԵՄ երկրներ (36.8%-ով) և Իրան՝ 2.4 անգամ:

Հարկ է նշել, որ շուկայական տնտեսության անցման առաջին իսկ տարիներից արտաքին առևտրի ազատական ռեժիմ որդեգրած ՀՀ արտահանման կառուցվածքում քանկարժեք և կիսաքանկարժեք քարերի, քանկարժեք մետաղների ու դրանցից պատրաստված իրերի գերակշռությունը պայմանավորված էր մեր հանրապետությունում քանկարժեք և կիսաքանկարժեք քարերի (մարգարիտ, ալմաստ, օբսիդիան և այլն), ոսկու և այլ քանկարժեք մետաղների, ինչպես նաև դրանցից բարձրորակ արտադրանք թողարկելու համար համապատասխան մասնագետների առկայությամբ:

Հաշվի առնելով ՀՀ աշխարհագրական դիրքը, չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ այդ տարիներին հանրապետության արտահանման կառուցվածքի ձևավորման գործում ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև տրանսպորտային գործունը, քանի որ այդ ապրանքային խմբի ապրանքների շրջանառության տնտեսական արդյունավետությունը հիմնականում պայմանավորված էր գործարքների արժեքում տրանսպորտային ծախսերի ոչ մեծ տեսակարար կշռով: Միջազգային առևտրային պրակտիկայում տրանսպորտային ծախսերը համարվում են տնտեսապես արդարացված, եթե դրանց արժեքը չի գերազանցում գործարքի արժեքի 1%-ը: Առաջնորդվելով այս սկզբունքով, մոտավոր գնահատականները ցույց են տալիս, որ տնտեսվարող սուբյեկտների համար արտահանման գործարքը կարող է տնտեսապես շահավետ հանդիսանալ միայն այն ապրանքատեսակների համար, որոնց արժեքը մեկ տոննայի համար չի գերազանցում 2000 ԱՄՆ դոլարը, իսկ այդ տարի-

ներին ՀՀ-ի արտահանման ապրանքային կառուցվածքը լավագույնս արտացոլում է տվյալ իրողությունը: Այսպես, նույն պատճառով արտահանման ոլորտից գրեթե դուրս էին մնում համաշխարհային և, մասնավորապես՝ ԱՊՀ շուկաներում մրցունակ, ոչ թանկարժեք, բայց փոխադրումների առումով բավականին թանկ հայրենական ապրանքատեսակները՝ շինանյութը (ցեմենտ, պեոլիտ, տուֆ, մարմար և այլն), քիմիական արդյունաբերության արտադրանքը (սինթետիկ կաուչուկ, լատեքս, քիմիական մանրաթելեր), հանքահումքային արտադրանքը (պղնձի, մոլիբդենի խտանյութ), սև մետաղների ջարդոնը և թափոնը (մասնավորապես՝ տաշեղները), սննդի և թեթև արդյունաբերության, ինչպես նաև որոշ էլեկտրատեխնիկական և մեքենաշինական արտադրատեսակները:

Ներմուծում

ՀՀ 1993թ. ներմուծման կառուցվածքում ակնառու է հանքահումքային արտադրանքի մեծ տեսակարար կշիռը, որն էլ զբաղեցնում էր առաջատար դիրքեր՝ 105.1 մլն. դոլար (ներմուծման ընդհանուր ծավալի 41.3%-ը): Այնուհետև նշված շարքը լրացնում են բուսական ծագման արտադրանքը՝ 17.9%, թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը՝ 10.5%, կենդանիներն ու կենդանական ծագման արտադրանքը՝ 9.04%: Պատրաստի սննդամթերքի բաժինը համեմատաբար ավելի փոքր է և կազմում է 6.6%:

Ներմուծման աշխարհագրության կառուցվածքում ևս որոշիչ է ԱՊՀ երկրների դերը՝ 168.2 մլն. դոլար (ընդհանուրի 66.2%-ը), ընդ որում՝ այստեղ աչքի են ընկնում Ռուսաստանի Գ-աշնությունը՝ 31%, Թուրքմենստանը՝ 25% և Վրաստանը՝ 7.6%: ԵՄ երկրների բաժինն այստեղ նույնպես համեստ է՝ 35.6 մլն. դոլար (14%), որի հիմնական մասը պատկանում է Իտալիային՝ 12.2%: Նույն տարում ԱՄՆ-ից ներմուծման ծավալը կազմել է 26.9 մլն. դոլար (10.6%), իսկ Իրանից՝ 15.8 մլն. դոլար (6.2%):

1994թ. ներմուծման կառուցվածքում հիմնական ապրան-

քատեսակները դասակարգվում են հետևյալ կերպ. հանքահումքային արտադրանք՝ 161 մլն. դոլար կամ 40.8% (նախորդ տարվա համեմատ 53.2%-ով աճ), բուսական ծագման արտադրանք՝ 64.3 մլն. դոլար կամ 16.3% (41.3%-ով աճ), կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք՝ 46.1 մլն. դոլար կամ 11.7% (մոտ երկու անգամ աճ) և պատրաստի սննդի արտադրանք՝ 32.5 մլն. դոլար 8.2% (93.4%-ով աճ):

Ներմուծման աշխարհագրության կառուցվածքում ԱՊՀ բաժինը կազմում էր 52.2%: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ, Ռուսաստանի Դաշնությունից ներմուծվող ապրանքների ծավալն աճել է մոտ 44%-ով, և արդյունքում՝ 1994թ. նրա տեսակարար կշիռը ներմուծման ընդհանուր ծավալում կազմում էր 28.5%: Այնուհետև Թուրքմենստանն է՝ 18%, որտեղից ներմուծման ծավալը 1993թ. համեմատությամբ ավելացել է 8.6%-ով: Ինչ վերաբերվում է ԵՄ երկրներին, ապա պետք է նշել, որ այդտեղից ներմուծման ծավալն ավելացել է 4.2%-ով և կազմել 37 մլն. դոլար (9.4%), այդ թվում՝ Ֆրանսիայի բաժինն ավելացել է աննախադեպ՝ մոտ 11.9 անգամ (10.7 մլն. դոլար): ԱՄՆ-ից և Իրանից ներմուծման ծավալները համապատասխանաբար կազմել են 96 մլն. դոլար (3.6 անգամ աճ) և 42.5 մլն. դոլար (2.8 անգամ աճ):

1995թ. հանքահումքային արտադրանքի ներմուծման ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 39.5%-ով և կազմել 224.7 մլն. դոլար (ընդհանուրի 33.3%-ը), բուսական ծագման արտադրանքինը՝ 33%-ով և կազմել 85.6 մլն. դոլար (ընդհանուրի 12.7%-ը), իսկ կենդանի կենդանիների և կենդանական ծագման արտադրանքինը՝ 37.3%-ով և կազմել է 63.3 մլն. դոլար (ընդհանուրի 9.4%-ը): Նախորդ տարվա համեմատ 96.2%-ով աճ է արձանագրվել նաև թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի ներմուծման գծով, որի արդյունքում այս ապրանքատեսակների ներմուծման ծավալը կազմել է 62.4 մլն. դոլար (կամ ներմուծման ընդհանուր ծավալի 9.3%-ը):

Ներմուծման գծով ԱՊՀ բաժինը 1995թ. շարունակել է աճել (նախորդ տարվա համեմատ՝ 62.5%-ով) և կազմել է 334 մլն. դոլար (ընդհանուրի 49.6%-ը), ընդ որում՝ այս աճը բնութագրական է ինչպես Ռուսաստանի Դաշնության (1.2 անգամ), այնպես էլ Թուրքմենիայի (85.8%-ով) և Վրաստանի (3.5 անգամ) համար: Հատկանշական է նաև ԵՄ երկրներից ներմուծման ծավալների 2.4 անգամ ավելացումը, ընդ որում՝ Իտալիայից ներմուծումն ավելացել է 2.5 անգամ, իսկ Բելգիայից՝ 12 անգամ: Նշված աճից անմասն չեն մնացել նաև ԱՄՆ-ը (19.2%-ով) և Իրանը (2.1 անգամ):

1993-1995թթ. ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության, արտահանման ու ներմուծման, առևտրային հաշվեկշռի և մյուս ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ հիմնական եզրահանգումները:

1. Արտահանման ծավալների դինամիկան ուսումնասիրելիս նկատվում է արտահանման նվազման միտում, որը պայմանավորված է հատկապես թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման ծավալների անկմամբ:
2. Տարեցտարի ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքում ծանրության կենտրոնը ԱՊՀ երկրներից տեղափոխվել է ԵՄ երկրներ:
3. Նկատվում է արդյունաբերական արտադրանքի արտահանման որոշակի աճ, չնայած այս միտումը դեռևս չի տարածվում ՀՀ արդյունաբերության ավանդական ճյուղերի վրա:
4. ՀՀ ներմուծման 1993-95թթ. դինամիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել հետևյալ միտումները. աստիճանաբար աճել է ինվեստիցիոն ապրանքների ներմուծման ծավալը, ներմուծման ծավալում նվազել է սպառողական ապրանքների տեսակարար կշիռը, աճի միտում է դրսևորվել համեմատաբար բարձրորակ և թանկարժեք

ապրանքների գծով, սակայն ներմուծման կառուցվածքում դեռևս գերակշիռ բաժինը պատկանում է սպառողական ապրանքներին, և ՀՀ ներկրվել են սպառողական այնպիսի ապրանքներ, որոնց արտադրության համար մեծ ներդրումներ չեն պահանջվում (հրուշակեղեն, բանջարեղենի պահածո, մակարոնեղեն, թռչնի միս և ձու, լվացող միջոցներ, պլաստմասայից իրեր, կոշիկեղեն և այլն):

5. Նշված ժամանակահատվածում առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը պայմանավորված է արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճով, որն իր մեջ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի մեծացման զգալի ներուժ է պարունակում:

3.2 ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման միտումները 1996-2007թթ., ԱՏԳ հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Այս բաժնում Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության հետ առնչվող գործոնների վերլուծության նպատակով օգտագործվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ), ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների պաշտոնական տվյալները, որոնց հիման վրա կազմված աղյուսակները ներկայացված են հավելվածում: Չնայած վերջին 5-6 տարիների ընթացքում վիճակագրական տեղեկատվության որոշակի հարստացմանը և միջազգային ստանդարտներին այդ տեղեկատվության համապատասխանեցմանը, հարկ է նշել, որ պաշտոնական վիճակագրական տվյալների մեջ դեռևս առկա են որոշակի թերություններ: Մասնավորապես, խոսքը գնում է 1997թ. և 2002թ. արտահանման ընդհանուր ծավալի ցուցանիշի և ըստ ապրանքային անվանացանկի արտահանման ցուցանիշների հանրագումարի

միջև գոյություն ունեցող տարբերությունների մասին, ըստ որի՝ 1997թ., ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալներով, արտահանման ընդհանուր ծավալը կազմել է 232.495.4 հազ. դոլար, այն դեպքում, երբ ըստ ապրանքային անվանացանկի (ըստ ապրանքային խմբերի) արտահանման նույնպես պաշտոնական տվյալների հանրագումարը կազմում է 450.180.6 հազ. դոլար, նմանապես՝ 2002թ. ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալներով արտահանման ընդհանուր ծավալը կազմել է 505.159.7 հազ. դոլար, այն դեպքում, երբ ըստ ապրանքային անվանացանկի (ըստ ապրանքային խմբերի) արտահանման տվյալների հանրագումարը կազմում է 665.159.7 հազ. դոլար:

Պաշտոնական մի քանի տարբեր աղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արտահանման ընդհանուր ցուցանիշը նշված տարիների համար բոլոր տեղերում նույնն է, ինչը որոշակի վստահություն է ներշնչում հենց այդ ցուցանիշները որպես հիմք ընդունելու համար: Բացի այդ, նշված տարիների համար ըստ ապրանքային անվանացանկի արտահանման ցուցանիշների հանրագումարի արդյունքում ստացվող արտահանման ընդհանուր ծավալի ցուցանիշների կտրուկ շեղումները ոչ միայն քիչ հավանական են, այլև «չեն տեղավորվում» համապատասխան տարիների տնտեսական աճի ցուցանիշների տրամաբանության մեջ: Հաշվի առնելով այս հանգամանքները, ինչպես նաև արտահանման դինամիկայի արհեստական «գերազնահատման ռիսկից» խուսափելու անհրաժեշտությունը, վերլուծությունների համար մենք հիմք ենք ընդունել արտահանման ընդհանուր ցուցանիշները, համաձայն որի 1997թ. այն կազմել է 232.495.4 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2002թ.՝ 505.159.7 հազ. ԱՄՆ դոլար:

Ինչպես նշվեց, հատկապես վերջին տարիներին զգալիորեն բարելավվել է ԱՏԳ- ոլորտի վիճակագրական բազան, որի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել արտաքին տնտեսական կապերի ինչպես քանակական, այնպես էլ որակական

հիմնական բնութագրերը, որոնք, 1996-2007թթ. ընկած ժամանակահատվածի համար, կայանում են հետևյալում:

1. Արտահանման ծավալները տարեցտարի տատանվել են, ընդ որում՝ կարճաժամկետ հատվածի համար (1-2 տարի) բավականին կտրուկ տեմպերով (տե՛ս աղյուսակ 1): Այսպես, նախորդ տարիների համեմատությամբ, եթե 1997-1998թթ. արտահանման ծավալները համապատասխանաբար անկում են ապրել 19.9% և 5.2%-ով, ապա 1999թ. գրանցվել է 5.1%, իսկ 2000թ.՝ 29.7%-ի աճ: Այնուհետև, տեղի է ունեցել արտահանման աճի տեմպի անկում և կտրուկ տատանումներ, մասնավորապես՝ 2001թ., նախորդ տարիների համեմատ, աճը կազմել է 13.8%, 2002թ.՝ 47.8%, 2003թ.՝ 35.7%, 2004թ.՝ աճի տեմպը կտրուկ ընկել է (կազմելով ընդամենը 5.4%), 2005թ.՝ կտրուկ աճել է (կազմելով 34.7%), որից հետո (2006թ.) նորից կտրուկ ընկել է՝ կազմելով ընդամենը 1.1% և 2007թ. նորից աճել է՝ կազմելով 17% (գումարային արտահայտությամբ 2007թ. արտահանման ծավալը կազմել է 1 մլրդ. 152.3 մլն. դոլար, ինչը զերազանցում է 1996թ. մակարդակը մոտ 4 անգամ):

Գրեթե նույնանման միտում է ձևավորվել նաև ներմուծման գծով (տե՛ս աղյուսակ 2): Մասնավորապես, նախորդ տարիների համեմատությամբ, 1997թ. ներմուծման ծավալներն աճել են 4.3%-ով, հաջորդ երկու տարիներին տեղի է ունեցել ներմուծման աճի տեմպերի և բացարձակ ծավալների անկում, այն է՝ 1998թ. ներմուծման աճը կազմել է ընդամենը 1.1%, իսկ 1999թ., նախորդ տարվա համեմատ, այդ ծավալներն անկում են ապրել 10%-ով՝ կազմելով մոտ 813 մլն. ԱՄՆ դոլար (ինչը մոտ 43 մլն. դոլարով զիջում է նույնիսկ 1996թ. մակարդակին): 2000-2002թթ. ընթացքում ներմուծման դինամիկան ունեցել է կտրուկ տատանումներ՝ ինչպես աճի, այնպես էլ անկման առումով, մասնավորապես, նախորդ տարիների համեմատ, 2000թ. աճը կազմել է 9.1%, 2001թ.՝ անկում է ապրել 0.8%-ով, իսկ 2002թ.՝ նորից կտրուկ աճ է արձանագրվել 12.5%-ով: Սկսած 2002 թվականից ներմուծման

ծավալները, թեև կտրուկ տատանումներով, բայց ունեցել են կայուն աճի միտում. 2003թ.՝ 29.6%-ով, 2004թ.՝ 5.6%-ով, 2005թ.՝ 33.4%-ով, 2006թ.՝ 21.6%-ով և 2007թ.՝ 49.1%-ով (գումարային արտահայտությամբ 2007թ. ներմուծման ծավալը կազմել է 3 մլրդ. 267.8 մլն. դոլար, ինչը գերազանցում է 1996թ. մակարդակը 3.8 անգամ և 2.8 անգամ գերազանցում է 2007թ. արտահանման մակարդակը):

Արտահանման և ներմուծման ընդհանուր ծավալների այս դինամիկաների հիմնական պատճառները բավականին հանրահայտ են (անցումային փուլի դժվարություններ, ՀՀ աշխարհաքաղաքական իրավիճակը, 1988թ. ավերիչ երկրաշարժը և էներգետիկ դժվարությունները, արցախյան պատերազմը, տրանսպորտային հաղորդակցության ուղիների խիստ սահմանափակ հնարավորություններն ու շրջափակումները, տնտեսության ոչ արդյունավետ կառուցվածքը, արժույթային կուրսերի դինամիկաները և այլն), որոնց, կարծում ենք, չարժե անդրադառնալ: Նշենք միայն, որ՝

- արտաքին առևտրի ոլորտը, բացի ՀՀ համար խիստ կարևոր նշանակություն ունենալու հանգամանքից, բավականին զգայուն է համաշխարհային շուկաներում տեղի ունեցող ինչպես դրական, այնպես էլ բացասական փոփոխությունների նկատմամբ (վերջիններիս ազդեցությունը ՀՀ արտաքին կապերի, իսկ դրանից հետո էլ ողջ տնտեսության վրա շատ արագ է տեղի ունենում),

- այս ոլորտը մաս շատ «խոցելի» է արտաքին «շուկերի» առումով, ինչը զգալիորեն նվազեցնում է ՀՀ տնտեսության կարգավորման արդյունավետության մակարդակը և ստիպում է կիրառել կարգավորման հիմնականում ուղղակի և կոշտ մեթոդներ ու մեխանիզմներ,

- տնտեսության ազատականացման և բացության բարձր աստիճանը (որով Հայաստանը համարվում է ԱՊՀ երկրների կազմում առաջատարներից մեկը) էլ ավելի է մեծացնում համաշ-

խարհային շուկաներում կոնյունկտուրայի և մոնետար գործոնների փոփոխությունների արագ ներթափանցման հնարավորություններն ու ռիսկը,

- ԱՏԳ սուբյեկտների կողմից միջնաժամկետ (առավել ևս՝ երկարաժամկետ) կանխատեսումների իրականացումը դառնում է գրեթե անհնարին ոչ միայն տարեցտարի նկատվող կտրուկ տատանումների, այլև համապատասխան տեղեկատվության առկայության և դրա մատչելիության ցածր մակարդակի պատճառով,

- ԱՏԳ սուբյեկտների և ընդհանուր առմամբ ողջ հասարակության շրջանում արտաքին տնտեսական կապերի և դրա հետ կապված մի շարք գործոնների «շարժի» մասին մասնագիտական և պաշտոնական տեսակետների անբավարար ներկայացումը (լուսաբանումը) ստեղծում է անորոշության, իսկ երբեմն էլ խուճապային միջավայր, ինչն էլ, բնականաբար, չի կարող բացասաբար չազդել ԱՏԳ սուբյեկտների գործունեության վրա (դրա վառ օրինակ կարող է ծառայել 2003 թվականի սկզբներից սկսված հայկական դրամի արժևորման հետ կապված խուճապը, երբ շարունակաբար խոսվում էր արտահանման ծավալների կտրուկ անկման, ներմուծման կտրուկ աճի, հայրենական արտադրության խիստ կրճատման և նմանատիպ «չարագուշակ» կանխատեսումների մասին, այն դեպքում, երբ առկա վիճակագրությունը փաստում էր, որ հենց հայկական դրամի արժևորման տարիներին են ձևավորվել և՛ արտահանման և՛ ներմուծման ծավալների բացարձակ ու հարաբերական, այդ թվում՝ նաև կայուն աճի միտումները):

Այս կապակցությամբ առաջարկում ենք.

- ճշգրտել արտաքին տնտեսական գործունեության վերաբերյալ առկա պաշտոնական տվյալները և հրատարակել վիճակագրական հատուկ տարեգիրք (վերջին 10-15 տարվա ընդգրկմամբ), որտեղ, բացի զուտ արտաքին կապերին առնչվող տեղեկատվությունից, անհրաժեշտ է զետեղել նաև հարակից

ուղորտների (ներդրումային միջավայրի, արժուքային քաղաքականության, համաշխարհային գների և այլն) վերաբերյալ վիճակագրությունը,

- պարբերաբար կատարել արտաքին տնտեսական կապերի և արտաքին առևտրաշրջանառության խորը, մասնագիտական վերլուծություններ և ապահովել ինչպես ԱՏԳ սուբյեկտների, այնպես էլ հանրության համար դրանց բավարար մատչելիությունը,

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգում ստեղծել հատուկ պարբերական (ամսագիր), որտեղ ամսական կամ եռամսյակային կտրվածքով կներկայացվեն ոչ միայն արտաքին տնտեսական գործունեության հետ կապված վիճակագրական տվյալներ, այլև համաշխարհային տնտեսության, միջազգային տարբեր շուկաների, տվյալ ժամանակահատվածի համար արդիական գործոնների (էներգակիրների ու հումքատեսակների գների, արժուքային կուրսերի և այլն) փոփոխությունների վերաբերյալ մասնագիտական, այդ թվում նաև պաշտոնական տեսակետներ, կանխատեսումներ և բանավեճեր, ինչպես նաև ԱՏԳ պետական կարգավորման ուղղությամբ պետական քաղաքականության ուղղությունները, մեխանիզմները, մեթոդներն ու առաջիկայում նախատեսվող քայլերը,

- ակտիվացնել զանգվածային էլեկտրոնային միջոցներով նշված տեղեկատվության տարածման գործընթացը՝ հատկապես հանրային հեռուստառադիոընկերության միջոցով, անհրաժեշտության դեպքում ստեղծելով նաև հատուկ հաղորդաշարեր,

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգում ստեղծել խորհրդատվական կենտրոն՝ ԱՏԳ սուբյեկտներին խորհրդատվական ծառայություններ մատուցելու և նրանց միջոցով ներքին շուկայի ազդակներին արագ ծանոթանալու նպատակով:

2. Համեմատական առումով, եթե մինչև 2000 թվականն արտահանման և ներմուծման դինամիկաներն ունեցել են հակա-

ռակ ուղղվածություն (արտահանումն անկում է ապրել, ներմուծումն աճել է), ապա 2000թ. և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալներն ունեցել են նախորդ տարիների համեմատ աննախադեպ աճ (համապատասխանաբար՝ արտահանումն աճել է 29.7%-ով, իսկ ներմուծումը՝ 9.1%-ով): 2001թ. նորից այս դինամիկաները հակառակ ուղղվածություն են ձեռք բերել (արտահանումն աճել է 13.8%-ով, իսկ ներմուծումն անկում է ապրել 0.8%-ով), որից հետո միայն և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալներն ունեցել են կայուն աճի միտում (տե՛ս աղյուսակներ 1 և 2):

Սա նշանակում է, որ ԱՏԳ- ոլորտում քիչ թե շատ կայուն միջավայր և սուբյեկտների կողմից կայուն գործունեություն սկսել է ծավալվել 2002 թվականից, ընդ որում՝ 2002թ., 2003թ. և 2005թ. արտահանման աճի տեմպերը գերազանցել են ներմուծման տեմպերին, իսկ 2004թ., 2006թ. և 2007թ.՝ հակառակը (այսինքն՝ տարածված այն տեսակետը, թե ներմուծումը մշտապես գերազանցել է արտահանմանը, նույնպես իրականությանը չի համապատասխանում): Այսինքն, արտահանման առումով ՀՀ-ն դեռևս չունի իրացման կայուն շուկաներ կամ գոնե «նիշաններ», որոնք թույլ կտան թեկուզ միջնաժամկետ հատվածում ունենալ կայուն աճ ապահովող այնպիսի արտադրություններ, որոնք էլ պետք է հիմք դառնան արտահանման մասնագիտացման համար:

Մյուս կողմից, այս միտումը վկայում է այն մասին, որ Հայաստանում դեռևս չկա տնտեսության որևէ ճյուղ կամ ոլորտ, որը կհանդիսանար արտահանման ոլորտի «լոկոմոտիվը» և իր շուրջը կհամախմբեր արտահանման կողմնորոշում ունեցող և միջազգային շուկաներում մրցունակ, հարակից արտադրություններով զբաղվող ձեռնարկություններին:

Այս կապակցությամբ առաջարկում ենք մշակել և հետևողականորեն իրականացնել «Կլաստերային տնտեսության ձևավորման ազգային ծրագիր»՝ նպատակ ունենալով հնարավորինս բարձրացնել արտահանման ներուժի օգտագործման մակար-

դակը՝ հիմքում դնելով ձեռնարկությունների մրցունակության և արտադրողականության մեծացման, ինչպես նաև ներհանրապետական կոոպերացիայի զարգացման հայեցակետերը:

3. Ըստ ապրանքային խմբերի արտահանման դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

- արտահանման ոլորտում հիմնականում առկա է ցուցանիշների տատանողական վարքագիծ, այսինքն՝ արտահանման վրա ազդող գործոնները կարճ ժամանակում արագ փոփոխվել են, և կայուն միջավայր այդպես էլ չի հաջողվել ձևավորել: Ընդ որում, այս երևույթի վրա ազդել են ոչ միայն, կամ ոչ այնքան ներքին, որքան արտաքին գործոնները (հատկապես վերջին մի քանի տարիներին)՝ կապված բնական գազի գների թանկացման, հարևան Վրաստանի տարածքում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով հաղորդակցության ուղիների ժամանակ առ ժամանակ փակման, Հյուսիսային Կովկասում աշխարհաքաղաքական իրավիճակի սրման և այլ հանգամանքների հետ,

- չկա որևէ ապրանքային խումբ, որի արտահանումն ունենա կայուն դինամիկա, ինչը նույնպես խոսում է արտահանման գծով մասնագիտացման ըստ էության բացակայության մասին, ուստի քիչ թե շատ մասնագիտացման մասին կարելի է խոսել միայն համեմատական կամ հարաբերական առումով,

- ապրանքային 8 խմբերի գծով, չնայած առկա տատանողականությանը, վերջին 2-3 տարիներին (2005-2007թթ.) նկատվում է աճի միտումի որոշ կայունացում, մասնավորապես՝ խոսքը գնում է բուսական ծագման արտադրանքի, հանքահումքային մթերքների, քիմիական արտադրության ապրանքների, քարից, գիպսից և ցեմենտից պատրաստված իրերի, տրանսպորտային միջոցների, սարքերի և ապարատների, արվեստի ստեղծագործությունների և հնաձև իրերի մասին, որոնց գծով արտահանման ծավալները նշված ժամանակահատվածում կայուն աճ են արձանագրել՝ 2007թ. դրությամբ միասին կազմելով արտահանման ընդհանուր ծավալի 25.1%-ը կամ 289.8 մլն. դոլար,

- ապրանքային 9 խմբերի գծով (յուղեր և ճարպեր, պատ-րաստի սննդի արտադրանք, պլաստմասա, կաուչուկ և ռետին, կաշի և դրանից իրեր, թուղթ և թղթյա իրեր, թանկարժեք քարեր և մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, մեքե-նաներ և սարքավորումներ, կահույք և խաղալիքներ) արտա-հանման ցուցանիշի վարքագիծը խիստ տատանողական է՝ նույնիսկ ամեն հաջորդ տարվա նկատմամբ: Այս խմբերի արտադրանքների արտահանման ծավալը 2007թ. կազմել է 822.5 մլն. դոլար կամ արտահանման ընդհանուր ծավալի 71.4%-ը, թեև նախորդ տարիներին դրանք ավելի մեծ են եղել (մասնա-վորապես՝ 2006թ. դրանք կազմել են 736.2 մլն. դոլար կամ ընդ-հանուր արտահանման 74.7%-ը, 2005թ.՝ 798.0 մլն. դոլար կամ ընդհանուր արտահանման 81.9%-ը, 2004թ.՝ 275.7 մլն. դոլար կամ ընդհանուր արտահանման 38.1%-ը և այլն): Այսինքն, թեև այս ապրանքային խմբերի մեջ «առյուծի բաժինը» կազմում է թանկարժեք քարեր և մետաղներ ապրանքային խումբը, այդուհանդերձ, սրանք արդյունաբերական արտադրության այն հիմնական արտադրատեսակներն են, որոնց արտահանման խիստ տատանողական վարքագիծը բավականին մտահոգիչ պետք է լինի,

- որոշ չափով կայուն կարելի է համարել 9-րդ խմբի («փայտ և փայտյա իրեր») ապրանքների արտահանման դինա-միկան. մասնավորապես՝ մինչև 2005 թվականն այս խմբի գծով ապրանքների արտահանումն ունեցել է կայուն աճի միտում (կազմելով ավելի քան 3.3 մլն. դոլար), 2005-2006թթ. մի փոքր անկում ապրելով 2007թ. նորից աճել է 85.8%-ով՝ գերազանցելով մինչ այդ եղած լավագույն մակարդակը (2004թ.՝ մոտ 1.8 մլն. դոլար): Սակայն, այս դինամիկան այնքան էլ «ուրախացնող» չի կարելի համարել, քանի որ փայտի և փայտյա իրերի արտա-հանումը չի կարող ՀՀ համար դառնալ մասնագիտացման ուղղություն՝ կապված հումքի սուղ պաշարների, անտառների և բնապահպանական ոչ բարվոք վիճակի, տրանսպորտային փո-

խաղրումների հետ կապված դժվարությունների և այլ հանգամանքների հետ,

- որոշակի կայուն միտում է դրսևորել նաև 9-րդ խմբի (մանածագործական իրեր) ապրանքների արտահանման դինամիկան. այն 1996 թվականից կայուն աճելով (բացառությամբ 2000 թվականի), 2005 թվականից սկսել է կայուն անկում ապրել, թեև մնացել է բավականին բարձր (1996թ. համեմատությամբ) մակարդակի վրա (ավելի քան 4 անգամ գերազանցելով 1996թ. մակարդակը), այսինքն՝ սա նույնպես կարելի է հարաբերական աճ համարել, թեև դա ընդհանուր առմամբ էական նշանակություն չի ստանում, քանի որ 2007թ. դրությամբ մանածագործական իրերի ու փայտի և փայտյա իրերի արտահանման ծավալը միասին վերցրած կազմել է ընդամենը 38.5 մլն. դոլար կամ արտահանման ընդհանուր ծավալի 3.3%-ը, ինչը շատ փոքր տեսակարար կշիռ է և ընդհանուր առմամբ դրական ֆոն չի ձևավորում,

- դեռևս խորհրդային ժամանակներից ՀՀ համար քիչ թե շատ մասնագիտացման ուղղություն հանդիսացող կոշկեղենի (որի ծավալների մեջ ընդգրկված է նաև հովանոցների և գլխարկների արտահանման ծավալը) արտահանման գծով տեղի է ունեցել շարունակական անկում՝ 1996թ. 2 մլն. 67 հազ. դոլարից 2005թ. հասնելով ընդամենը 128.9 հազ. դոլարի (անկումը 16 անգամ), սակայն 2006 - 2007 թթ. սկսել է աստիճանաբար նորից աճել՝ 2006թ. կազմելով 281.9 հազ. դոլար, իսկ 2007թ.՝ 1 մլն. 361.6 հազ. դոլար (ինչը կազմում է 2006թ. մակարդակի մոտ 66.0%-ը): Սա, չնայած սկզբնական շրջանում համապատասխան որակյալ աշխատուժի առկայությանը, հիմնականում պայմանավորված էր արտաքին առևտրի ազատականացմանը զուգընթաց տվյալ ճյուղում ներդրումների գրեթե բացակայությամբ և տեխնոլոգիական հետամնացությամբ: Արդյունքում, կոշկեղենի ներմուծումը, որը 1996թ. մոտ 551 հազ. դոլարով զիջում էր այդ տարվա արտահանման ծավալներին, հետագա

տարիներին մշտապես ավելացել է՝ 2007թ. հասնելով մոտ 12.4 մլն. դոլարի, արտահանման ծավալները գերազանցելով ավելի քան 9 անգամ: Այսինքն, միակ ապրանքային խումբը, որի գծով նախկին խորհրդային տարիներից Հայաստանը «ժառանգել» էր իրացման շուկաներ և քիչ թե շատ մասնագիտացման ուղղություն, հասկանալի պատճառներով շատ արագ անհետացել է:

Ներկայացված միտումները վկայում են, որ անկախության առաջին տարիներին արտաքին շուկաների կորստից հետո բավականին ուշ սկսվեց այդ շուկաների մասնակի վերականգնման գործընթացը՝ կապված ինչպես ՀՀ, այնպես էլ ընդհանուր առմամբ ողջ Անդրկովկասի աշխարհաքաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական մի շարք գործոնների հետ, որոնցից ներկայումս ամենաազդեցիկը կարելի է համարել հաղորդակցության ուղիների սահմանափակ հնարավորությունները: Ուստի, այս կապակցությամբ ՀՀ իշխանությունների առաջիկա գործողությունները բավականին հանրահայտ են (հայ-թուրքական սահմանի բացում, արխազական երկաթուղու վերագործարկում և դրա անխափան գործողության ապահովում, Հայաստան-Իրան երկաթուղու կառուցում, Սև ծովով լաստանավային փոխադրումների հուսալիության ապահովում և այլն): Այդուհանդերձ, այս կապակցությամբ առաջարկում ենք նաև՝

- ձեռք բերել զոնե մեկ լաստանավ և այն շահագործել հնարավորինս ցածր գներով՝ ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող բեռների փոխադրման հուսալիության բարձրացման և բեռնափոխադրումների ինքնարժեքի հնարավորինս նվազեցման նպատակով,
- նախաձեռնել ՀՀ-ի, Իրանի, Վրաստանի և Ռուսաստանի մասնակցությամբ հատուկ կոնսորցիումի (միջազգային ապահովագրական ընկերության) ստեղծման գործընթաց, որը պետք է զբաղվի այդ երկրների արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների ռիսկերի ապահովագրությամբ:

4. Ըստ ապրանքային խմբերի ներմուծման դինամիկայի վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել որոշակի միտումներ և կատարել հետևյալ եզրահանգումները (տե՛ս աղյուսակ 2.1):

- Ներմուծման գծով հիմնական միտումը կայանում է նրանում, որ գլխավորապես (20 ապրանքային խմբերից 13-ի գծով, այն է՝ պատրաստի սննդի արտադրանք, հանքահումքային մթերք, քիմիական արտադրության ապրանքներ, պլաստմասսա, կաուչուկ և ռետին, թուղթ և բղթյա իրեր, մանածագործական իրեր, կոշկեղեն, հովանոցներ և գլխարկ, ոչ քանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, սարքեր և ապարատներ, կահույք և խաղալիքներ, արվեստի ստեղծագործություններ և հնաոճ իրեր), այսինքն՝ հիմնականում արդյունաբերական արտադրության ապրանքների գծով ներմուծման դինամիկան ունեցել է տատանողական բնույթ մինչև 2004-2005թթ., որից հետո սկսել է բավականին արագ տեմպերով աճել: Այս երևույթը, ինչպես կարելի է նկատել, բնորոշ էր նաև արտահանման դինամիկային, ինչը վկայում է, որ համեմատաբար բարենպաստ, կայուն միջավայր (և ըստ այդմ՝ համեմատաբար կայուն միտումներ այս ապրանքային խմբերի գծով) սկսել է ձևավորվել հիմնականում 2004-2005 թվականներից:

- Ապրանքային 1-ին խմբի գծով (կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք), ի տարբերություն մյուս խմբերի, 1996-2002թթ. տեղի է ունեցել կայուն անկում, իսկ 2003 թ.-ից (բացառությամբ 2006թ.) նկատվել է կայուն աճի միտում՝ 2007թ. հասնելով մոտ 62.5 մլն. դոլարի:

- Ապրանքային երկու խմբերի գծով (բուսական ծագման արտադրանք և յուղեր և ճարպեր) կայունության նշաններ չեն գրանցվել, և արձանագրվել է խիստ տատանողական վարքագիծ, չնայած դրանք այն ապրանքատեսակներն են, որոնք գլխավորապես պայմանավորված են գյուղատնտեսության

ճյուղի առանձնահատկություններով (սեզոնայնություն, երաշտ և այլն):

- Ներմուծման գծով նույնպես հետաքրքիր դիտարկելի է արձանագրվել՝ այնպես, ինչպես արտահանման գծով ապրանքային 9-րդ խմբում (փայտ և փայտյա իրեր): Մասնավորապես, փայտի և փայտյա իրերի ներմուծման ծավալներն ունեցել են կայուն աճի միտում, ինչը միանգամայն հասկանալի է (կապված ՀՀ-ում փայտանյութի շատ փոքր ծավալների հետ): Եթե նկատի ունենանք, որ այս ապրանքների գծով արտահանման ծավալները նույնպես զրեթե կայուն աճի միտում են ունեցել, ապա կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում հիմնականում կատարվել է փայտի վերամշակման և պատրաստի արտադրանքի տեսքով (այս ապրանքային խմբում գերակշիռ մասը հենց փայտանյութի ներմուծումն է կազմում) արտահանման աշխատանքներ, և եթե փայտանյութի ներկրման տրանսպորտային խնդիրները լուծվեն, ապա փայտավերամշակումը կարող է դառնալ արտահանվող այն ճյուղերից մեկը, որը կայուն զարգացման որոշակի նախադրյալներ ունի:

- Ապրանքային 13-րդ խմբի (իրեր քարից, գիպսից, ցեմենտից) գծով, թեև նույնպես առկա է տատանողական վարքագիծ, այդուհանդերձ, այն վերաբերում է հիմնականում 1996-2000թթ., ընդ որում՝ ոչ այնքան մեծ չափերով, իսկ 2001թ. սկսած նկատվում է կայուն աճի միտում: Սա, բնականաբար, պայմանավորված է հանրապետությունում շինարարական աշխատանքների շարունակական ավելացման միտումով, ընդ որում՝ ներմուծվող ապրանքատեսակների կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը (վերջին 5-6 տարիներին միջին հաշվով 45-55%-ը բաժին է ընկնում ապակուն և ապակյա իրերին, 35-40%-ը՝ կերամիկական իրերին և մնացած մասը միայն քարից, ցեմենտից և նմանատիպ նյութերից պատրաստված իրերին):

- Ինչ վերաբերում է 14-րդ (թանկարժեք քարեր և մետաղներ) խմբին, ապա ներմուծման տատանողականությունը

դրսևորվել է գլխավորապես անկման միտումների ուժեղացմամբ, մասնավորապես՝ 1996թ. թանկարժեք քարերի և մետաղների ներկրման ծավալը կազմել է մոտ 130 մլն. դոլար, 1997թ.՝ 47.5 մլն. դոլար (նախորդ տարվա համեմատ անկումն ավելի քան 2.7 անգամ), 1998թ.՝ 45.5 մլն. դոլար (-4.2%), 1999թ.՝ 86.7 մլն. դոլար (նախորդ տարվա նկատմամբ աճը 90.5%), 2000թ.՝ 113.2 մլն. դոլար (30.6%), 2001թ.՝ 106.8 մլն. դոլար (-5.7%), 2002թ.՝ 213.5 մլն. դոլար (100%), 2003թ.՝ 333.1 մլն. դոլար (56%), 2004թ.՝ 291.5 մլն. դոլար (-12.5%), 2005թ.՝ 347.6 մլն. դոլար (19.2%), 2006թ.՝ 312.5 մլն. դոլար (-10.1%) և 2007թ.՝ 296.7 մլն. դոլար (-5.1%), ինչը կազմում է մոտավորապես 2003 թվականի մակարդակը: Տվյալ ճյուղի դինամիկան առանձնահատուկ ուշադրության է արժանի, քանի որ 2001 թվականից այս ճյուղը հայտարարվեց որպես տնտեսության գերակա ճյուղերից մեկը և 2000 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված օրենքով թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի իրացումն ազատվեց ավելացված արժեքի հարկից, իսկ 2001 թվականի հուլիսի 26-ին ընդունված օրենքով ԱԱՀ-ից ազատվեց նաև թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատների իրացումը: Այս քայլով ակնկալվում էր, որ Հայաստանի ակնագործության և ոսկերչության ոլորտը, ունենալով անհրաժեշտ որակյալ կադրեր և պոտենցիալ ներդրողներ, կարող է դառնալ նաև արտահանող և տնտեսության մասնագիտացված գերակա ճյուղ: Սակայն, եթե ներմուծման գծով առանձին տարիներին նկատվող ծավալային և արժեքային անկումներն ինչ-որ տեղ բացատրելի կարելի է համարել (կապված հումքի առանձնահատկությունների, միջազգային շուկաներում դրանց գների տատանողականության և այլ հանգամանքների հետ), ապա նույնը չի կարելի ասել պատրաստի արտադրանքի արտահանման առումով՝ առավել ևս, որ 2003 թվականից սկսված ԱՄՆ դոլարի (այնուհետև՝ եվրոյի և ՌԴ- ռուբլու) կայուն արժեզրկման միտումները բավականին նպաստավոր պայմաններ էին ապա-

հովում արտահանման ծավալների ավելացման համար: Մակայն, ապրանքային այս խմբի գծով արտահանման դինամիկան ցույց է տալիս սպասվածին ոչ համարժեք, իսկ առանձին տարիներին էլ միանգամայն հակառակ միտումը (տե՛ս աղյուսակ 1.1): Մասնավորապես, եթե մինչև 2001 թվականը թանկարժեք քարերի և մետաղների արտահանման ծավալները կտրուկ տատանումներ էին ունենում (նախորդ տարիների համեմատ 1997թ. այն աճել է 39.4%-ով, 1998թ.՝ նվազել 3.9%-ով, 1999թ.՝ նորից կտրուկ աճել է 88.2%-ով, իսկ 2000թ. աճը կազմել է 21.6% կամ 121.4 մլն. դոլար), ապա արտոնությունների սահմանումից հետո այդ աճն ապահովվել է միայն հաջորդ երեք տարիների ընթացքում, իսկ հետագայում ոչ միայն դանդաղել է, այլև փոխարինվել է անկման միտումով: Մասնավորապես նախորդ տարիների համեմատությամբ թանկարժեք քարերի և մետաղների արտահանման ծավալները 2001թ. կազմել է ընդամենը 1.1% (կազմելով 122.8 մլն. դոլար), 2002թ.՝ 10.3% (258.3 մլն. դոլար), 2003թ.՝ 35.8% (350.7 մլն. դոլար), իսկ 2004թ. անկում է ապրել 14.7%-ով (հասնելով 299.3 մլն. դոլարի), 2005թ. նորից աճել է 12.4%-ով (թեև արժեքային արտահայտությամբ չի հասել 2003 թվականի մակարդակին և կազմել է 336.3 մլն. դոլար), 2006թ. նորից անկման փուլ է սկսվել, որը կազմել է 10.5% (300.9 մլն. դոլար), իսկ 2007թ. արձանագրվել է բավականին կտրուկ անկում՝ 30.7%-ով (կազմելով ընդամենը 208.7 մլն. դոլար կամ մոտ 50.0 մլն. դոլարով ավելի քիչ քան 2002 թվականի՝ արտոնությունների տրամադրմանը հաջորդող և ըստ էության ամենաբարենպաստ տարվա մակարդակն էր):

Տվյալ միտումն ավելի ցայտուն է արտահայտվում, երբ դիտարկում ենք թանկարժեք քարերի և մետաղների արտահանման տեսակարար կշիռն արտահանման ընդհանուր ծավալում (տե՛ս աղյուսակ 1): Մինչև 2002 թվականն այն, թեև տատանողական բնույթ ուներ, սակայն բավականին մեծ կշիռ էր ձեռք բերել արտահանման կառուցվածքում, մասնավորապես՝ 1996թ.

այս ապրանքային խմբի արտահանման ծավալը կազմում էր ընդհանուր արտահանման 48.3%-ը, 1997թ.՝ 23.7%-ը, 1998թ.՝ 24.1%-ը, 1999թ.՝ 43.1%-ը, 2000թ.՝ 40.4%-ը և 2001թ.՝ 35.9%-ը: Այսինքն, առանց պետության միջամտության այս ապրանքային խմբի արտադրանքի արտահանման ծավալներն արդեն իսկ բավականին մեծ տեսակարար կշիռ էին ձեռք բերել արտահանման ապրանքային կառուցվածքում և իսկապես կարող էին «հավակներ» ՀՀ տնտեսության արտահանելի ճյուղերի առաջատարի, իսկ հետագայում՝ նաև տնտեսության մասնագիտացման ուղղության դերին: Սակայն, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ հարկային արտոնության տրամադրման արդյունքում միայն հաջորդ երկու տարիներին հնարավոր եղավ ընդլայնել քանկարժեք քարերի և մետաղների արտահանման ծավալը, որը 2002թ. և 2003թ. կազմեց ընդհանուր արտահանման միևնույն՝ 51.1%-ը, իսկ 2004 թվականից այս ցուցանիշը սկսեց կտրուկ անկում ապրել՝ այդ տարում կազմելով արտահանման ընդհանուր ծավալի 41.4%-ը, 2005թ.՝ 34.5%-ը, 2006թ.՝ 30.5%-ը և 2007թ.՝ 18.1%-ը, այսինքն՝ ընկավ մինչև ռեկորդային ցածր մակարդակի և մոտ 2.7 անգամ զիջեց նույնիսկ 1996թ. մակարդակին:

Տնտեսության այս ճյուղին տրված հսկայական արտոնությունները, թեև նպաստել են ծավալային առումով և՛ ներմուծման և՛ արտահանման որոշակի ընդլայնմանը, այդուհանդերձ, որպես տնտեսության գերակա ճյուղ, չի դարձել կայուն արտահանող ոլորտ, ավելին՝ 2003թ. հետո, չնայած արժուքային կուրսերի և պետական քաղաքականության բարենպաստ ռեժիմների առկայությանը, սկսել է աստիճանաբար անկում ապրել: Սա նշանակում է, որ հայաստանյան իրականության մեջ լայն արտոնությունների տրամադրումը կարող է նպաստել միայն իրացման շուկաներում սեփական ռեզերվների օգտագործման մակարդակի որոշակի բարձրացմանը, իսկ առավելագույնս՝ հնարավոր քանակի արտահանման ծավալների ապահովմանը,

սակայն կայուն աճ ունենալու համար գլխավոր երաշխիքը մնում է մրցունակության և արտադրողականության ապահովումը:

Այս կապակցությամբ առաջարկում ենք.

- անհրաժեշտ է զարկ տալ կերամիկական իրերի և ապակու արտադրությանը, քանի որ տարբեր ճգնաժամերի հետևանքով այս ապրանքների ներմուծման ծավալները կարող են նվազել, իսկ շինարարության ճյուղը ՀՀ ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում բավականին մեծ տեսակարար կշիռ ունի,

- վերացնել թանկարժեք քարերի և մետաղների իրացման գծով ԱԱՀ-ի արտոնությունները՝ որպես իրեն չարդարացրած քայլ,

- հարկային և մաքսային արտոնություններ սահմանել միայն հայրենական (ներքին կամ դրամային) ներդրումների մասով և չերկարացնել օտարերկրյա ներդրումների հետ կապված շահութահարկի գծով արտոնությունների գործողության ժամկետը (որն ավարտվում է 2009 թվականին) և փորձել հակառակ ուղղությամբ շրջել ՀՀ-ից կապիտալի «փախուստի» միտումը և նպաստել օտարերկրյա ներդրումների տեսքով այդ գումարների Հայաստան վերադառնալու գործընթացին,

- հստակեցնել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ամբողջությամբ վերանայել ներքին շուկայի պաշտպանության մեխանիզմներն ու մեթոդները (համապատասխան փոփոխություններ կատարելով «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որն առ այսօր չի կիրառվել), ինչը հատկապես անհրաժեշտ է արդյունաբերական արտադրության ճյուղերի և ներմուծման փոխարինման ներուժ ունեցող արտադրությունների շահերի պաշտպանության տեսանկյունից, ինչպես նաև այսպիսի սուբյեկտների համար ստեղծել փոքր ներդրումների երաշխավորման հիմնադրամ,

- ներմուծման հիմնական ուղղություններում կամ համապատասխան ապրանքային շուկաներում խստացնել գերիշխող և մենաշնորհային դիրք ունեցող սուբյեկտների նկատ-

մամբ հակամենաշնորհային քաղաքականությունը:

5. ՀՀ արտաքին տնտեսական կապերի առանձնահատկություններից մեկը կայանում է միջնորդավորված առևտրի ծավալների շարունակական աճի մեջ (տե՛ս աղյուսակ 3): «Միջնորդավորված առևտուր» ասելով նկատի ունենք այն երևույթը, երբ ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի ներմուծման ցուցանիշն էականորեն զիջում կամ գերազանցում է ըստ առևտուր անող երկրի հատկանիշի ներմուծման ցուցանիշին: Ընդ որում, եթե առաջին դեպքում (երբ ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի ներմուծման ցուցանիշն էականորեն զիջում է ըստ առևտուր անող երկրի հատկանիշի ներմուծման ցուցանիշին) կարելի է առանձնապես չանհանգստանալ (հատկապես, եթե առկա են համապատասխան երկրների հետ աշխարհագրական «տրամաբանական» կապեր), ապա երկրորդ դեպքում տվյալ երևույթը բավականին մտահոգիչ է ինչպես արտաքին կապերի արդյունավետության մակարդակի, այնպես էլ դրանց կազմակերպման և ներքին շուկայում ներմուծվող ապրանքների գների վրա ազդեցության առումներով:

Մասնավորապես՝

- ԱՊՀ երկրների մասով 2004թ. միջնորդավորված առևտրի ծավալը (ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի ներմուծման ծավալի և ըստ առևտուր անող երկրի հատկանիշի ներմուծման ծավալի տարբերությունը) կազմել է 96.8 մլն. դոլար, 2005թ.՝ 115.1 մլն. դոլար, 2006թ.՝ 124.7 մլն. դոլար և 2007թ.՝ 169.6 մլն. դոլար,
- Եվրամիության (ԵՄ) երկրների մասով՝ 2004թ. այդ տարբերությունը կազմել է -67.0 մլն. դոլար, 2005թ.՝ 1.3 մլն. դոլար, 2006թ.՝ 55.0 մլն. դոլար և 2007թ.՝ 171.4 մլն. դոլար,
- Այլ երկրների հետ՝ 2004թ. տվյալ տարբերությունը կազմել է 29.8 մլն. դոլար, 2005թ.՝ 116.4 մլն. դոլար, 2006թ.՝ 179.6 մլն. դոլար և 2007թ.՝ 341.0 մլն. դոլար:

Այսինքն, առաջին հայացքից ԱՊՀ և ԵՄ երկրների հետ

միջնորդավորված առևտուրը կարելի է բավականին անարդյունավետ համարել, քանի որ ներմուծման աշխարհագրությունը կենտրոնացել է հենց այս տարածաշրջաններում, և միտումն էլ գնալով ուժեղացել է, սակայն պակաս մտահոգիչ չէ նաև այլ երկրների հետ միջնորդավորված առևտրի միտումը (թեև տվյալ դեպքում գործ ունենք նշված առաջին դեպքի հետ), քանի որ այլ երկրների հետ միջնորդավորված առևտրի ծավալները վերջին երեք տարիներին զգալիորեն գերազանցում են թե՛ ԱՊՀ և թե՛ ԵՄ երկրների հետ միջնորդավորված առևտրի ծավալներին (մասնավորապես՝ 2005թ. համապատասխանաբար՝ 1.1%-ով և 89.5 անգամ, 2006թ.՝ 44.0%-ով և 3.3 անգամ, իսկ 2007թ.՝ ավելի քան 2.0 անգամ և մոտ 2.0 անգամ):

Բացի արտաքին առևտրի ոլորտում գործընկեր երկրներ կորցնելուց սա նշանակում է, որ նեղանում են ոչ միայն արտաքին առևտրի աշխարհագրության շրջանակները, այլև ՀՀ համար արտաքին առևտրի միջազգային «հարթակները», արտաքին տնտեսական կապերը գնալով թուլանում են և, բնականաբար, նվազում են նաև այդ երկրներ ապրանքներ արտահանելու հնարավորությունները:

Եթե ԵՄ և այլ երկրների հետ ինչ-որ տեղ այս երևույթը կարելի է հասկանալ կամ որոշակի բացատրություններ գտնել (կապված տարբեր երկրների աշխարհագրական դիրքերի, դրանց հետ ավանդական կապերի բուցակայության, առանձին երկրներում տեխնոլոգիական զարգացման բարձր մակարդակների և այլ հանգամանքների հետ), ապա ԱՊՀ երկրների հետ միջնորդավորված առևտրի մեծ ծավալների առկայությունն ընդունելի չի կարող համարվել, որն առաջին հերթին ազդում է ներմուծվող ապրանքների գների վրա՝ դրանց արհեստական թանկացման և ներմուծող սուբյեկտների շրջանակի նեղացման տեսքով: Նշենք նաև, որ ԵՄ երկրների հետ առևտրի միջնորդավորման տեմպերն ավելի արագ են աճում, որի հետևանքով կորչում են ուղղակի կապերը նաև այդ տարածա-

շրջանի գործընկերների հետ՝ ավելի սրելով արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման խնդրի լուծման անհրաժեշտությունը:

Միջնորդավորված առևտրի ծավալները համեմատաբար մեծ են՝

- ԱՊՀ երկրներից՝ Բելառուսի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Ուկրաինայի և Ուզբեկստանի հետ (մնացածներին կարելի նույնիսկ գործընկեր երկրներ համարել),
- ԵՄ երկրներից՝ Բուլղարիայի, Չեխիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Իտալիայի, Նիդեռլանդների, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Սլովենիայի, Իսպանիայի և Շվեդիայի հետ (որոնք ավել շատ որպես միջազգային առևտրի «հարթակներ» են ծառայում),
- Այլ երկրներից՝ Թուրքիայի, Չինաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի, Կանադայի, Բրազիլիայի, Կորեայի Հանրապետության, Ինդոնեզիայի, Սալվադորի, Թայվանի, Վիետնամի, Հարավ-Աֆրիկյան Հանրապետության, Արգենտինայի, Պակիստանի, Եգիպտոսի, Շրի-Լանկայի, Չիլիի, Կոտ դ'Իվուարի, Նորվեգիայի, Գանայի, Մեքսիկայի, Ֆիլիպինների, Լիբերիայի, Օմանի, Իրաքի և Եթովպիայի հետ:

Նշված երկրներից ամենամեծ ծավալների միջնորդավորված առևտուրն իրականացվում է Ռումինիայի, Չինաստանի և Ճապոնիայի հետ, իսկ Եթովպիայի հետ արտաքին առևտուրն այս իմաստով դասական օրինակ կարելի է համարել. վերջին 4 տարիներին Եթովպիայից Հայաստան որևէ ապրանք չի ներմուծվել, բայց ՀՀ ներմուծվել է եթովպիական արտադրության ապրանքներ. 2004թ.՝ 138.8 հազ. դոլարի, 2005թ.՝ 213.6 հազ. դոլարի, 2006թ.՝ 230.8 հազ. դոլարի և 2007թ.՝ 341.3 հազ. դոլարի չափով:

6. Ինչ վերաբերում է արտահանման աշխարհագրությանը, ապա այս գծով 2006-2007թթ. աճել են և՛ ԱՊՀ և՛ ԵՄ երկրների

հետ առևտրի տեսակարար կշիռները՝ այլ երկրների հաշվին (տե՛ս աղյուսակ 3.1): Մասնավորապես, եթե 2006 թվականին ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքում ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը կազմում էր 21.6%, ԵՄ երկրներինը՝ 48.1%, իսկ այլ երկրներինը՝ 30.4%, ապա 2007թ. ԱՊՀ երկրների տեսակարար կշիռն աճել է 9.1%-ով և կազմել ընդհանուրի 30.7%-ը, ԵՄ երկրներինը՝ 0.8%-ով և կազմել ընդհանուրի 48.9%-ը, իսկ այլ երկրների տեսակարար կշիռը նվազել է 10.0%-ով՝ 30.4%-ից հասնելով 20.4%-ի: Այսինքն, ոչ միայն ներմուծման, այլև արտահանման գծով է տեղի ունենում ՀՀ համար միջազգային շուկաների «նեղացում»՝ դրանք կենտրոնանալով ԱՊՀ և ԵՄ երկրներում, ինչն էլ արտաքին տնտեսական կապերի աշխարհագրության տեսանկյունից նպաստավոր կամ արդյունավետ չի կարելի համարել:

Համեմատական առումով ՀՀ համար որպես հիմնական գործընկեր երկրներ հանդես են գալիս ԵՄ երկրները, հատկապես՝ Գերմանիան, Նիդեռլանդները, Բելգիան, Իտալիան և Իսպանիան, որոնց 2006-2007թթ. բաժին է ընկել արտահանման 44.5% - 41.2%-ը, իսկ ներմուծման տեսանկյունից՝ Ավստրիան, Բելգիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Իտալիան և Մեծ Բրիտանիան, որոնց բաժին է ընկել ներմուծման 25.7% - 22.6%-ը, թեև այս տվյալներից էլ երևում է, որ նշված երկու տարիների ընթացքում դրանք ունեցել են նվազման միտում՝ ԱՊՀ երկրների հետ գործընկերության աճի հաշվին: Այսինքն, ոչ միայն տեղի է ունենում արտաքին առևտրի կենտրոնացում դեպի ԱՊՀ և ԵՄ երկրներ, այլև դրանց ներսում գնալով աճում է ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի կենտրոնացման միտումը: Բնականաբար, սա առաջին հերթին խոսում է միջազգային շուկաներում ՀՀ արտաքին առևտրի սուբյեկտների մրցունակության անկման և երկրի բացարձակ ու համեմատական առավելությունների սահմանափակման մասին, որոնց շտկումը, կարծում ենք, ներկայումս առաջնահերթ խնդիրներից մեկն է:

ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի աշխարհագրության առումով հարկ է նշել, որ այդ երկրներից համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն Ռ-Ղ-ն, Վրաստանը և մասամբ Ուկրաինան, որոնց հետ ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման գծով առկա է տեսակարար կշիռների աճ: Մասնավորապես, 2006-2007թթ. արտահանման գծով Ռ-Ղ-ի տեսակարար կշիռը կազմել է 12.3%-17.4%, Վրաստանինը՝ 5.5%-7.5% և Ուկրաինայինը՝ 2.3%-4.0%, իսկ ներմուծման գծով Ռ-Ղ-ին բաժին է ընկել 16.6%-17.4%-ը, Վրաստանին՝ 3.5%-4.1%-ը և Ուկրաինային՝ 5.0%-5.4%-ը, ինչը ցույց է տալիս, որ արտաքին առևտրի կենտրոնացման միտումը շարունակվել է նաև ԱՊՀ երկրների շրջանակներում:

Այլ երկրներից արտահանման գծով հիմնական գործընկեր երկրներից են հանդիսանում Իսրայելը (որին 2006-2007թթ. բաժին է ընկել արտահանման 8.9%-2.3%-ը), ԱՄՆ-ը (6.6%-4.4%-ը), Շվեյցարիան (7.3%-4.3%-ը) և Իրանը (3.0%-3.3%-ը), իսկ ներմուծման գծով հիմնական գործընկեր երկրներից են Իսրայելը (որին 2006-2007թթ. բաժին է ընկել ներմուծման 4.0%-1.1%-ը), ԱՄՆ-ը (6.2%-6.3%-ը), Միացյալ Արաբական Էմիրությունները (6.6%-9.4%-ը), Իրանը (6.1%-4.7%-ը), Թուրքիան (4.0%-3.8%-ը), Շվեյցարիան (3.9%-2.5%-ը) և Չինաստանը (2.4%-2.6%-ը):

Ինչպես կարելի է նկատել նշված հիմնական գործընկեր երկրների մեծ մասը հենց այն երկրներն են, որոնց հետ միջնորդավորված առևտրի ծավալները բավականին մեծ են: Ուստի, արտաքին առևտրի ոլորտում պահպանելով գործընկերային կապերը, անհրաժեշտ է այդ երկրների (հատկապես Գերմանիայի, Նիդեռլանդների, Բելգիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ռ-Ղ-ի, Վրաստանի, Թուրքիայի, ԱՄԷ-ի և Չինաստանի) շուկաները և դրանց բիզնես-ենթակառուցվածքներն օգտագործել արտաքին առևտրի աշխարհագրության և տարբեր երկրների հետ ուղղակի տնտեսական կապերի շրջանակների ընդլայնման նպատակով:

7. Արտաքին առևտրի զարգացման միտումները և դրա աշխարհագրության փոփոխությունները, բնականաբար, իրենց ազդեցությունն են ունենում ոչ միայն ՀՀ արտաքին առևտրաշրջանառության, այլև ՀՀ առևտրային հաշվեկշռի ցուցանիշների վրա, որոնց հիմնական բնութագրերը 2006-2007թթ. դրությամբ հետևյալն են (տե՛ս աղյուսակ 3.2):

- Վերջին երկու տարում արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է համապատասխանաբար՝ 3.2 մլրդ. դոլար և 4.4 մլրդ. դոլար (նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 40%-ով), որում, սակայն, բավականին մեծ «ավանդ» ունեն մաս արտաքին առևտրում օգտագործվող հիմնական արտարժույթների արժեզրկման տեմպերը:

- Արտաքին առևտրաշրջանառության մեջ ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը 2006թ. կազմել է 28.6%, իսկ ոչ ԱՊՀ երկրների՝ 71.4%-ը, 2007թ. համապատասխանաբար՝ 32.5%-ը և 67.5%-ը: Ոչ ԱՊՀ երկրների կազմում ԵՄ երկրների բաժինը 2006-2007թթ. չի փոփոխվել և կազմել է 38.4%, այսինքն՝ ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության ծավալներն աճել են հիմնականում ի հաշիվ ոչ ԵՄ անդամ և այլ երկրների հետ առևտրաշրջանառության ծավալների կրճատման հաշվին, այսինքն՝ թեև տեղի է ունեցել անմիջականորեն ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալների որոշ կրճատում, սակայն այդ երկրներում պահպանվել և նույնիսկ ընդլայնվել են արտաքին առևտրի միջազգային «հարթակների» շրջանակները:

- Արտաքին առևտրի հաշվեկշիռը 2006թ. կազմել է 1.2 մլրդ. դոլար (արտաքին առևտրաշրջանառության ընդհանուր ծավալի 37.5%-ը), որը 2007թ. աճելով 76.1%-ով՝ հասել է 2.1 մլրդ. դոլարի (արտաքին առևտրաշրջանառության ընդհանուր ծավալի 47.7%-ը), ինչն էլ տեղի է ունեցել ներմուծման առաջանցիկ տեմպի հաշվին:

- ԱՊՀ երկրներից և՛ 2006թ., և՛ 2007թ. Հայաստանն առևտրի հաշվեկշռի դրական սաղրո ունեցել է միայն Վրաստանի

հետ, համապատասխանաբար՝ 19.2 մլն. դոլարի և 40.7 մլն. դոլարի, ինչը, սակայն, կազմում է ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի ընդամենը 1.6%-ը (2006թ.) և 1.9%-ը (2007թ.): ԱՊՀ մյուս բոլոր երկրների հետ ՀՀ-ն ունի արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռ, որի գերակշիռ մասը (2006թ. 15.2%-ը կամ 183 մլն. դոլարը, և 2007թ.՝ 14.1%-ը կամ 300.5 մլն. դոլարը) բաժին է ընկնում ՌԴ-ին, այսինքն՝ ԱՊՀ երկրներից ՀՀ-ի հիմնական առևտրային գործընկերօջը: Համապատասխանաբար, այս երկրի հետ ՀՀ-ն ամենամեծ տեսակարար կշիռ ունի նաև արտաքին առևտրաշրջանառության ծավալի տեսանկյունից, որը 2006թ. կազմել է 13.4% (կամ ավելի քան 425 մլն. դոլար) և 2007թ.՝ 15.9% (կամ 704 մլն. դոլար):

Այս իմաստով հիմնական գործընկեր կարելի է համարել նաև Ղազախստանին, որին բաժին է ընկնում ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության 5.1%-ը (2006թ.) ու 5.6%-ը (2007թ.) և առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդի 12.9%-ը (2006թ.) և 11.0%-ը (2007թ.), ինչպես նաև Ռուսաստանին, որին բաժին է ընկնում ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության 5.8%-ը (2006թ.) և 6.7%-ը (2007թ.), իսկ առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդի համապատասխանաբար՝ 11.7%-ը և 9.7%-ը:

ԱՊՀ մյուս երկրները, ինչպես արտաքին առևտրաշրջանառության, այնպես էլ առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդի առումով, բավականին փոքր տեսակարար կշիռ ունեն, ինչը մեկ անգամ ևս վկայում է ԱՊՀ տարածքում ՀՀ առևտրային տեղաբաշխվածության և արտաքին կապերի ոչ համաչափ բնույթի, կամ տվյալ դեպքում՝ հնարավորությունների անարդյունավետ օգտագործման մասին:

- Ինչ վերաբերում է ԵՄ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառությանը, ապա, եթե 2006-2007թթ. արտաքին առևտրաշրջանառության տեսակարար կշիռը չի փոխվել (38.4%), չնայած այն հանգամանքին, որ նախորդ տարվա

համեմատ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2007թ. աճել է մոտ 45%-ով՝ մոտ 122 մլն. դոլարից հասնելով 170.6 մլն. դոլարի, այդուհանդերձ, առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդը 22.6%-ից (կամ 272.5 մլն. դոլարից) աճել է մինչև 27%-ի (կամ հասել է 572.8 մլն. դոլարի): Այսինքն, ի տարբերություն ԱՊՀ երկրների (որոնց հետ արտաքին առևտրում ՀՀ-ն ունեցել է առևտրաշրջանառության աճ՝ արտահանման աճի հաշվին), ԵՄ երկրների հետ այդ աճը պայմանավորված է եղել ներմուծման հաշվին: Միտում ձևավորելու առումով սա, թերևս, նորմալ կարելի է համարել՝ հաշվի առնելով ԵՄ երկրների տեխնոլոգիական առաջընթաց դիրքը, առավել ևս, որ ԱՊՀ տարածքում նկատվում է ՀՀ «ներկայացվածության» որոշակի աճ:

• ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն (գործընկեր երկրներ են հանդիսանում) Գերմանիան, որին 2006թ. բաժին է ընկել ԵՄ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության 9.2%-ը (կամ 293.4 մլն. դոլար), իսկ 2007թ.՝ 8.8%-ը (391.3 մլն. դոլար), Նիդեռլանդները (համապատասխանաբար՝ 4.4% կամ 138.5 մլն. դոլար և 4.0% կամ 177.2 մլն. դոլար), Իտալիան (համապատասխանաբար՝ 3.6% կամ 115.7 մլն. դոլար և 3.2% կամ 144.1 մլն. դոլար), Բելգիան (համապատասխանաբար՝ 7.2% կամ 228.8 մլն. դոլար և 5.0% կամ 221.6 մլն. դոլար), Ավստրիան (համապատասխանաբար՝ 1.5% կամ 48.7 մլն. դոլար և 2.9% կամ մոտ 129.0 մլն. դոլար), Ֆրանսիան (համապատասխանաբար՝ 2.4% կամ 75.2 մլն. դոլար և 3.6% կամ 159.7 մլն. դոլար), մասամբ նաև Հունաստանը (համապատասխանաբար՝ 1.6% կամ 52.0 մլն. դոլար և 1.0% կամ 46.2 մլն. դոլար) և Իսպանիան (համապատասխանաբար՝ 1.2% կամ 37.2 մլն. դոլար և 0.8% կամ 36.1 մլն. դոլար), ինչն էլ ակնհայտ դարձավ նաև միջնորդավորված առևտրի ծավալների դինամիկայի վերլուծությունից:

• Աղյուսակ 3.2-ի տվյալներից երևում է, որ նախորդ տարվա համեմատությամբ մի խումբ երկրների հետ ՀՀ

արտաքին առևտրաշրջանառությունը կտրուկ արագացել է և ընդլայնվել, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ մոտ ապագայում ՀՀ հիմնական գործընկեր երկրների թիվը Եվրոպայում կարող է զգալիորեն աճել: Մասնավորապես խոսքը վերաբերում է Ավստրիային, որի հետ, նախորդ տարվա համեմատ, 2007թ. արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 2.6 անգամ՝ 48.7 մլն. դոլարից հասնելով 129.0 մլն. դոլարի (ԵՄ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության 1.5%-ից հասնելով 2.9%-ի), Բուլղարիային (որի հետ նույն ժամանակահատվածում արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 3.1 անգամ՝ 42.9 մլն. դոլարից կամ տեսակարար կշռով 1.4%-ից հասնելով 133.1 մլն. դոլարի կամ 3.0%-ի), Ֆինլանդիային (որի հետ արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 2.3 անգամ՝ 8.8 մլն. դոլարից կամ տեսակարար կշռով 0.3%-ից հասնելով 20.1 մլն. դոլարի կամ 0.5%-ի), Կիպրոսին (որի հետ արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 5.5 անգամ՝ 905 հազ. դոլարից հասնելով 4.9 մլն. դոլարի կամ 0.1%-ի) և Չեխիային (որի հետ արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 2.0 անգամ՝ մոտ 9.0 մլն. դոլարից կամ տեսակարար կշռով 0.3%-ից հասնելով 18.3 մլն. դոլարի կամ 0.4%-ի):

Այլ երկրներից, որպես այդպիսին, կարելի է նշել ԱՄՆ-ը (որի հետ, նախորդ տարվա համեմատությամբ, արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 14.7%-ով), Իրանը (աճը կազմել է 25.1%), Թուրքիան (36.7%), Չինաստանը (82.0%) և Ճապոնիան (2.7 անգամ): Իսկ ինչ վերաբերում է Պանամայի հետ այս ցուցանիշի կտրուկ աճին (21.2 անգամ), ապա դա միտում չի կարելի համարել, քանի որ 2006թ. այդ երկրի հետ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է ընդամենը 80.2 հազ. դոլար, որը 2007թ. հասել է 1.7 մլն. դոլարի, այսինքն՝ ընդամենը 1 տարվա պատմություն ունի, և բացի այդ Պանամայում կան օֆշորային գոտիներ և այդ երկրի հետ արտաքին առևտրա-

շրջանառության այս կտրուկ անը կարող է նույնիսկ միանվագ բնույթ կրել:

- ԵՄ երկրներից 2007թ. միայն Նիդեռլանդների հետ է ՀՀ-ն ունեցել առևտրի հաշվեկշռի դրական սալո, որը կազմել է մոտ 135 մլն. դոլար, նախորդ տարվա 115.4 մլն. դոլարի դիմաց, այն դեպքում, երբ 2006թ., բացի այս երկրից, կային այդպիսի ևս երկու երկրներ՝ Գերմանիան և Իսպանիան, որոնց հետ առևտրի հաշվեկշռի դրական սալոն կազմում էր համապատասխանաբար՝ 2.7 մլն. դոլար և 16.3 մլն. դոլար: Թեև այս ելուք երկրների հետ նշված դրական սալոն փոքր տեսակարար կշիռ ունի արտաքին առևտրի ընդհանուր կառուցվածքում, այդուհանդերձ, դա նշանակում է, որ ՀՀ-ն ի վիճակի է արտադրել և արտահանել ԵՄ զարգացած երկրներ որոշակի ապրանքներ, և արդեն իսկ որոշ երկրներում ՀՀ սուբյեկտները գտել են իրացման շուկաներ:

Այլ երկրներից այդպիսի «կարգավիճակ» ունեն Շվեյցարիան, որի հետ առևտրի հաշվեկշռի դրական սալոն 2006թ. կազմել է մոտ 53.0 մլն. դոլար, իսկ 2007թ.՝ 27.0 մլն. դոլար, նվազելով 51.0%-ով:

Այս կապակցությամբ առաջարկում ենք՝

- արտաքին տնտեսական քաղաքականության ոլորտում առաջնային խնդիր դարձնել արտահանման և ներմուծման, ինչպես նաև արտաքին տնտեսական կապերի կազմակերպման արդյունավետության բարձրացման խնդիրը,

- այդ խնդրի լուծումը սկսել ՀՀ-ի, Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի միջև ուղղակի և անուղղակի ինտեգրացիոն կապերի համակարգման ու սերտացման գործընթացով, մասնավորապես՝ ակտիվացնել սահմանային առևտուրն այդ երկրների միջև, դրա համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ, օրինակ՝ Վրաստանի տարածքում,

- տարածաշրջանային տնտեսական ծրագրերի իրականացման, տարբեր կոնվենցիաների ստորագրման դեպքերում անհրաժեշտ է բացառել խտրական պայմանների կամ վերա-

պահումների առաջադրումն առանձին երկրների կողմից, ինչը հանգեցնում է մասնակից կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտմանը: Այս հարցում, կարծում ենք, շահագրգիռ պետք է լինեն ոչ միայն նշված երկրները, այլև առաջին հերթին միջազգային և եվրոպական ինստիտուտները,

- տարածաշրջանային տնտեսական նոր ծրագրերի մշակմանը զուգահեռ, հաշվի առնելով քաղաքական ներկայիս սահմանափակումները, Անդրկովկասի երկրներում նպատակահարմար կլինի իրականացնել նաև առանձին ծրագրեր՝ որոշակիորեն «հարթեցնելով» երեք երկրների տնտեսական հնարավորությունները: Սա նշանակում է նաև դիֆերենցված մոտեցում ցուցաբերել առանձին երկրներում զարգացման ծրագրերի ֆինանսավորման և վարկավորման գործընթացում՝ ապագայում տարածաշրջանային ինտեգրացիան իրական հիմքերի վրա դնելու նպատակով,

- փորձել անուղակի ձևով ակտիվացնել Անդրկովկասի երկրների և դրանց հարևանների տնտեսական կապերը՝ հաշվի առնելով այդ երկրների արտաքին տնտեսական գործունեության աշխարհագրության ընդհանուր կողմերը: Մասնավորապես կան երկրներ, որոնք առանձին-առանձին հանդիսանում են Անդրկովկասի երեք հանրապետությունների արտաքին տնտեսական հիմնական գործընկերները, օրինակ՝ Ռուսաստանը և Ուկրաինան՝ ԱՊՀ-ում, Ֆրանսիան, Գերմանիան և Մեծ Բրիտանիան՝ Արևմտյան Եվրոպայում, Իսրայելը և Սիրիան՝ Միջին Արևելքում, ինչպես նաև Իրանը՝ Հարավային Ասիայում: Նշված երկրները, իհարկե, միջազգային կառույցների և Անդրկովկասի երեք երկրների առևտրային ներկայացուցիչների օժանդակությամբ, կարելի է փորձել վերածել ինտեգրացիոն կենտրոնների՝ հիմնվելով այդ տարածաշրջանների երկրների տնտեսական ընդհանուր շահերի վրա,

- զգալիորեն ակտիվացնել բոլոր երկրներում գործող դեսպանատների գործունեությունն արտաքին տնտեսական

կապերի օժանդակության և նոր կապերի ձևավորման ուղղությամբ՝ կազմակերպելով համապատասխան երկրների և ՀՀ ԱՏԳ սուբյեկտների մասնակցությամբ սեմինարներ, բիզնես-ֆորումներ, ցուցահանդեսներ և այլն,

- ձևավորել տեղեկատվական բազաներ այն երկրների տնտեսությունների վերաբերյալ, որոնցում արտադրված ապրանքները ՀՀ ներմուծվում են այլ երկրներից և ապահովել ԱՏԳ սուբյեկտների համար այդ տեղեկատվության մատչելիությունը:

8. ՀՀ արտահանման ծավալների և դինամիկայի վրա որոշակի ազդեցություն է թողնում նաև հանրապետության տնտեսական ներուժի օգտագործման մակարդակը և տնտեսության ներքին կառուցվածքը, որոնք էլ արտացոլվում են ՀՀ արտաքին առևտրի տարածքային բաշխվածության կառուցվածքում (տես աղյուսակ 3.3):

- ՀՀ արտաքին առևտրի մարզային կառուցվածքը ցույց է տալիս, որ ներկայումս (2006-2007թթ.) արտաքին տնտեսական կապերը խիստ անհամաչափ են տեղաբաշխված, ինչը բխում է առաջին հերթին ՀՀ տարածքային զարգացման անհամաչափություններից: Այսպես, 2006թ. արտահանման ծավալների գերակշիռ մասը՝ 49.6%-ը կամ 488.7 մլն. դոլարը բաժին է ընկել Երևան քաղաքում գրանցված կազմակերպություններին, որը 2007թ. էլ ավելի է մեծացել՝ կազմելով 57.6% կամ 649.7 մլն. դոլար:

- Բացի Երևանից, համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Կոտայքի մարզը, 2006թ. 252.4 մլն. դոլար (կամ արտահանման ընդհանուր ծավալի 25.6%-ը), որը 2007թ. կտրուկ անկում է ապրել՝ կազմելով 181.3 մլն. դոլար (16.1%) և Սյունիքի մարզը՝ համապատասխանաբար՝ 104.0 մլն. դոլար (10.6%) և 118.6 մլն. դոլար (10.5%): Եթե Կոտայքի մարզի ցուցանիշը պայմանավորված է Երևանին մոտ գտնվելու հանգամանքով և վերջին 3-4 տարիներին որոշ ձեռնարկությունների վերագործարկմամբ, ապա Սյունիքի մարզի կայուն ցուցանիշը գլխա-

վորապես պայմանավորված է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությամբ: Վերջին գործունի շնորհիվ որոշակիորեն բարձր է նաև Լոռու մարզի ցուցանիշը (կապված Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատի, Ախթալայի լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի և հարակից տարածքների հանքավայրերի շահագործման հետ), ինչը 2006թ. կազմել է 77.0 մլն. դոլար (արտահանման 7.8%-ը), իսկ 2007թ.՝ 77.3 մլն. դոլար (6.9%-ը):

- Այս իմաստով որոշ չափով աճել է Արարատի մարզի տեսակարար կշիռը՝ կապված գյուղմթերքների և պահածոների արտահանման ծավալների ավելացման հետ, մասնավորապես՝ 2006թ. 38.6 մլն. դոլարից (3.9%) 2007թ. հասնելով 54.5 մլն. դոլարի (4.8%): Նույն միտումը, թեև ավելի համեստ ծավալներով, բնորոշ է նաև Արմավիրի մարզին, որին 2006թ. բաժին է ընկել արտահանման 1.0%-ը (9.5 մլն. դոլար), իսկ 2007թ. այն աճել է մինչև 2.1%-ի (23.4 մլն. դոլար):

- ՀՀ մյուս մարզերում գրանցված կազմակերպություններին շատ փոքր մաս է բաժին ընկնում, ինչը մեկ անգամ ևս վկայում է տարածքային զարգացման անհամաչափությունների, բիզնես-ենթակառուցվածքների և բիզնես-ծառայությունների անհամաչափ բաշխվածության, Երևանում դրանց կենտրոնացվածության մասին:

- Ներմուծման մարզային կառուցվածքը նույնպես անհամաչափ է, ընդ որում՝ նշված երևույթներն այս իմաստով ավելի ընդգծված բնույթ ունեն (կապված մաքսազերծման և տրանսպորտային սահմանափակումների հետ): Այսպես. ներմուծման «առյուծի բաժինը», բնականաբար, բաժին է ընկնում Երևան քաղաքին. 2006թ.՝ 1.5 մլրդ. դոլար (կամ ներմուծման ընդհանուր ծավալի 72.1%-ը), իսկ 2007թ.՝ 2.4 մլրդ. դոլար (79.2%-ը): Համեմատաբար մեծ են նորից Կոտայքի մարզի (2006թ. 12.9% կամ 271.3 մլն. դոլար և 2007թ. 7.3% կամ 224.2 մլն. դոլար) և Սյունիքի մարզի (2006թ. 4.8% կամ 100.0 մլն. դոլար և 2007թ. 4.4% կամ 135.5 մլն. դոլար) ցուցանիշները, իսկ մյուս մարզերի

տեսակարար կշիռները կայուն են, ինչը նշանակում է, որ դրանք ներմուծման մարզային կառուցվածքի ձևավորման առումով էական նշանակություն չունեն:

ՀՀ տարածքային զարգացման համաչափության ապահովման ուղղությամբ ՀՀ կառավարության ռազմավարական մոտեցումը, որն արտացոլված է կառավարության գործունեության ծրագրում, միանգամայն ընդունելի է, սակայն, կարծում ենք, համապատասխան (ինչպես իրագործվող, այնպես էլ նախատեսվող) ծրագրերում նպատակահարմար կլինի առանձնացնել հատուկ բաժին՝ ՀՀ տարածաշրջանների արտահանման ներուժի ռացիոնալ օգտագործման խնդիրների լուծման համատեքստում, ինչպես նաև իրականացնել հատուկ հետազոտություններ՝ այդ ներուժի բացահայտման ու գնահատման մեթոդական և գործնական հիմքերը մշակելու նպատակով:

9. Ինչպես նշվեց, ըստ երկրների արտաքին տնտեսական կապերի կենտրոնացման միտումն ուղղված է դեպի ԱՊՀ երկրների շուկաներ, և այս առումով կարևոր է նաև թե հիմնականում ի՞նչ ապրանքատեսակներ են արտահանվում այս շուկաներ, և ի՞նչ է ներմուծվում այդ շուկաներից (տե՛ս աղյուսակ 4): Մասնավորապես, 2007թ. դրությամբ՝

- դեպի ԱՊՀ երկրներ արտահանման մեծ մասը կազմում են՝ ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների ու քացախ (ԱՊՀ երկրներ արտահանման 33.7%-ը կամ մոտ 120.0 մլն. դոլար), աղ, ծծումբ, հող և քար, սվադման նյութեր, կրաքար և ցեմենտ (9.0%-ը կամ 32.2 մլն. դոլար), բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (9.0%-ը կամ 31.8 մլն. դոլար), վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ (5.5%-ը կամ 19.6 մլն. դոլար), սև մետաղներ (5.0%-ը կամ 17.8 մլն. դոլար), ապակի և դրանից իրեր (4.8%-ը կամ 17.1 մլն. դոլար), սուրճ, թեյ, մատե և այլ համեմունքներ (4.1%-ը կամ 14.5 մլն. դոլար), էլեկտրական մեքե-

նաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր (3.7%-ը կամ 13.2 մլն. դոլար), միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր (3.5%-ը կամ 12.5 մլն. դոլար), կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր (2.5%-ը կամ 8.8 մլն. դոլար), քանցարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի վերամշակումից մթերք (2.4%-ը կամ 8.7 մլն. դոլար), պլաստմասսա և դրանից իրեր (1.9%-ը կամ 6.8 մլն. դոլար), օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ (1.5%-ը կամ 5.3 մլն. դոլար),

